STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

Armenian

Կալիֆորնիայի
վարորդի ձեռնարկ



Այս ձեռնարկը հասանելի է
dmv.ca.gov-ում:

Gavin Newsom - նահանգապետ
Կալիֆորնիա նահանգ

Toks Omishakin - տնտեսվար
Կալիֆորնիա նահանգի տրանսպորտային գործակալություն

Steve Gordon - տնօրեն
Կալիֆորնիայի ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների վարչություն

Մենք գիտենք, որ Ձեր ժամանակն արժեքավոր է

GO ONLINE
dmv.ca.gov/online

- Երկարաձգեք վարորդական վկայականի և տրանսպորտային միջոցների գրանցման ժամկետները
- Փոխարինեք կպչուն պիտակը կամ գրանցումը
- Փոխեք հասցեն
- Պահանջեք վարորդական պատմությունը
- Պահանջել մեքենայի գրառումը
- Եվ ավելին

STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

Սիրելի՛ կալիֆոռնիացի բարեկամ,

Մեր փողոցներից, ճանապարհներից և մայրուղիներից բոլոր օգտվողները պետք է հետևեն և հասկանան ճանապարհային երթևեկության կանոնները: Մեքենա, մոտոցիկլետ, առևտրային փոխադրամիջոց կամ հեծանիվ վարելիս կարևոր է, որ հետևենք ճանապարհն անվտանգ և պատասխանատու կերպով կիսելու համար անհրաժեշտ կանոններին:

Կալիֆորնիայի վարորդի ձեռնարկը հասանելի է իրը լեզուներով և արժեքավոր տեղեկություն է տրամադրում Կալիֆորնիայի այն բնակիչներին, որոնք առաջին անգամ են ստանում վարորդական իրավունք, կամ այն փորձառու վարորդներին, որոնք ցանկանում են արդիացնել երթևեկության կանոնների վերաբերյալ իրենց գիտելիքները:

Վարորդական իրավունքը հնարավորություն է տալիս հասնել կարևոր ծառայություններին, հասնել հանգստի սիրելի վայր, ստանալ կրթություն, այցելել սիրելիներին և ավելին՝ այդ ամենը հաջողությամբ հասցնելով կյանքի լավագույն տարիներին: Այն նաև հնարավորություն է տալիս բեռնատարների վարորդներին տեղափոխել ապրանքներ և ծառայություններ՝ մեր տնտեսության անին նպաստելու համար:

Վարորդական իրավունքի համար դիմելը կարող է նախածեռնվել տնային պայմաններից՝ այցելելով DMV կայքը՝ **dmv.ca.gov**: Վարչության ընդլայնվող առցանց ծառայությունների շնորհիվ՝ DMV գործարքների մեծ մասը կարող է կատարվել այս կայքում: Այս գործարքներից որոշները ներառում են վարորդական իրավունքի ժամկետի երկարաձգում, փոխադրամիջոցի գրանցում և այլն: DMV-ն արդիականացրել է իր հաճախորդների հետ փոխգործակցությունը՝ դարձնելով Կալիֆորնիայի բնակիչների թվային փորձառությունն ավելի հեշտ, արագ և հարմարավետ: Նախ փորձեք առցանց, քանի որ այն կարող է խնայել Ձեր ժամանակը:

Հիշեք, որ վարելն առավելություն է, սակայն ամենից առավել առաջնահերթ է անվտանգությունը: Միշտ կապեք ամրագոտիները, հետևեք երթևեկության կանոններին, ուշադրություն դարձրեք մյուս վարորդներին, հեծանվորդներին և հետիոտներին և մի կողմ դրեք բջջային հեռախոսը ղեկը կառավարելիս: Մի՛ վարեք փոխադրամիջոց, մոտոցիկլետ կամ հեծանիվ մտացիր կամ հարբած վիճակում. դա կարող է կյանքի և մահվան առջև կանգնեցնել:

Մաղթում եմ Ձեզ անվտանգ ուղևորություն՝

Toks Omishakin

Կալիֆոռնիա նահանգի տրանսպորտային գործակալության քարտուղար՝

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

© Copyright, Department of Motor Vehicles 2025

Այս հրատարակությունը լիցենզավորված է Creative Commons «Հեղինակության նշումով՝ ոչ առևտրային» միջազգային լիցենզիայով (*Creative Commons Attribution- Non Commercial 4.0 International License*, **CC BY-NC 4.0**): Դուք ազատ եք պատճենել, տարածել և հարմարեցնել նյութը ոչ առևտրային կրթական նպատակներով, բանի դեռ նշում եք համապատասխան հղում Կալիֆորնիայի ավտոտրանսպորտային միջոցների վարչության մասին: Առևտրային նպատակով օգտագործումն արգելվում է առանց նախնական գրավոր թույլտվության:

Հեղինակությունը պետք է նշվի հետևյալ կերպ՝ «*California Driver's Handbook, California Department of Motor Vehicles, licensed under* CC BY-NC 4.0»:

Հրաժարում Պատասխանատվությունից

Սույն ձեռնարկը Կալիֆոռնիայի տրանսպորտային օրենսգրքի (*Vehicle Code*) օրենքների համառոտ ամփոփումն է՝ **leginfo.legislature.ca.gov**: DMV-ն, իրավապահ մարմինները և դատարանները հետևում են VC-ի դրույթներին:

Կապվել մեզ հետ

Այս վարորդական ձեռնարկին վերաբերող մեկնաբանությունները կամ առաջարկները կարող եք ուղարկել **dmv.ca.gov/customerservice**-ին:

TABLE OF CONTENTS

Բաժին 1. Կալիֆոռնիայի վարորդական իրավունք 1

Բաժին 2. Ուսուցման թույլտվության և վարորդական իրավունքի վկայականի ստացում 2

Բաժին 3. Քննության գործընթացը 5

Բաժին 4. Ձեր վարորդական իրավունքի փոփոխումը, փոխարինումը և երկարաձգումը 8

Բաժին 5. Մեքենավարման ներածություն 9

Բաժին 6. Ճանապարհներով երթևեկում 13

Բաժին 7. Ճանապարհային երթևեկության օրենքները եւ կանոնները.. 33

Բաժին 8. Անվտանգ երթևեկություն 57

Բաժին 9. Ալկոհոլ և թմրանյութեր 72

Բաժին 10. Ֆիզիկական պատասխանատվություն, ապահովագրության պահանջներ և ավտոպատահարներ .. 76

Բաժին 11. Տրանսպորտային միջոցի հաշվառման պահանջները 79

Բաժին 12. Վարորդի անվտանգություն 80

Բաժին 13. Տարեցները և երթևեկությունը 82

Բաժին 14. Բառարան 84

Կապ հաստատեք մեզ հետ սոցիալական ցանցերով: @CA_DMV #CADMV

DMV ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռքի տակ ունեցեք վարորդական իրավունքի կամ ID քարտի համարը, տրանսպորտային միջոցի համարանիշը և/կամ տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN):

Առցանց ծառայություններ

Տրանսպորտային միջոցների հաշվառման երկարաձգում **dmv.ca.gov/vrservices**-ում

Վարորդական իրավունքի երկարաձգում **dmv.ca.gov/dlservices**-ում

Գրասենյակ այցելության նշանակում **dmv.ca.gov/make-an-appointment**-ում

Այցելեք **dmv.ca.gov/online** ՝բազմաթիվ այլ առցանց ծառայություններ գտնելու համար:

Տերմինալային ծառայություններ

Տերմինալային ծառայությունները և նրանց գտնվելու վայրերը գտնելու համար այցելեք **dmv.ca.gov/kiosks**

Հեռախոսային ծառայություններ

Զանգահարեք 1-800-777-0133:

Սովորական աշխատանքային ժամերին՝

- Խոսեք DMV-ի ներկայացուցչի հետ:

Ավտոմատացված 24/7 հեռախոսային ծառայություններ

- Երկարաձգեք տրանսպորտային միջոցի հաշվառման ժամկետը:
- Պայմանավորվեք DMV-ի գրասենյակ այցելելու համար:

Խուլ, թույլ լսողություն կամ խոսքի խանգարումներ ունեցող անհատներն աջակցության համար կարող են զանգահարել 1-800-368-4327 հեռախոսահամարին:

ԲԱԺԻՆ 1. Կալիֆոռնիայի վարորդական իրավունք

Կալիֆոռնիայի վարորդական իրավունքը Ձեզ թույլ է տալիս երթևեկել հանրային ճանապարհներով:

Նախքան Կալիֆոռնիայում վարորդական իրավունք ստանալը՝ Ձեզնից պահանջվում է անցնել գիտելիքների ստուգման և գործնական վարման թեստեր՝ հիմնված այս ձեռնարկի տեղեկատվության վրա:

Յուրաքանչյուր ոք, ով վարում է որևէ տրանսպորտային միջոց, պետք է ունենա դրան համապատասխան վարորդական իրավունք: Ամենապահանջվածը C կարգի վարորդական իրավունքն է: Առևտրային տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլետներ և այլ տրանսպորտային միջոցներ շահագործելու համար Դուք պետք է ունենաք այլ կարգի վարորդական իրավունք:

C կարգում ընդգրկված տրանսպորտային միջոցների մասին տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/dl**.

ՔԱՐՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

REAL ID վարորդական վկայականներ

2025 թ. մայիսից սկսած Ձեր վարորդական իրավունքը կամ ID քարտը պետք է համատեղելի լինեն IREAL ID-ի հետ, եթե այն օգտագործում եք հետևյալի համար՝

- Նստելու ներքին չվերթի ինքնաթիռ:
- Մուտք գործելու ռազմաբազաներ:
- Մուտք գործելու ֆեդերալ հաստատություններ:

Այցելեք **dmv.ca.gov/realid** REAL ID-ի համար դիմելու վերաբերյալ ավելին իմանալու համար:

Վարորդական վկայականներ՝ փաստաթուղթ չունեցող բնակիչների համար

Կալիֆոռնիան առաջարկում է վարորդական վկայականներ բոլոր բնակիչների համար՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/dl**:

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Տեղեկությունների համար այցելեք **donateLIFEcalifornia.org**:

Վետերան

Այցելեք **dmv.ca.gov/veterans** վետերան նշանակվելու պահանջների և առավելությունների մասին ավելին իմանալու համար:

ID քարտեր

ID քարտերը տրվում են նույնականացման նպատակով՝ ցանկացած տարիքի իրավասու անձանց: Նրանք Ձեզ չեն թույլատրում տրանսպորտային միջոցներ վարել: ID ստանալու համար պետք է ներկայացնեք Ձեր անձը հաստատող փաստաթուղթ, կացության փաստաթղթեր և սոցիալական ապահովության համարը:

Այցելեք **dmv.ca.gov/id-cards** ID քարտի դիմում լրացնելու, ընթացիկ ընդունելի փաստաթղթերի և իջեցված վճարով, անվճար կամ բարձր ստատուս ունեցող ID քարտերի մասին տեղեկատվություն ստանալու համար:

ԲԱԺԻՆ 2. Ուսուցման թույլտվության և վարորդական իրավունքի վկայականի ստացում

Եթե չունեք վարորդական իրավունք Կալիֆոռնիայից կամ մեկ այլ նահանգից, պետք է դիմեք ուսուցման թույլտվության համար՝ նախքան գործնական (*behind-the-wheel*) թեստը հանձնելը Ձեր վարորդական իրավունքը ստանալու համար:

Ի՞ՆՉ Է ՁԵԶ ՀԱՐԿԱՎՈՐ

Ուսուցման թույլտվության կամ վարորդական իրավունքի ձեռքբերման համար դիմելիս Դուք պետք է տրամադրեք.

- Ինքնության ապացույց, որը կապացուցի, թե ով եք Դուք:
- Կացության երկու ապացույց, որոնք ապացուցում են, որ Դուք ապրում եք Կալիֆոռնիայում: Հնարավոր է գործեն բացառություններ:
- Իրավական լրիվ անվամբ փաստաթուղթ, որը կհաստատի Ձեր ներկայիս անունը, եթե Ձեր անձը հաստատող փաստաթղթի և դիմումի մեջ եղած անունները չեն համընկնում:
- Սոցիալական ապահովության համարը. հնարավոր է գործեն բացառություններ:

REAL ID-ի պահանջների, ընթացիկ ընդունելի փաստաթղթերի և իրավասության մասին տեղեկանալու համար այցելեք **dmv.ca.gov/realid**

ԳՐԱՆՑՎԵԲ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քվեարկելու համար գրանցվելու մասին տեղեկությունների համար այցելեք **sos.ca.gov**

ԴԻՄՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

C կարգի ուսուցման թույլտվության համար դիմելու համար՝

1. Լրացրեք վարորդական իրավունքի և նույնականացման ID քարտի դիմումը:
2. Ներկայացրեք Ձեր փաստաթղթերը:
3. Վճարեք հայտի չվերադարձվող վճարը:
4. Հանձնեք գիտելիքների ստուգման թեստ(եր):
5. Անցնեք տեսողության զննում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/instructionpermit՝** դիմումի ֆայլերի և պահանջների ամբողջական ցանկի համար:

Եթե Ձեր 18 տարին չի լրացել, ապա Ձեզ նաև անհրաժեշտ է՝

- Լինել առնվազն 15½ տարեկան:
- Ավարտել վարորդի կրթական ծրագիրը:
- Ունենալ ծնողի կամ խնամակալի ստորագրությունը՝ դիմումը հաստատելու և ֆինանսական պատասխանատվությունն իրենց վրա վերցնելու համար (տե՛ս Բաժին 10): Եթե Ձեր ծնողները կամ խնամակալները համատեղ կիսում են Ձեր խնամակալությունը, ապա երկուսն էլ պետք է ստորագրեն:
- Մի՛ կիրառեք Ձեր ուսուցման թույլտվությունը, քանի դեռ չեք սկսել գործնական «*behind-the-wheel*» քննության վերապատրաստումը հրահանգչի հետ, ով կվավերացնի թույլտվությունը:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Վարորդական կրթություն և վարորդի նախապատրաստում կարելի է անցնել DMV-ի լիցենզավորված ավտոդպրոցներում և որոշ ավագ դպրոցներում: Հրահանգիչները պետք է ունենան հրահանգչի ID քարտ: Խնդրեք դա տեսնել:

Ավտոդպրոցի ընտրության լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Վարորդի վերապատրաստման դպրոցների էջը **dmv.ca.gov/driver-ed**-ում:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ

Ուսուցման թույլտվություն ստանալուց հետո Ձեր վարորդական իրավունքը ստանալու համար անհրաժեշտ է՝

- Վարելու պրակտիկա անցնել Կալիֆորնիայի վարորդական իրավունքով՝ առնվազն 18 (անչափահասների դեպքում՝ 25) տարեկան վարորդի հետ: Այս անձը պետք է բավական մոտ նստի, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերահսկի տրանսպորտային միջոցը:
- Հանձնել գործնական վարորդական քննություն:

Եթե Ձեր 18 տարին չի լրացել, ապա Ձեզ նաև անհրաժեշտ է՝

- Լինել առնվազն 16 տարեկան:
- Ունենալ ուսուցման թույլտվություն Կալիֆորնիայից կամ մեկ այլ նահանգից առնվազն 6 ամսով կամ դառնալ 18 տարեկան, նախքան գործնական (*behind-the-wheel*) թեստի համար հերթագրվելը:
- Ներկայացնել վարորդական ուսուցումն ու վարորդական վերապատրաստումն հաստատող փաստաթուղթ(եր):
- Առնվազն 50 ժամ վարելու պրակտիկա անցեք Կալիֆորնիայի վարորդական իրավունքով վարորդի հետ, ով առնվազն 25 տարեկան է: Որից 10 ժամը պետք է լինի գիշերը:

Հայտի քայլերի ամբողջական ցուցակի, պահանջների, Ծնող-դեռահաս վարորդական պայմանագրի և Վարորդական գործունեության գնահատման (DPE) միավորների թերթիկի մանրամասների համար տե՛ս Վարորդական վկայականների էջը՝ **dmv.ca.gov/teendriver** կայքում:

Անչափահասների սահմանափակումները և բացառությունները

Եթե Ձեր 18 տարին չի լրացել, ապա Ձեր վարորդական վկայականում առկա կլինի ժամանակավոր սահմանափակումներով արտահայտությունը: Որպես ժամանակավոր սահմանափակումներով վարորդ՝ Դուք չեք կարող վարել՝

- Երեկոյան ժամը 11-ից առավոտյան 5-ը՝ վարորդական վկայականը ձեռք բերելու առաջին 12 ամիսներին:
- Մինչև 20 տարեկան ուղևորների հետ, բացառությամբ, երբ Ձեր ծնողը, խնամակալը կամ Կալիֆոռնիայի վարորդական իրավունք ունեցող այլ վարորդ (առնվազն 25 տարեկան) Ձեր կողքին չէ:
- Վարձատրության դիմաց, կամ շահագործել տրանսպորտային միջոցներ, որոնց վարման համար պահանջվում է A, B կամ C կարգի կոմերցիոն վարորդական իրավունք:

Այս սահմանափակումներն ունեն բացառություններ, եթե

- Դուք բժշկական օգնության կարիք ունեք և չեք կարող գտնել երթևեկելու մեկ այլ ողջամիտ ճանապարհ: Դուք պետք է ունենաք Ձեր բժշկի կողմից ստորագրված տեղեկանք: Տեղեկանքում պետք է նշված լինի Ձեր ախտորոշումը և վերականգնման հավանական ամսաթիվը:
- Վարում եք դպրոցի կամ դպրոցական գործունեության համար: Դուք պետք է ունենաք Ձեր դպրոցի տնօրենի, ուսուցչի կամ պաշտոնակատարի կողմից ստորագրված տեղեկանք:
- Վարում եք աշխատանքային պատճառներով: Պետք է ունենաք Ձեր գործատուի կողմից ստորագրված տեղեկանք: Տեղեկանքը պետք է հաստատի Ձեր զբաղվածությունը:
- Վարում եք ընտանիքի անմիջական անդամի տեղաշարժը ապահովելու համար: Պետք է ունենաք Ձեր ծնողի կամ օրինական խնամակալի կողմից ստորագրված տեղեկանք: Տեղեկանքի մեջ պետք է նշվեն մեքենեան վարելու անհրաժեշտ պատճառը, ընտանիքի անդամը և այն ամսաթիվը, երբ այդ անհրաժեշտության կարիքը այլևս չի լինի:

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ Ծնողը կամ խնամակալը կարող է կասեցնել իրենց դեռահասի վարորդական իրավունքը՝ լրացնելով Վարորդական վկայականի կամ ID քարտի չեղարկման կամ կասեցման հայտ:

ԲԱԺԻՆ 3. Քննության գործընթացը

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹԵՍՏԵՐ

Ընդհանուր տեղեկություն վարորդական իրավունքի քննությունների վերաբերյալ՝

1. Տեսողության թեստ

DMV-ն քննում է բոլոր դիմորդներին՝ համոզվելու, որ նրանք բավականաչափ լավ են տեսնում՝ անվտանգ վարելու համար: Եթե Ձեր տեսողության թեստն անցնեք ուղղող կամ կոնտակտային ոսպնյակներով, ապա Ձեր վարորդական վկայականը կունենա ուղղող ոսպնյակների սահմանափակում: Եթե չհաջողվի անցնել տեսողության թեստը, կխնդրեն, որ ներկայացնեք Ձեր ակնաբույժի կողմից լրացված տեսողության հետազոտության մասին զեկույցի ձևաթուղթ (*Report of Vision Examination*, DL 62): Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/vision-standards**:

2. Գիտելիքների ստուգման թեստ

Երբ դիմում եք բնօրինակ վարորդական վկայական ստանալու համար, պետք է անցնեք գիտելիքների ստուգման թեստ: Դուք ունեք թեստն անցնելու 3 փորձի հնարավորություն, այնուհետև Ձեզնից կպահանջվի կրկին դիմել: Անչափահասները պետք է սպասեն 7 օր (ձախողման օրը չհաշված) գիտելիքների թեստը վերահանձնելու համար:

Վարորդական իրավունքի ժամկետի երկարաձգման ժամանակ էլեկտրոնային ուսուցումը կարող է լինել թեստավորման այլընտրանքային տարբերակ: Սա առանց ձախողելու, ազատ գրաֆիկով ինտերակտիվ մոդուլացված դասընթաց է՝ յուրաքանչյուր մոդուլից հետո անցկացվող թեստերով: Դասընթացը կարող է իրականացվել համակարգչի, նոթբուքի, պլանշետի կամ բջջային սարքի միջոցով:

Թեստավորման տարբերակները հասանելի կլինեն Ձեր կողմից դիմումը լրացնելուց անմիջապես հետո՝ **dmv.ca.gov/dl**-ում:

ԿԱՐԵՎՈՐ՝ Գիտելիքների ստուգման քննության ընթացքում չի թույլատրվում օգտագործել որևէ օժանդակ միջոց, օրինակ՝ Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկը կամ բջջային հեռախոս:

3. Գործնական վարման ստուգումSS

Բնօրինակ վարորդական վկայական ստանալու համար դիմելիս կստուգվի Ձեր անվտանգ մեքենա վարելու կարողությունը: Երկարաձգումից հետո տեսողության կամ այլ առողջական խնդիրներ ունեցող վարորդներից կարող է պահանջվել գործնական վարման քննություն հանձնել: Հրահանգիչը կարող է միաժամանակ երկու կամ ավելի հրահանգներ տալ՝ որոշելու, թե արդյոք կարող եք ըմբռնել և ճիշտ հետևել երկուսին էլ: Օրինակ՝ «Հաջորդ փողոցում ձախ շրջադարձ կատարեք, հետո առաջին խաչմերուկում ևս մեկ ձախ շրջադարձ կատարեք»:

Գործնական (*behind-the-wheel*) քննությանը հերթագրվելու համար այցելեք **dmv.ca.gov/make-an-appointment**:

Գործնական քննության օրը պետք է ներկայացնեք՝

1. Ձեր ուսուցման թույլտվությունը կամ վարորդական իրավունքը (եթե ունեք):
2. Կալիֆորնիայի վարորդական իրավունք ունեցող մեկ այլ վարորդի, ով առնվազն 18 տարեկան է (25՝ անչափահասների դեպքում), եթե չունեք վարորդական իրավունք:
3. Քննությանը վարելու համար անվտանգ տրանսպորտային միջոց:
4. Ապահովագրության և տրանսպորտային միջոցի հաշվառման վավեր փաստաթղթեր:
5. Եթե նախատեսում եք վարձակալած մեքենա օգտագործել, ապա Ձեր անունը պետք է նշված լինի վարձակալության պայմանագրում: Պայմանագիրը չպետք է բացառի գործնական վարման քննության հանձնումը:

ԾԱՆՈԹԻԹՅՈՒՆ՝ Ձախողած գործնական քննությունը վերահանձնելու համար անչափահասները պետք է սպասեն 14 օր (ձախողման օրը չհաշված):

Նախքան սկսելը, DMV հրահանգիչը կխնդրի Ձեզ գտնել և ցույց տալ՝

- Վարորդի կողմի պատուհանը. վարորդի կողմի պատուհանը պետք է բացվի:
- Հողմապակին. հողմապակին պետք է ապահովի Ձեր և DMV տեսուչի լիարժեք, պարզ, չարգելափակված տեսադաշտը: Հողմապակու ճաքերի պատճառով Ձեր քննությունը կարող է հետաձգվել:
- Հետահայաց հայելիները. առնվազն երկու հետահայաց հայելի: Նրանցից մեկը պետք է լինի Ձեր տրանսպորտային միջոցի ձախ կողմում:
- Արգելակային լույսերը. և՛ աջ, և՛ ձախ արգելակային լույսերը պետք է աշխատեն:
- Անվադողերը.որոնք պետք է ունենան պահպանիչ շերտի առնվազն 1/32 դյույմ հավասարաչափ խորություն: Դոնաթ անվադողի օգտագործումը չի թույլատրվում վարման քննության ժամանակ:
- Արգելակը. սեղմված վիճակում արգելակի ոտնակի ներքևի և հատակի տախտակի միջև պետք է լինի առնվազն մեկ դյույմ հեռավորություն:
- Ձայնային ազդանշանի սարքը. նախատեսված մեքենայի համար, պատշաճ աշխատանքային վիճակում և այնքան բարձր, որ լսվի առնվազն 200 ֆուտ հեռավորությունից:
- Կայանման արգելակը. ինչպես սեղմել և բաց թողնել կայանման արգելակը:
- Շրջադարձի ազդանշանները՝
  a. Ձախ շրջադարձ:
  b. Աջ շրջադարձ:
  c. Դանդաղեցնել կամ կանգ առնել:
- Առջևի հողմապակու մաքրիչները. Ձեզնից կարող է պահանջվել ցույց տալ, որ դրանք գործում են:
- Ամրագոտիները. բոլոր ամրագոտիները պետք է նորմալ աշխատեն և օգտագործվեն մեքենայում գտնվող անձի (անձանց) կողմից:

ԾԱՆՈԹԻԹՅՈՒՆ՝ Եթե Ձեր մեքենան չի համապատասխանում պահանջներին, Ձեր վարման քննությունը կհետաձգվի:

Կարող եք օգտվել թարգմանիչների ծառայություններից նախքան վարման քննությանն անցնելը՝ նույնականացման ստուգման և մեքենայում որոշակի սարքերի օգտագործման համար, սակայն նրանք չեն կարող Ձեզ ուղեկցել քննության ժամանակ:

Միայն հրահանգիչը կարող է ուղեկցել Ձեզ վարման քննության ժամանակ: Բացառություններ են արվում վերապատրաստման, ծառայողական կենդանիների և իրավապահ մարմինների հետ կապված որոշ իրավիճակների համար:

Արգելվում է ձայնագրող սարքի՝ այդ թվում տեսաձայնագրիչի կիրառումը գործնական քննության ժամանակ: Եթե ձայնագրող սարքը հնարավոր չէ անջատել կամ ապաակտիվացնել, ապա դիմորդը պետք է արգելափակի այն, որպեսզի քննության ընթացքում որևէ տեսակի ձայնագրություն չիրականացվի:

Հավելյալ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է իմանալ գործնական քննությունը հանձնելու համար

Վարման քննությունը նախատեսված է հանապարհային տարբեր իրավիճակներում վարելու Ձեր հմտությունը որոշելու և կարողությունները գնահատելու, ոչ թե մեքենայի տեխնոլոգիան գնահատման համար: Ուստի, վարորդական աջակցության առաջադեմ համակարգերի տեխնոլոգիաները՝ ավտոմատացված զուգահեռ կայանումը, երթևեկելի գոտուց դուրս գալը և կրուիզ-կառավարումը, չեն թույլատրվում քննության ժամանակ: Տրանսպորտային միջոցների անվտանգության տեխնոլոգիաները՝ պահուստային տեսախցիկները և կույր գոտիների մոնիտորները, կարող են օգտագործվել քննության ժամանակ, բայց դրանք չեն փոխարինում ձեր հայելիների և կույր գոտիների իրական ստուգմանը:

Վարորդական գործունեության գնահատման (DPE) միավորների թերթիկը տեսնելու համար այցելեք **dmv.ca.gov/teendriver**: Լրացուցիչ/տարածքային DPE-ի թերթիկի նմուշի համար այցելեք **dmv.ca.gov/seniors**:

ԲԱԺԻՆ 4. Ձեր վարորդական իրավունքի փոփոխումը, փոխարինումը և երկարաձգումը

Փոփոխություններ Ձեր վարորդական իրավունքում

Եթե օրինական կերպով փոխում եք Ձեր անունը կամ վարորդական վկայականում այլ փոփոխության կարիք կա, օրինակ՝ Ձեր ֆիզիկական նկարագրության կամ գենդերային ինքնության վերաբերյալ, ապա այցելե՛ք **dmv.ca.gov/dlservices**:

Փոփոխություն Ձեր հասցեում

Եթե փոխել եք Ձեր բնակության վայրը, ապա պետք է 10 օրվա ընթացքում հայտնեք DMV-ին Ձեր նոր հասցեն: Ներկայացրեք Ձեր հասցեի փոփոխությունն առցանց՝ **dmv.ca.gov/addresschange**-ում, կամ փոստի միջոցով: Ձեր պարտականությունների մեջ է մտնում համոզվել, որ DMV-ն ունի Ձեր ճիշտ փոստային հասցեն:

Ձեր հասցեն փոխելիս Դուք ավտոմատ կերպով չեք ստանում նոր վարորդական վկայական: Կարող եք փոխել վարորդական վկայականը վճարի դիմաց:

Փոխարինեք կամ երկարացրեք Ձեր վարորդական իրավունքի ժամկետը

Արգելվում է տրանսպորտային միջոց վարել ժամկետանց վարորդական վկայականով: Կորցրած, գողացված կամ վնասված վարորդական վկայականը թարմացնելու կամ փոխարինելու համար այցելեք **dmv.ca.gov/dlservices**, կամ DMV գրասենյակ: Եթե չկարողանաք երկարաձգել ժամկետն առցանց, այցելեք DMV գրասենյակ:

Նախքան DMV-ն կկարողանա Ձեզ ժամանակավոր վարորդական վկայական տալ, հնարավոր է Ձեզնից պահանջեն ինքնությունը հաստատող լրացուցիչ փաստաթուղթ: Ձեր վարորդական իրավունքի և անձը հաստատող փաստաթղթի ժամկետը կարող է ավարտվել նույն օրը: Այս պարագայում, Ձեզնից կպահանջվի տրամադրել վավեր անձը հաստատող փաստաթուղթ: Եթե Դուք անչափահաս եք, ապա Ձեր ծնողը կամ խնամակալը պետք է ստորագրեն դիմումը: Փոխարինման քարտը ստանալուց հետո Ձեր հին քարտն այլևս անվավեր կհամարվի: Եթե գտնեք Ձեր հին քարտը, ապա ոչնչացրեք այն:

Երկարացնել վարորդական իրավունքի գործողության ժամկետը

Եթե Դուք նահանգում չեք և չեք կարող փոխարինել Ձեր վարորդական վկայականը, ապա կարող եք այն մեկ տարով երկարաձգելու հայտ ներկայացնել: Նախքան Ձեր վարորդական իրավունքի ժամկետի ավարտը, ներկայացրեք հայտ՝ նշելով Ձեր անունը, վարորդական իրավունքի համարը, ծննդյան ամսաթիվը, Կալիֆոռնիայում կացության հասցեն և նահանգից դուրս գտնվող վայրի հասցեն՝ **dl-extensions@dmv.ca.gov**-ում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Սահմանափակ ժամկետով վարորդական վկայականները երկարաձգման այս տարբերակի իրավունք չունեն:

ԲԱԺԻՆ 5. Մեքենավարման ներածություն

Ձեր առողջությունը կարող է ազդել Ձեր վարելու վրա:

Տեսողություն.պետք է կարողանաք նկատել վտանգները տարատեսակ լուսավորությունների տակ, որոշել հեռավորությունները, հարմարեցնել Ձեր արագությունը երթևեկության արագությունը և կարդալ ճանապարհային նշանները:

Լսողություն.պետք է կարողանաք լսել մեքենաների և մոտոցիկլետների ձայնային ազդանշանները կամ անվադողերի ճռռոցները, որոնք կարող են զգուշացնել Ձեզ վտանգի մասին: Արգելվում է տրանսպորտային միջոց վարելիս որևէ տեսակի ականջակալներ կրել:

Հոգնածությունը և քնկոտությունը կարող են ազդել Ձեր տեսողության վրա և երկարացնել վտանգին արձագանքելու ժամանակը:

Ֆիզիկական և մտավոր առողջությունը.Դուք պետք է զգոն լինեք՝ արագորեն որոշելու գործողությունների հիշտ ընթացքը՝ ցանկացած տեսակի, այդ թվում՝ անսպասելի երթևեկության իրավիճակներում:

Դեղեր. դեղատոմսով կամ առանց դեղատոմսի որոշ դեղեր կարող են Ձեզ վերածել վտանգավոր վարորդի: Որոշ դեղամիջոցներ կարող են Ձեզ քնկոտ դարձնել: Ձեր ընդունած դեղամիջոցների գործած ազդեցությունների մասին տեղյակ լինելը ձեր պարտավորությունն է:

Առողջություն. Բժիշկները պարտավոր են տեղեկացնել DMV-ին առնվազն 14 տարեկան բուժառուների այնպիսի բժշկական խնդիրների մասին, որոնք կարող են ազդել Ձեր անվտանգ վարելու կարողության վրա, ինչպես օրինակ՝ գիտակցության կորստի մասին:

Տրանսպորտային միջոցի կառավարում

Ձեր տրանսպորտային միջոցը կառավարելու համար կարևոր է հնարավորության դեպքում երկու ձեռքերն էլ պահել ղեկին:

«Ձեռքը ձեռքի դիմաց» ղեկի կառավարում (հրի՛ր-քաշի՛ր)

Ղեկի այս մեթոդն օգտագործելու համար

1. Սկսեք ձեռքերի ժամը 9 և 3 կամ ավելի ցածր՝ 8 և 4 դիրքերից:
2. Ձեռքերդ մի հատեք ղեկի մեջտեղում:
3. Տրանսպորտային միջոց վարելիս, նույնիսկ շրջադարձեր կատարելիս ձեռքերը պահեք այս դիրքերում:

«Ձեռքը ձեռքի վրայով» ղեկի կառավարում

Օգտագործեք ղեկի կառավարման այս մեթոդը ցածր արագությամբ շրջադարձի, կայանման կամ սահից վերականգնվելու ժամանակ: Այս մեթոդը օգտագործելու համար՝

1. Սկսեք Ձեր ձեռքերը ժամը 8 և 4 դիրքերում:
2. Ձգվեք ղեկի երկայնքով հակառակ կողմը բռնելու համար:
3. Մյուս ձեռքով բաց թողեք ղեկը:
4. Ձգվեք դեպի այն թևը, որով դեռ պահում եք ղեկը, բռնեք ղեկը և քաշեք վերև:

Ղեկի կառավարում մեկ ձեռքով

Միայն երկու իրավիճակում կարող է ղեկը մեկ ձեռքով կառավարելու անհրաժեշտություն առաջանալ,

- Երբ հետ եք շրջվում, հետընթաց շարժվելիս, որպեսզի տեսնեք, թե ուր եք գնում: Ձեռքը դրեք ղեկի վրա ժամը 12-ի դիրքում:
- Երբ գործի եք դնում տրանսպորտային միջոցի կառավարման համակարգը, ինչի համար Ձեզ անհրաժեշտ է ձեռքերից մեկը վերցնել ղեկից:

ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ և ՑՈԼԱԼԱՊՏԵՐՆԵՐ

Ձեր ազդանշանները, ձայնային ազդանշանները և ցոլալապտերները կարևոր են այլ վարորդների, հեծանվորդների և հետիոտների հետ հաղորդակցվելու համար:

Ազդանշանում

Միշտ ազդանշան տվեք, երբ շրջադարձ եք կատարում, փոխում երթևեկության գոտին, դանդաղեցնում մեքենայի ընթացքը կամ կանգ առնում:

Դուք կարող եք ազդանշան տալ՝ օգտագործելով Ձեր մեքենայի ազդանշանային լույսերը կամ ձեռքի և թևի դիրքերը: Եթե Ձեր ազդանշանային լույսերը չեն գործում, կամ արևի պայծառ լույսը վատթարացնում է Ձեր ազդանշանային լույսերի տեսանելիությունը, օգտագործեք ստորև առկա նկարում ներկայացված ձեռքի և թևի դիրքերի կիրառմամբ ազդանշանները:

Ձախ շրջադարձ

Աջ շրջադարձ

Դանդաղեցնել կամ կանգ առնել:

Հեծանվորդները կարող են ազդանշանել շրջադարձի մասին՝ ձեռքն ուղիղ պարզելով և ցույց տալով նախատեսվող շրջադարձի ուղղությունը:

Դրոն պետք է ազդանշան տա՝

- Շրջադարձ կատարելուց առնվազն 100 ֆուտ առաջ:
- Ամեն անգամ երթևեկության մի գոտուց մյուսն անցնելուց առաջ:
- Արագընթաց մայրուղու վրա մի գոտուց մյուսն անցնելուց առնվազն 5 վայրկյան առաջ:
- Մայթեզրին մոտենալուց կամ դրանից հեռանալուց առաջ:
- Նույնիսկ եթե շրջակայքում այլ տրանսպորտային միջոց չեք տեսնում:
- Երբ Դրոն համարյա խաչմերուկում եք, եթե նախատեսում եք շրջվել խաչմերուկն անցնելուց կարճ ժամանակ անց:

Մի՛ մոռացեք անջատել Ձեր ազդանշանը, երբ այլևս դրա կարիքը չկա:

Ձայնային ազդանշանի կիրառումը

Դրոն կարող եք ձայնային ազդանշան տալ՝ տեղեկացնելու մյուս վարորդներին, որ Դրոն տարածքում եք կամ վտանգի մասին զգուշացնելու համար: Ձայնային ազդանշան տվեք

- Բախումներից խուսափելու համար:
- Զգուշացնելու հանդիպակաց մեքենաներին՝ նեղ լեռնային ճանապարհներին, որտեղ չեք կարողանում տեսնել Ձեզնից առնվազն 200 ֆուտ առաջ ընկած տարածությունը:

Ցոլալապտերների կիրառումը

Ձեր տրանսպորտային միջոցի ցոլալապտերները օգնում են Ձեզ տեսնել Ձեր առջև ընկած տեսադաշտը: Դրանք նաև հեշտացնում են այլ վարորդների համար Ձեր տրանսպորտային միջոցը տեսնելը: Դրոն պետք է դեպի Ձեզ շարժվող մեքենայից մինչև 500 և Ձեր առջևից ընթացող մեքենայից մինչև 300 ֆուտ հեռավորության վրա հեռարձակ լույսը փոխեք մոտարձակ լույսի: Միայն կայանման լույսերով մեքենա վարելն անօրինական է: Միացրեք ցոլալապտերները՝

- Երբ չափազանց մութ է 1.000 ֆուտ հեռավորությունից տեսնելու համար:
- Սկսած մայրամուտից 30 րոպե հետո:
- Մինչև արևածագից 30 րոպե առաջ:
- Անբարենպաստ եղանակին: Եթե անձրևի կամ ձյան պատճառով անհրաժեշտ է օգտագործել Ձեր հողմապակու մաքրիչները, ապա պետք է միացնեք Ձեր ցոլալապտերների մոտարձակ լույսերը:
- Երբ առկա պայմանները (ամպերը, փոշին, ծուխը կամ մառախուղը) խանգարում են Ձեզ տեսնել այլ տրանսպորտային միջոցների:
- Լեռնային ճանապարհներին կամ թունելներում՝ նույնիսկ արևոտ օրերին:
- Երբ ճանապարհային նշանը հուշում է, որ ցոլալապտերները պետք է միացված լինեն:
- Օգնելու այլ վարորդներին տեսնել Ձեր տրանսպորտային միջոցը, հատկապես երբ հորիզոնում արևը ցածր է:

Վթարային թարթող լույսերի կիրառումը

Եթե Ձեր առջևում բախում կամ վտանգ եք տեսնում, նախազգուշացրեք Ձեր հետևում գտնվող վարորդներին՝ օգտագործելով այս մեթոդները՝

- Միացրե՛ք վթարային թարթող լույսերը:
- Թեթևակի սեղմեք Ձեր արգելակի ոտնակը՝ երեք-չորս անգամ:
- Դանդաղեցնելիս և կանգ առնելիս օգտագործեք ձեռքի ազդանշան:

Եթե անհրաժեշտ է կանգ առնել տրանսպորտային միջոցի խնդրի պատճառով՝

- Միացրե՛ք վթարային թարթող լույսերը: Եթե Ձեր տրանսպորտային միջոցը չունի վթարային թարթող լույսեր, օգտագործեք շրջադարձային ազդանշանները:
- Հնարավորության դեպքում դուրս եկեք ճանապարհի երթևեկելի մասից:
- Եթե չեք կարող ամբողջապես երթևեկելի մասից դուրս գալ, կանգնեք այնպիսի տեղում, ուր մարդիկ
  կարողանան հետևի կողմից տեսնել Ձեզ և Ձեր մեքենան:
- Մի կանգնեք հենց բլրի կամ ոլորանի վրա: Մյուս վարորդները կարող են ժամանակին չտեսնել Ձեր տրանսպորտային միջոցը, որպեսզի խուսափեն բախումից:
- Ձանգահարե՛ք ճանապարհային արտակարգ իրավիճակներ և մնացե՛ք Ձեր մեքենայում, մինչև օգնությունը կհասնի:

ԲԱԺԻՆ 6. Ճանապարհներով երթևեկում

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Երթևեկության գոտին ճանապարհի հատված է, որը նախատեսված է մեկ գծով երթևեկության համար:

Գոտու գծանշումներ

Ճանապարհի մակերևույթի գծանշումները վարորդներին օգնում են իմանալ ճանապարհի որ հատվածն է կիրառելի և հասկանալ ճանապարհային երթևեկության կանոնները:

Մեկ հոծ դեղին գիծ

Մեկ հոծ դեղին գիծը նշում է երկկողմանի երթևեկությամբ ճանապարհի կենտրոնը: Մի վազանցեք Ձեր առջևում ընթացող տրանսպորտային միջոցը, եթե Ձեր ուղղությամբ գնացող երթևեկության միայն մեկ գոտի կա, և ճանապարհի Ձեր կողմում կա հոծ դեղին գիծ:

Կրկնակի հոծ դեղին գծեր

Մի՛ անցեք կրկնակի հոծ դեղին գծերի վրայով: Երբեմ մի՛ անցեք այս գծերից ձախ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ



- Ընթանում եք ուղևորատար տրանսպորտային միջոցների (HOV) գոտով, որը հատուկ մուտք ունի դեպի ձախ կողմ:
- Շինարարական կամ այլ տեսակի նշանների միջոցով ցուցում եք ստանում շարժվելու ճանապարհի մյուս կողմով, քանի որ Ձեր կողմը փակված կամ արգելափակված է:
- Ձախ շրջադարձ եք կատարում մեկ գույգ կրկնակի դեղին գծերի վրայով, որպեսզի մուտք գործեք կամ դուրս գաք մերձատար ուղուց, կամ մտնեք կամ դուրս գաք մասնավոր ճանապարհից կամ կատարեք հետադարձ:

Մինչանցից 2 կամ ավելի ֆուտ հեռավորության վրա գտնվող և 2 շարքով ձգվող կրկնակի հոծ գծերը համարվում են արգելք: Մի՛ շարժվեք այս արգելքի վրայով, մի՛ հատեք այն, այդտեղից ձախ շրջադարձ կամ հետադարձ մի՛ կատարեք, բացի այն տեղերից, որտեղ հատուկ բաց հատվածներ կան:

Ընդհատվող դեղին գիծ

Ընդհատվող դեղին գիծը ցույց է տալիս, որ կարելի է վազանց կատարել, եթե ընդհատվող գիծը Ձեր վարման գոտուն կից է: Անցեք միայն այն ժամանակ, երբ անվտանգ է:

Մեկ հոծ սպիտակ գիծ

Մեկ հոծ սպիտակ գծով նշվում են երթևեկության գոտիները, որոնք ընթանում են նույն ուղղությամբ: Ներառված են միակողմանի փողոցները:

Կրկնակի հոծ սպիտակ գծեր

Կրկնակի հոծ սպիտակ գծերը նշում են սովորական օգտագործման և նախընտրելի օգտագործման գոտիների (օրինակ՝ *carpool*, HOV) միջև ընկած արգելապատնեշը: Կարող եք տեսնել կրկնակի հոծ սպիտակ գծերը նաև մայրուղու վրա կամ մայրուղու մոտ: Երբեք գոտին մի փոխեք կրկնակի հոծ սպիտակ գծերի վրայով: Սպասեք մինչ կտեսնեք մեկ ընդհատվող սպիտակ գիծ:

Ընդհատվող սպիտակ գիծ

Ընդհատվող սպիտակ գծերն առանձնացնում են երթևեկության գոտիները նույն ուղղությամբ երկու կամ ավելի գոտիներ ունեցող ճանապարհների վրա:

Երթևեկության գոտու գծանշումների վերջը

Ավարտվող մայրուղու և փողոցային գոտիները սովորաբար նշվում են խոշոր ընդհատվող գծերով: Եթե վարում եք ընդհատվող գծերով նշված գոտիով, պատրաստ եղեք ավտոմայրուղուց դուրս գալուն կամ նրան, որ այդ գոտին շուտով վերջանալու է: Փնտրեք ճանապարհային նշան, որը հրահանգում է ավտոմայրուղուց դուրս գալ կամ փոխել գոտին:

Ճանապարհի զիջման գծեր



Ճանապարհը զիջելու գիծը սպիտակ հոծ եռանկյունիների գիծ է, որը ցույց է տալիս մոտեցող փոխադրամիջոցների համար ճանապարհը զիջելու կամ կանգ առնելու վայրը: Եռանկյուններն ուղղված են դեպի մոտեցող տրանսպորտային միջոցները:

Երթևեկության Գոտու Ընտրությունը

Երթևեկության գոտիների մասին խոսելիս հաճախ օգտագործվում է համարակալում: Ձախակողմյան կամ (արագ) գոտին կոչվում է 1-ին գոտի: 1-ին գոտուց աջ ընկած գոտին կոչվում է 2-րդ գոտի: Հետո 3-րդ գոտի և այլն:

Համարակալված երթևեկության գոտիների օրինակ:

Գոտի ընտրելու մի քանի խորհուրդներ՝

- Վազանցելու կամ ձախ շրջադարձ կատարելու համար օգտագործեք ձախ գոտին:
- Օգտագործեք աջ գոտին՝ երթևեկություն մտնելու կամ դրանից դուրս գալու համար, կամ երբ ճանապարհ եք մտնում եզրամարից կամ մայթեզրից:

Երթևեկության գոտիների փոփոխումը

Նախքան գոտին փոփոխելը՝

- Ազդանշան տվեք:
- Ստուգեք Ձեր հայելիները:
- Ստուգեք Ձեր ետևից ու կողքից անցնող երթևեկությունը:
- Ձեր ուսի վրայով նայեք այն ուղղությամբ, ուր նախատեսում եք շարժվել՝ համոզվելու համար, որ գոտին ազատ է:
- Ստուգեք Ձեր կույր կետերը՝ այլ տրանսպորտային միջոցներից, մոտոցիկլավարներից և հեծանվորդներից զգուշանալու համար: Թույլ մի տվեք, որ մեքենան սահի դեպի այլ գոտի:
- Համոզվեք, որ հաջորդ գոտում Ձեր մեքենայի համար բավարար տարածություն կա: Գոտի փոխելուց առաջ անհրաժեշտ չէ դանդաղեցնել արագությունը:

Հնարավորինս երկար մնացեք միևնույն գոտում: Գոտիները հաճախակի մի փոխեք: Վերջին պահին գոտիների կամ ուղղության փոփոխությունները կարող են մեծացնել բախումների վտանգը: Եթե արդեն խաչմերուկ եք մտել, շարունակեք առաջ շարժվել: Եթե սկսում եք շրջադարձ կատարել, շարունակեք և ավարտեք շրջադարձը: Եթե չեք հասցրել շրջադարձ կատարել, շարունակեք ճանապարհն այնքան, մինչև կարողանաք անվտանգ և օրինական շրջադարձ կատարել:

Գոտու տեսակները

Վազանցի գոտիներ

Բազմագոտի ճանապարհի վրա վազանցի գոտին կենտրոնի բաժանարարին ամենամոտ գտնվող գոտին է և օգտագործվում է այլ տրանսպորտային միջոցների վազանցելու համար:

Carpool կամ Ուղևորատար տրանսպորտային միջոցների (HOV) գոտիներ: HOV գոտին հատուկ գոտի է, որը նախատեսված է միայն *carpool*-ների, ավտոբուսների, մոտոցիկլետների կամ տարբերիչ նշան ունեցող ցածր արտանետմամբ տրանսպորտային միջոցների համար: HOV գոտի օգտագործելու համար պետք է համապատասխանեք նշվածներից մեկին՝

- Ձեր տրանսպորտային միջոցում պետք է լինեն որոշակի թվով մարդիկ: Ուղեմուտքի մոտ կամ ճանապարհի երկայնքով կլինեն նշաններ, որպեսզի Ձեզ տեղեկացնեն մարդկանց նվազագույն քանակի մասին: Ճանապարհային նշանները նաև ներկայացնում են այն ժամերը, երբ գործում են HOV կանոնները:
- Դուք վարում եք ցածր կամ զրոյական արտանետմամբ տրանսպորտային միջոց: Դուք պետք է ցուցադրեք DMV-ի կողմից տրված հատուկ տարբերիչ նշան:
- Դուք մոտոցիկլետ եք վարում (եթե հակառակի մասին նշված չէ):

HOV գոտիներում ճանապարհի մակերեսը գծանշված է շեղանկյան նշանով և *Carpool Lane* բառերով: Մի հատեք կրկնակի հոծ գծերը՝ HOV գոտի մուտք գործելու կամ դրանից դուրս գալու համար: Օգտագործեք նշանակված մուտքերն ու ելքերը:

Ձախ շրջադարձի կենտրոնական գոտիներ

Ձախ շրջադարձի կենտրոնական գոտին գտնվում է երկկողմանի փողոցի մեջտեղում: Երկու կողմերից էլ նշվում է երկու ներկված գծերով: Ներքին գիծն ընդհատվող է, իսկ արտաքինը՝ հոծ: Օգտագործեք ձախ շրջադարձի կենտրոնական գոտին՝ նախապատրաստվելու և ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելու համար: Սա սովորական երթևեկության գոտի կամ վազանցի գոտի չէ: Ձախ շրջադարձի կենտրոնական գոտում կարելի է շարժվել ընդամենը 200 ֆուտ: Այս գոտուց ձախ շրջադարձ կատարելու համար՝



- Ձախ շրջադարձի կենտրոնական գոտում փնտրեք դեպի Ձեզ ընթացող այլ տրանսպորտային միջոցներ:
- Ազդանշան տվեք:
- Նայեք ձեր ուսի վրայով՝ ձեր կույր կետերը ստուգելու համար:
- Ամբողջովին մտեք կենտրոնական ձախ շրջադարձային գոտի, որպեսզի չարգելափակեք երթևեկությունը:
- Շրջադարձ կատարեք, երբ անվտանգ է:

Լրացուցիչ տարածքներ կամ գոտիներ:

Որոշ երկգոտի ճանապարհներ ունեն հատուկ լրացուցիչ տարածքներ կամ գոտիներ: Ձեր հետևից եկող տրանսպորտային միջոցներին վազանցի հնարավորություն տալու համար շարժվեք դեպի այս տարածքներ:

Դուք պետք է օգտագործեք լրացուցիչ տարածքը կամ գոտին, որպեսզի թույլ տաք այլ տրանսպորտային միջոցներին վազանցել, երբ Դուք դանդաղ եք երթևեկում երկգոտի ճանապարհով, որտեղ վազանցն անվտանգ չէ, և Ձեզ հետևում են 5 կամ ավելի տրանսպորտային միջոցներ:

Հեծանվային գոտիներ

Հեծանվային գոտիները նախատեսված են միայն հեծանվորդների համար և գտնվում են տրանսպորտային միջոցների երթևեկությանը զուգահեռ: Դրանք սովորաբար նշվում են մեկ հոծ սպիտակ գծով և նշաններով: Դրանք երբեմն ներկվում են վառ կանաչ գույնով, որպեսզի ավելի տեսանելի լինեն:

Հեծանվային գոտով երթևեկելը արգելված է, քանի դեռ՝

- Չեք կայանում (որտեղ թույլատրելի է):
- Չեք մտնում ճանապարհ կամ դուրս գալիս:
- Շրջադարձ եք կատարում խաչմերուկներից 200 ֆուտից ոչ ավելի հեռավորության վրա:

Գոյություն ունեն հեծանվային գոտիների և գծանշումների բազմաթիվ տեսակներ՝

- Հեծանվային գոտի. տեղակայված է տրանսպորտային միջոցների երթևեկությանը հարող փողոցների երկայնքով: Սովորաբար նշվում է մեկ հոծ սպիտակ գծի միջոցով, որը խաչմերուկի մոտ դառնում է ընդհատվող գիծ:
- Բուֆերացված հեծանվային գոտի. նշվում է չակերտային կամ անկյունագծային գծանշմամբ երթևեկությունից և փողոցային կայանատեղերից ավելի մեծ տարանջատում ապահովելու համար:
- Հեծանվային երթուղի. նշվում է հեծանվային երթուղու նշաններով և (կամ) համատեղ օգտագործման ճանապարհի գծանշմամբ՝ ցույց տալու տրանսպորտային միջոցների հետ փողոցներում համատեղ երթևեկող հեծանվորդների համար նախընտրելի երթուղին:
- Հեծանվային բուլվար. առաջնահերթություն է տալիս հեծանվային երթևեկությանը՝ տրանսպորտային միջոցների հետ երթևեկության համատեղ փողոցներում:
- Առանձնացված հեծանվուղի. նախատեսված է բացառապես հեծանվորդների համար և ամբողջովին անջատված է տրանսպորտային միջոցների երթևեկությունից: Հայտնի են նաև որպես հեծանվուղի կամ պաշտպանված հեծանվային գոտի: Բաժանումը կարող է ներառել ճկուն սյուներ, ուղեկամուրջ, ոչ ճկուն արգելքներ կամ փողոցային կայանատեղիներ:
- Համատեղ երթևեկությամբ ճանապարհի հեծանվային գծանշումներ (համատեղ հեծանվատրանսպորտային գոտի). տեղեկացնում են վարորդներին, որ հեծանվորդներ կարող են լինել գոտում և օգնում են հեծանվորդներին պահպանել անվտանգությունը երթևեկության գոտում:



Ընդհանուր ճանապարհի Մեքենայի և հեծանվորդի միջև պետք է պահպանել երեք ոտնաչափ հեռավորություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հեծանվային գոտի մտնելուց առաջ ստուգեք Ձեր կույր գոտին (գոտիները) Եթե շարժիչային հեծանիվ եք վարում, զգուշացեք, որպեսզի խուսափեք այլ հեծանվորդներից: Երթևեկեք ողջամիտ արագությամբ և մի վտանգեք այլ հեծանվորդների անվտանգությունը:

ՇՐՋԱԴԱՐՁԵՐ

Աջ շրջադարձեր

Աջ շրջադարձ կատարելու համար՝



Աջ շրջադարձի օրինակ

- Շարժվեք դեպի ճանապարհի աջ եզր:
  - — Եթե նախատեսված է աջ շրջադարձի գոտի, մուտք գործեք բացվող հատվածից:
  - — Դուք կարող եք բեռ հեծանվային գծի ներսում շրջադարձից 200 ոտնաչափ հեռավորության վրա: Ստուգեք հեծանվորդների առկայությունը Ձեր կույր գոտիներում:
- Ուշադիր եղեք՝ նկատելու համար այն հեծանվորդներին և մոտոցիկլավարներին, որոնք կարող են հայտնվել ձեր տրանսպորտային միջոցի և մայթեզրի միջև:
- Սկսեք ազդանշանել շրջադարձից մոտ 100 ֆուտ առաջ:
- Հետ նայեք աջ ուսի վրայով և նվազեցրեք արագությունը:
- Կանգ առեք սահմանագծին չհասած: Սահմանային գիծը լայն սպիտակ գիծ է, որը ցույց է տալիս վարորդներին, թե որտեղ պետք է կանգնեն մինչև խաչմերուկը կամ հետիոտնային անցումը: Եթե սահմանագիծ չկա, կանգ առեք նախքան հետիոտնային անցում մտնելը: Եթե հետիոտնային անցում չկա, կանգ առեք նախքան խաչմերուկ մտնելը:
- Նայեք աջ ու ձախ և կատարեք շրջադարձն այն ժամանակ, երբ անվտանգ է:
- Շրջադարձն ավարտեք աջ գոտում: Մի կատարեք մեծ շառավղով շրջադարձ՝ մեկ այլ գոտի մտնելիս:

Աջ շրջադարձ կարմիր լույսի ներքո

Կարող եք աջ շրջադարձ կատարել կարմիր լույսացույցի ժամանակ՝ լրիվ կանգառից հետո, եթե չկա «ՇՐՋԱԴԱՐՁՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԿԱՐՄԻՐ ԼՈՒՍԱՑՈՒՑՑԻ ԺԱՄԱՆԱԿ» (NO TURN ON RED) նշան: Հետևե՛ք վերը նշված քայլերին աջ շրջադարձ կատարելու համար:

Աջ շրջադարձ կարմիր սլաքի ներքո

Դուք չեք կարող աջ շրջվել, եթե կանգ եք առել կարմիր սլաքի լույսի ներքո: Սպասեք մինչև լույսի կանաչ դառնալը՝ նախքան շրջադարձ կատարելը:

Աջ շրջադարձ հանրային տարանցիկ ավտոբուսային գոտում

Արգելված է հանրային տարանցիկ ավտոբուսների համար նախատեսված տարածքում տրանսպորտային միջոց վարել, այն կանգնեցնել, կայանել կամ թողնել: Համապատասխան ճանապարհային նշաններ կլինեն, որոնք ցույց կտան այն գոտիները, որոնք միայն ավտոբուսների համար են: Այնուամենայնիվ, կարող եք հատել ավտոբուսի գոտին՝ աջ շրջադարձ կատարելու համար:

Կատարեք աջ շրջադարձ դեպի հատուկ գոտիով ճանապարհ



Աջ շրջադարձի համար նախատեսված հատուկ գոտին չի միաձուլվում մեկ այլ գոտու հետ և թույլ է տալիս կատարել աջ շրջադարձ՝ առանց կանգ առնելու: Դուք կարող եք կատարել շրջադարձ, նույնիսկ եթե լուսացույցի լույսը կարմիր է այն տրանսպորտային միջոցների դեպքում, որոնք ուղիղ խաչմերուկով են անցնում: Եթե աջ շրջադարձի գոտու աջ մայթեզրին կա ճանապարհային լուսացույց կամ նշան, ապա պետք է հետևեք այդ լուսացույցի կամ նշանի ցուցումներին: Շրջադարձ կատարելիս միշտ զիջեք հետիոտնային անցումով անցնող հետիոտներին:

Ձախ շրջադարձեր

Ձախ շրջադարձ կատարելու համար

Ձախ շրջադարձի օրինակ:

- Վարեք դեպի կենտրոնի բաժանարարը կամ ձախ շրջադարձի գոտին:
  - — Բացման մոտ մտեք նշված ձախ շրջադարձի գոտի: Մի՛ հատեք որևէ հոծ գիծ:
  - — Մուտք գործե՛ք երկկողմանի ձախ շրջադարձի կենտրոնական գոտի՝ շրջադարձից 200 ֆուտ հեռավորության վրա: Հարգե՛ք արդեն երթևեկելի գոտում գտնվող ցանկացած տրանսպորտային միջոցի, հեծանվորդի կամ մոտոցիկլավարի երթևեկելու իրավունքը: Միշտ զիջեք հետիոտներին:
- Սկսեք ազդանշանել շրջադարձ կատարելուց 100 ֆուտ առաջ:
- Հետ նայեք ձախ ուսի վրայով և նվազեցրեք արագությունը:
- Կանգ առեք սահմանագծին չհասած: Եթե սահմանագիծ չկա, կանգ առեք նախքան հետիոտնային անցում մտնելը: Եթե հետիոտնային անցում չկա, կանգ առեք նախքան խաչմերուկ մտնելը:
- Նայեք աջ ու ձախ և կատարեք շրջադարձն այն ժամանակ, երբ անվտանգ է:
- Շրջադարձ կատարելիս շարունակեք շարժվել դեպի խաչմերուկը ձախ գոտում Ձեր շրջադարձն ավարտելու համար:
- Ձախ թեքվելիս ղեկը շատ շուտ մի պտտեք և մտեք հանդիպակաց տրանսպորտային միջոցների գոտի:
  - — Անիվները ուղիղ պահեք այնքան ժամանակ՝ մինչև շրջադարձ կատարելն անվտանգ կլինի: Եթե անիվները դեպի ձախ թեքված լինեն, և հետևից Ձեզ որևէ տրանսպորտային միջոց հարվածի, Դուք կարող եք հայտնվել հանդիպակաց երթևեկության մեջ:
- Սահուն բարձրացրեք արագությունը շրջադարձի ընթացքում և դրանից հետո:
- Թույլ տվեք, որ ղեկը ուղղվի նոր գոտում:

Ձախ շրջադարձ կարմիր լույսի ներքո

Դուք կարող եք կարմիր լույսի ներքո ձախ թեքվել միայն այն ժամանակ, երբ շրջադարձ եք կատարում միակողմանի փողոցից դեպի մեկ այլ միակողմանի փողոց: Ստուգեք՝ համոզվելու համար, որ չկա շրջադարձն արգելող որևէ նշան: Զիջեք մյուս տրանսպորտային միջոցներին, հետիոտներին կամ հեծանվորդներին, ովքեր ընթանում են կանաչ լույսի ներքո: Նայեք աջ ու ձախ և կատարեք շրջադարձն այն ժամանակ, երբ անվտանգ է:

ՀԵՏԱԴԱՐՁԵՐ

Հետադարձն այն է, երբ Ձեր տրանսպորտային միջոցը շրջում եք Ձեր եկած ուղղությամբ հետ գնալու համար: Հետադարձ կատարելու համար ազդանշան տվեք և զբաղեցրեք ձախ գոտին կամ ծայրամասային ձախ գոտին: Հետադարձ կարող եք կատարել՝

- Կրկնակի դեղին գծի վրայով:
- Բնակելի թաղամասում, եթե 200 ֆուտի սահմաններում Ձեզ տրանսպորտային միջոցներ չեն մոտենում:
- Խաչմերուկում լուսացույցի կանաչ լույսի կամ կանաչ սլաքի տակ, եթե ճանապարհի վրա «NO U-TURN» նշան չկա:
- Բաժանարար գոտով երկկողմանի ճանապարհի վրա միայն այն դեպքում, երբ կենտրոնական բաժանարար գծի վրա առկա է բացվածք:

Երբեք հետադարձ մի կատարեք՝

- Այնտեղ, որտեղ ճանապարհի վրա տեղադրված է (NO U-TURN) նշանը.
- Երկաթուղային գծանցների վրա կամ դրանց մոտակայքում:
- Բաժանարար գոտիով երկկողմանի ճանապարհի վրա՝ հատելով բաժանարար գիծը, ճամփեզրը, հողի շերտը կամ երկու զույգ կրկնակի գծերը:
- Երբ Դուք հստակ չեք տեսնում Ձեզնից 200 ֆուտ հեռավորության վրա՝ յուրաքանչյուր ուղղությամբ :
- Միակողմանի փողոցում.
- Հրշեջ կայանի դիմաց: Հետադարձ կատարելու համար երբեք մի՛ օգտագործեք հրշեջ կայանի ուղեմուտքը:
- Գործարար թաղամասերում (քաղաքի այն հատվածը, որտեղ տեղակայված է գրասենյակների և ձեռնարկությունների մեծ մասը):
  — Բացառությամբ խաչմերուկների կամ երկկողմ երթևեկությամբ մայրուղու վրա, որտեղ ճանապարհագիծ է տրամադրվել:

Շրջադարձերի օրինակներ

Ստորև բերված նկարագրությունները վերաբերում են նկարներում պատկերված մեքենաների կողմին գտնվող թվերին: Ուշադիր եղեք՝ նկատելու այն հետիոտներին, մոտոցիկլետավարներին և հեծանվորդներին, ովքեր գտնվում են Ձեր տրանսպորտային միջոցի և մայթեզրի միջև: Շրջադարձեր կատարելիս կարող են լինել նշաններ կամ սլաքներ, որոնք ցույց են տալիս, որ Դուք կարող եք շրջադարձ կատարել այն ավարտել մեկից ավելի գոտիներում:



1. Ձախ շրջադարձ երկկողմանի երթևեկությամբ փողոցից: Շրջադարձը սկսեք այն ձախ գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին: Բախման վտանգը նվազեցնելու համար շրջադարձն ավարտեք այն ձախ գոտում, որն ամենամոտն է Ձեր երթևեկության ուղղության հետ համընկնող փողոցի կենտրոնին:

2. Աջ շրջադարձ: Շրջադարձը սկսեք և ավարտեք աջակողմյան մայթեզրին ամենամոտ գոտում: Մի՛ կատարեք մեծ շառավղով շրջադարձ՝ մեկ այլ երթևեկության գոտի մտնելիս:



3. Ձախ շրջադարձ երկկողմանի երթևեկությամբ փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք այն գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին (ծայրամասային ձախ գոտի): Եթե Ձեր երթևեկության ուղղությանը համընկնող երեք կամ ավելի գոտի կա, Դուք Ձեր շրջադարձն կարող եք ավարտել դրանցից ցանկացածում, եթե այն բաց է:



4. Ձախ շրջադարձ միակողմանի փողոցից դեպի երկկողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ծայրամասային ձախ գոտուց: Բախման վտանգը նվազեցնելու համար շրջադարձն ավարտեք այն ձախ գոտում, որն ամենամոտն է Ձեր երթևեկության ուղղության հետ համընկնող փողոցի կենտրոնին:

5. Ձախ շրջադարձ միակողմանի փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ծայրամասային ձախ գոտուց: Հեծանվորդները կարող են օրինական կերպով օգտագործել ձախ շրջադարձի գոտին իրենց ձախ շրջադարձերի համար: Եթե Ձեր երթևեկության ուղղությանը համընկնող երեք կամ ավելի գոտի կա, Դուք Ձեր շրջադարձն կարող եք ավարտել դրանցից ցանկացածում, եթե այն բաց է:



6. Աջ շրջադարձ միակողմանի փողոցից դեպի միակողմանի փողոց: Շրջադարձը սկսեք ծայրամասային աջ գոտուց: Անվտանգ լինելու դեպքում կարող եք շրջադարձն ավարտել ցանկացած գոտում:



7. Շրջադարձ T-ածև խաչմերուկում՝ միակողմանի փողոցից դեպի երկկողմանի փողոց: Խաչմերուկով ուղիղ երթևեկողներն ունեն երթևեկելու առավելություն: Կարող եք և՛ աջ, և՛ ձախ շրջադարձ կատարել կենտրոնական գոտուց:



Արգելակում

- Ոտքը հեռացրեք արագացուցիչից և թույլ տվեք, որ մեքենայի ընթացքը դանդաղի: Թեթև սեղմեք արգելակը՝ մինչև լիովին կանգ կառնեք: Բավականաչափ տարածք և ժամանակ հատկացրեք այս մանևրը կատարելու համար:
- Սահմանային գծի մոտ կանգ առնելիս մի հատեք գիծը: Տրանսպորտային միջոցի հետևում կանգ առնելիս՝ բավականաչափ տարածություն թողեք, որպեսզի կարողանաք տեսնել նրանց հետևի անիվները:

ՄԻԱՁՈՒԼՈՒՄ և ԵԼՔ

Միաձուլում

Մայրուղով ընթացող տրանսպորտային միջոցներն ունեն առավելություն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Երթևեկության առավելության կանոնները. ո՞վ է առաջինը»՝ բաժին 7-ում: Մայրուղի մտնելիս Ձեզ հարկավոր է՝

- Դուրս գալ համապատասխան երթևեկելի գոտի մայրուղու ելքից:
- Մտնել երթևեկության արագությամբ կամ դրան մոտ արագությամբ:
- Միաձուլվել մայրուղու երթևեկության հետ, երբ ապահով է: Չկանգնել, եթե խիստ անհրաժեշտ չէ:
- Միաձուլվել բավականաչափ մեծ հեռավորության վրա, որպեսզի Ձեր տրանսպորտային միջոցը ապահով կերպով միանա գոտուն:
- Օգտվել հայելիներից և շրջադարձի ազդանշանների՝:
- Երթևեկության գոտիները փոխելուց կամ երթևեկության հոսքին միաձուլվելուց առաջ արագ շրջել Ձեր գլուխը և ուսի վրայով ետ նայել:
- Համոզվել, որ կարող եք ապահով կանգ առնել՝ Ձեր և Ձեր առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև թողնելով 3 վայրկյանի չափ տարածություն (երեք վայրկյանի կանոն):
- Համոզվեք, որ երթևեկության գիծ մտնելիս չեք հատում որևէ հոծ գիծ: Եթե Ձեզ պետք է մի բանի գոտի հատել, ազդանշան տվեք և հատեք դրանք հերթով: Ամեն անգամ ստուգեք Ձեր կույր կետերը՝ տրանսպորտային միջոցներից, մոտոցիկլավարներից, հեծանվորդներից և հետիոտներից զգուշանալու համար:

ԵԼՔ

Մայրուղուց անվտանգ դուրս գալու համար՝

- Իմացեք Ձեր ելքը և ուշադիր եղեք, թե երբ է այն մոտենում:
- Եթե նախատեսում եք փոխել գոտին, արեք դա մեկ առ մեկ: Ազդանշան տվեք և հայացք նետեք Ձեր ուսի վրայով՝ Ձեր կույր գոտիները ստուգելու համար:
- Երբ գտնվում եք համապատասխան գոտում, ազդանշան տվեք դուրս գալուց հինգ վայրկյան (մոտ 400 ֆուտ) առաջ:
- Համոզվեք, որ դուրս եք գալիս անվտանգ արագությամբ:
- Դուրս գալիս մի հատեք հոծ գծերը:

Երթևեկության հատում կամ մուտք դեպի երթևեկություն

Լրիվ կանգ առած վիճակից երթևեկություն մտնելիս ազդանշան տվեք և բավականաչափ մեծ տարածք թողեք՝ մյուս տրանսպորտային միջոցների արագությանը հասնելու համար: Երթևեկության հետ միաձուլվելու, մուտք գործելու և դուրս գալու համար Ձեզ անհրաժեշտ է տարածություն, որը մոտավորապես հավասար է՝

- Քաղաքային փողոցի կես բլոկի՝ մոտ 150 ֆուտ:
- Մայրուղու ամբողջական բլոկի՝ մոտ 300 ֆուտ:

Նույնիսկ լուսացույցի կանաչ լույսի տակ մի՛ սկսեք հատել խաչմերուկը, եթե Ձեր ճանապարհը փակող հետիոտներ կամ տրանսպորտային միջոցներ կան:

Ձախ թեքվելիս մի ենթադրեք, որ միացրած աջ շրջադարձային ազդանշանով հանդիպակաց տրանսպորտային միջոցը շրջադարձ կկատարի մինչև Ձեզ հասնելը: Վարորդը կարող է պլանավորել շրջադարձ կատարել Ձեզնից անմիջապես հետո, կամ հնարավոր է, որ ազդանշանը անզգուշությամբ է միացրել: Նախքան ձախ շրջադարձ կատարելը սպասեք մինչև տրանսպորտային միջոցը սկսի իր շրջադարձը:

ՎԱՁԱՆՑ

Դուք պետք է որոշեք՝ բավարար տարածություն ունե՞ք վազանց կատարելու համար, երբ մոտենում եք՝

- Հանդիպակաց տրանսպորտային միջոցի կամ հեծանվորդի:
- Բլրի, ոլորանի, խաչմերուկի կամ ճանապարհային արգելքի: Բլուրը կամ ոլորանն ապահով անցնելու համար պետք է Ձեր առջև ընկած լինի առնվազն մեկ երրորդ մղոն տարածություն:

Նախքան վազանց կատարելը ուշադրություն դարձրեք ճանապարհային պայմանների, որոնք կարող են հանգեցնել այլ տրանսպորտային միջոցների մուտքին Ձեր գոտի:

Արգելվում է վազանցել՝

- Եթե մոտենում եք բլրի կամ ոլորանի և չեք կարող նկատել մոտեցող այլ տրանսպորտային միջոցների: Հատկապես վտանգավոր է մեկ և երկու գոտի ունեցող ճանապարհներին:
- Խաչմերուկից, կամրջից, թունելից, երկաթուղու գծանցումից կամ այլ վտանգավոր տարածքից 100 ֆուտ հեռավորության վրա:
- Խաչմերուկներում և ուղեմուտքերում:
- Մինչև համոզված չլինեք, որ բավարար չափով տարածություն ունեք Ձեր գոտի վերադառնալու համար:

Ինչպես վազանցել

Երբ պատրաստվում եք վազանցել բաց մայրուղով՝

- Ազդանշան տվեք, որ պատրաստվում եք վազանցել:
- Հայացք նետեք Ձեր ուսի վրայով Ձեր կույր գոտիները ստուգելու համար:
- Շարժվեք դեպի վազանցի գոտի:
- Մեծացրեք արագությունը՝ վազանցելու տրանսպորտային միջոցը:
- Ազդանշան տվեք և վերադարձեք Ձեր առաջնային գոտի:

Աջից վազանցը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ՝

- Բաց մայրուղին Ձեր երթևեկության ուղղությամբ հստակ ունի երկու կամ ավելի երթևեկության գոտի:
- Առջևում գտնվող վարորդը թեքվում է ձախ, և Դուք կարող եք ապահով անցնել աջ կողմով: Երբեք ձախից վազանց մի կատարեք, եթե դիմացի տրանսպորտային միջոցը ձախ շրջադարձի ազդանշան է տալիս:
- Դուք չեք գտնվում միակողմանի փողոցում:

Վազանց կատարելու համար երբեք դուրս մի եկեք ճանապարհի ասֆալտապատ կամ բանուկ մասից:

Երբ Ձեզ վազանցում են

Եթե տրանսպորտային միջոցը վազանցում է Ձեզ կամ ազդանշան է տալիս, որ պատրաստվում է վազանցել, թույլ տվեք, որ տրանսպորտային միջոցն անցնի: Պահպանեք գոտում ունեցած Ձեր դիրքը և Ձեր արագությունը:

ԿԱՅԱՆՈՒՄ

Զուգահեռ կայանում

Զուգահեռ կայանման ժամանակ Դուք կայանում եք ճանապարհի և այլ կայանված տրանսպորտային միջոցների հետ մի գծով: Զուգահեռ կայանելու համար



1. Գտեք տարածք: Փնտրեք Ձեր տրանսպորտային միջոցից առնվազն 3 ֆուտով ավելի երկար տարածք: Երբ գտնեք տարածք, միացրեք Ձեր ազդանշանը՝ ցույց տալու, որ պլանավորում եք կայանել:



2. Շարժվեք տրանսպորտային միջոցի երկայնքով այն տարածքի դիմաց, որտեղ կայանելու եք: Թողեք մոտ երկու ֆուտ տարածք Ձեր տրանսպորտային միջոցի և Ձեր կողքին գտնվող մեքենայի միջև: Կանգնեք այնպես, որ Ձեր հետևի բամպերը հավասարվի Ձեր կայանատեղիի դիմային հատվածին: Միացրած թողեք Ձեր ազդանշանը:
3. Ստուգեք Ձեր կույր գոտիները: Նայեք Ձեր հետևի հայելու մեջ և Ձեր ուսի վրայով՝ տեսնելու մոտեցող տրանսպորտային միջոցներն և հետնիոտներին:
4. Սկսեք հետընթաց շարժվել: Պտտեք ղեկը 45 աստիճանի անկյան տակ հետընթաց կատարելու համար:



5. Ուղղեք տրանսպորտային միջոցը: Սկսեք ղեկը պտտելով հեռանալ եզրաքարից, երբ հետևի անիվը գտնվում է եզրաքարից 18 դյույմ հեռավորության վրա: Ուղղվելու համար գուցե հարկ լինի առաջ ու հետ քշել: Ձեր տրանսպորտային միջոցը պետք է լինի եզրաքարին զուգահեռ և եզրաքարից մինչև 18 դյույմ հեռավորության վրա:

Անջատեք Ձեր տրանսպորտային միջոցի շարժիչը և միացրեք կայանման արգելակը: Նախքան Ձեր տրանսպորտային միջոցից դուրս գալը ստուգեք անցնող տրանսպորտային միջոցների, հեծանիվների և մոտոցիկլետների առկայությունը: Դուրս եկեք, երբ անվտանգ է:

Հետընթաց ողիղ գծի վրա

Ուղիղ գծի վրա հետընթաց կատարելու համար՝

1. Ստուգեք երթևեկությունը: Ստուգեք երթևեկությունը և համապատասխան կույր գոտիները:
2. Ազդանշան տվեք: Ակտիվացրեք շրջադարձի ազդանշանը նախքան եզրաբարին մոտենալը: Շրջադարձից հետո անջատեք շրջադարձի ազդանշանը:
3. Ստուգեք Ձեր կույր գոտիները: Նայեք Ձեր հետևի հայելու մեջ և Ձեր ուսի վրայով՝ տեսնելու մոտեցող տրանսպորտային միջոցներն և հետիոտներին
4. Սկսեք հետընթաց շարժվել: Հետ շարժվեք ուղիղ գծով՝ մեքենայի երեք երկարության չափով՝ մնալով եզրաբարից երեք ոտնաչափ հեռավորության վրա: Հետ շարժվելիս ուշադիր եղեք, թե ինչ կա Ձեր հետևում:
5. Կառավարում Մեքենայի կառավարումը պահպանելու համար հետ դարձրեք սահուն, անվտանգ արագությամբ և անհրաժեշտության դեպքում կարգավորեք ղեկը: Փորձեք այնքան ժամանակ, մինչև կարողանաք մեքենան ուղիղ պահել: Կրկնեք 1-ին և 2-րդ քայլերը՝ եզրաբարից հեռանալու համար:

Զառիվայր Ճանապարհին Կայանելը

Երբ կայանում եք բլրի վրա, Ձեր մեքենան կարող է անսարքության պատճառով գլորվել ներքև: Հիշեք միշտ գործի գցել կայանման արգելակը և փոխանցման տուփը դնել «կայանում» ռեժիմի վրա: Կայանելու համար



Դեպի ներքև. անիվները թեքել դեպի եզրաբարը:
Դեպի վերև. անիվները թեքել դեպի եզրաբարը:
Եզրաբար չկա. անիվները թեքել դեպի ճամփեզրը:

- Թեք ճանապարհին. թեքեք անիվները այնպես, որ տրանսպորտային միջոցը փողոց չգլորվի, մեքենայի շարժիչը միացրած թողեք և փոխանցման տուփը դրեք «կայանում» ռեժիմի վրա:
- Զառիվայր ճանապարհի վրա. առջևի անիվները թեքեք դեպի եզրաբարը կամ ճանապարհի եզրը:
- Զառիվեր ճանապարհին. առջևի անիվները հեռու շրջեք եզրաբարից (ձախ կողմ՝ դեպի ճանապարհի կենտրոն) և թողեք, որ Ձեր տրանսպորտային միջոցը մի քանի դյույմ հետ գլորվի: Անիվը պետք է թեթև հպվի եզրաբարին:
- Զառիվեր կամ զառիվայր ճանապարհի վրա, որը եզրաբարեր չունի. Պտտեք անիվները աջ, որպեսզի մեքենան դուրս գա ճանապարհի կենտրոնից, եթե արգելակները պատշաճ չաշխատեն:

Ներկված Եզրաքարերի Մոտ Կայանելը

Տարբեր գույներով ներկված եզրաքարերն ունեն կայանման հատուկ կանոններ:

- Սպիտակ.կանգնե՛ք միայն այնքան, որքան անհրաժեշտ է ուղևոր վերցնելու կամ իջեցնելու համար:
- Կանաչ. կայանե՛ք սահմանափակ ժամանակով: Ժամանակի սահմանաչափը կարող է նշվել նշանների կամ եզրաքարի վրա:
- Դեղին. բեռների բեռնում, բեռնաթափում և ուղևորներին վերցնել ու իջեցնել: Մի՛ կանգնեք սահմանված ժամանակից ավելի երկար: Եթե Դուք ոչ առևտրային տրանսպորտային միջոց եք վարում, Ձեզնից սովորաբար պահանջվում է մնալ Ձեր տրանսպորտային միջոցի կողքին:

- Կարմիր. կանգ առնելը կամ կայանումն արգելված է: Ավտոբուսները կարող են կանգնել ավտոբուսների համար գծանշված կարմիր գոտում:

Սավերագծված (շեղ գծերով) տարածքի օրինակ՝

- Կապույտ. կայանատեղին հաշմանդամ անձի կամ հատուկ նշան կամ համարանիշ ունեցող՝ հաշմանդամին տեղափոխող անձի համար է:
  — Հաշմանդամների կայանման հատուկ նշանների և պետհամարանիշների մասին ավելին իմանալու համար այցելեք **dmv.ca.gov/disabled-person- parking:**

Կայանումն արգելվում է

Երբեմ մի կայանեք կամ թողեք Ձեր տրանսպորտային միջոցը՝

- Այնտեղ, որտեղ տեղադրված է Կայանումն արգելվում է (NO PARKING) նշանը:
- Գծանշված կամ չգծանշված անցուղու վրա:
- Մայթի վրա՝ մասամբ մայթը փակելով, կամ ուղեմուտքերի դիմաց:
- Մայթի՝ հաշմանդամների համար նախատեսված թեքահարթակից մինչև 3 ֆուտ հեռավորության վրա:
- Եզրաքարի առջև կամ եզրաքարի վրա, որն ապահովում է անվասայլակների մուտքը մայթ:
- Հաշմանդամների համար առանձնացված կայանատեղի մոտ գտնվող ստվարագծված (շեղ գծեր) տարածքում:
- Այն վայրում, որը նախատեսված է զրոյական արտանետման տրանսպորտային միջոցների կայանման կամ լիցքավորման համար, եթե չեք վարում զրոյական արտանետում ունեցող տրանսպորտային միջոց:
- Թունելում կամ կամրջի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ թույլատրող նշաններ կան:
- Հրշեջ հիդրանտի կամ հրշեջ կայանի ուղեմուտքից մինչև 15 ֆուտ հեռավորության վրա:
- Ցնցված կամ գծանշված հետիոտնային անցումից 20 ոտնաչափ հեռավորության վրա կամ 15 ոտնաչափ հեռավորության վրա այն անցումից, որտեղ առկա է եզրաքարի երկարացում:
- Անվտանգության գոտու և եզրաքարի միջև:
- Երկրորդ շարքում կայանում

- Փողոցի սխալ կողմում կամ մայրուղու վրա, բացառությամբ,
  - — երբ արտակարգ իրավիճակ է ստեղծվել,
  - — երբ իրավապահը պահանջում է կանգ առնել,
  - — երբ կայանումը թույլատրված է:

Եթե ստիպված եք կանգ առնել մայրուղու վրա, կայանեք երթևեկելի մասից ամբողջովին դուրս և մնացեք տրանսպորտային միջոցի մեջ դռները փակ վիճակում,մինչև օգնությունը տեղ հասնի: Ավելի քան 4 ժամ մայրուղու վրա կանգնեցված, կայանված կամ թողած տրանսպորտային միջոցը կարող են հեռացնել:

Էլեկտրական տրանսպորտային միջոցներ

Տեղական իշխանությունները կարող են հանրային փողոցում նախատեսել ավտոկայանատեղեր էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման համար:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՎԱՐՈՒՄ

Առավելագույնի հասցրեք Ձեր վառելիքի արդյունավետությունը՝ միաժամանակ օգնելով նվազեցնել արտանետումների քանակը՝ հետևելով հետևյալ քայլերին՝

- արագացրեք և դանդաղեցրեք Ձեր ընթացքը սահուն կերպով, երթևեկեք հաստատուն արագությամբ:
- պարբերաբար փչեք Ձեր անվադողերը, վոխեք մեքենայի յուղը և ստուգեք ֆիլտրերը:
- ազատվեք Ձեր տրանսպորտային միջոցում առկա ավելորդ բեռից:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **fueleconomy.gov** կայք:

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԿԱՆԳՆԵՑՆՈՒՄԸ

Իրավապահ մարմինների կոմից կանգնեցվելու դեպքում

- Միացրեք Ձեր աջ շրջադարձային ազդանշանը՝ հաստատելու, որ տեսնում եք ոստիկանին:
- Ամբողջովին տեղափոխվեք դեպի աջ ճամփեզր, նույնիսկ եթե գտնվում եք *carpool*/HOV գոտում: Հնարավորության դեպքում կանգ առեք լավ լուսավորված վայրում:
- Անջատեք ռադիոն:
- Մնացեք Ձեր տրանսպորտային միջոցի ներսում, եթե ոստիկանի կողմից հրահանգված չէ դուրս գալ:
- Իջեցրեք պատուհանները՝ Ձեր տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց հետո, մինչև ոստիկանը Ձեզ հետ կապ կհաստատի:
- Վարորդը և բոլոր ուղևորները պետք է իրենց ձեռքերը երևացող տեղում դնեն՝նախքան ոստիկանի Ձեզ հետ կապ հաստատելը:

Իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է ճշեն երթևեկության կամ հետիոտնային կանգառի պատճառը, նախքան բրեական հետաքննության կամ երթևեկության կանոնների խախտման հետ կապված որևէ հարցաքննություն սկսելը: Բացառություն է արվում, եթե պաշտոնյան խելամտորեն կարծում է, որ պատճառը չհայտնելը անհրաժեշտ է կյանքը կամ գույքը անխուսափելի սպառնալիքից պաշտպանելու համար: Կանգառի պատճառը պետք է փաստաթղթավորված լինի

երթևեկության կանոնների խախտման համար կազմված երթևեկության կանոնների խախտման արձանագրության՝ հայտնի նաև որպես կանոնների խախտման տուգանք, կամ իրավապահ մարմինների կողմից լրացված արձանագրության մեջ:

Ձեր իրավունքները՝ օրինապահ մարմինների կողմից կանգնեցվելու դեպքում

Եթե ոստիկանության աշխատակիցը թույլտվություն է խնդրում ինչ-որ բան անել, Դուք իրավունք ունեք մերժել: Սակայն, եթե Դուք մերժեք, իսկ ոստիկանության աշխատակիցը պնդի, որ իրենք, միևնույն է, պետք է անեն դա, Դուք իրավունք չունեք միջամտել նրանց գործողություններին: Օրինակ՝ ոստիկանության աշխատակիցը կարող է պահանջել խուզարկել Ձեր տրանսպորտային միջոցն ամբողջությամբ կամ մասամբ: Դուք իրավունք ունեք մերժել այդ հայտը, սակայն, որոշակի հանգամանքներում, ոստիկանը կարող է օրինական լիազորություն ունենալ Ձեր փոխադրամիջոցը խուզարկելու համար: Եթե չեք ցանկանում, որ ոստիկանը հետախուզի Ձեր փոխադրամիջոցը, պետք է հստակ նշեք, որ չեք տալիս թույլտվություն, սակայն իրավունք չունեք դիմադրել կամ խոչընդոտել ոստիկանին, եթե խուզարկեն Ձեր փոխադրամիջոցը:

Կանգնած տրանսպորտային միջոցի վարորդը, երբ կանգնեցվում է իրավապահ մարմինների կողմից, պետք է ներկայացնի վարորդական վկայականը, ապահովագրության և տրանսպորտային միջոցի հաշվառման վկայականները: Եթե վարորդը չներկայացնի այդ փաստաթղթերը, ոստիկանության աշխատակիցները կարող են անցկացնել սահմանափակ խուզարկում: Ոստիկանության աշխատակիցը կարող է նաև պահանջել ուղևորների անունները կամ ինքնության հաստատում: Ուղևորները կարող են մերժել այդ հայտը, սակայն, որոշ հանգամանքներում, ուղևորներից կարող է պահանջվել ինքնության հաստատում: Ուղևորները կարող են մերժել այս պահանջը, սակայն որոշ դեպքերում հնարավոր է ուղևորներին նույնականացնելու անհրաժեշտությունը լինի: Եթե ուղևորները չեն ցանկանում ներկայացնել իրենց անձը հաստատող փաստաթղթերը, նրանք պետք է հստակ հայտարարեն այդ մասին: Ուղևորները տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ժամանակ չպետք է խոչընդոտեն ոստիկանության աշխատակցի պարտականություններին, իսկ եթե ոստիկանության աշխատակիցը պահանջում է անձի հաստատում, ուղևորները չպետք է խոչընդոտեն ոստիկանության աշխատակցի գործողություններին: Երթևեկության կանգնեցման ժամանակ ոստիկանը կարող է վարորդից և բոլոր ուղևորներից պահանջել դուրս գալ կամ մնալ տրանսպորտային միջոցի մեջ: Եթե Ձեզնից պահանջում են դուրս գալ տրանսպորտից կամ մնալ ներսում, ապա պետք է ենթարկվեք:

Կալիֆոռնիայում միայն դաշնային իրավապահ մարմինները կարող են հարցնել Ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Կալիֆոռնիայի օրենքն արգելում է նահանգային և տեղական ոստիկանության աշխատակիցներին՝ վարորդներին կամ ուղևորներին հարցնել նրանց ներգաղթի կարգավիճակի մասին: Եթե Կալիֆոռնիայի իրավապահները Ձեզ հարցնեն Ձեր ներգաղթի կարգավիճակի մասին, Դուք կարող եք հրաժարվել պատասխանելուց:

Ընդհանուր առմամբ, առաջին փոփոխությունը պաշտպանում է վարորդների և ուղևորների՝ ոստիկանության հետ փոխհարաբերությունները հասարակական վայրերում ձայնագրելու իրավունքը: Եթե ձայնագրում եք, ապա պետք է անմիջապես պարզաբանեք դա: Դուք իրավունք չունեք խոչընդոտելու ոստիկանության աշխատակցի օրինական պարտականություններին հարկադիր կանգնեցման ժամանակ, և Դուք չպետք է մուտք գործեք թաքնված տարածքներ՝ վերցնելու ձայնագրող սարք՝ առանց ոստիկանության աշխատակցի թույլտվության: Եթե Ձեր ձայնագրման գործողությունը չի խանգարում ոստիկանության աշխատակցին օրինական կերպով կատարել իր աշխատանքը, ոստիկանության աշխատակիցը չի կարող առգրավել Ձեր ձայնագրող սարքը, ջնջել ձայնագրությունը կամ ոչնչացնել սարքը միայն այն պատճառով, որ Դուք օգտագործում եք այն ձայնագրելու համար: Ընդհանուր առմամբ, Դուք նաև իրավունք ունեք մերժել բջջային հեռախոսը արգելափակումից հանելու կամ դրա գաղտնաբառը տրամադրելու պահանջը, թեև որոշ դեպքերում, օրինակ, եթե Դուք գտնվում եք պայմանական-վաղաժամկետ ազատման մեջ, հավանաբար, հարկադրված կլինեք ընդունել պահանջը: Վերջապես, ոչ մի պետական ծառայող չի կարող հաշվեհարդար տեսնել Ձեզ հետ միայն այն բանի համար, որ Դուք հրապարակով ինչ-որ բան եք ձայնագրել:

Նույնիսկ եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտել են, Դուք չպետք է ֆիզիկական դիմադրություն ցույց տաք կամ բռնության ենթարկեք ոստիկանության աշխատակցին: Եթե ոստիկանության աշխատակցի արարքը Ձեր կարծիքով խախտում է Ձեր իրավունքները, Դուք կարող եք արտահայտել Ձեր առարկությունը, բայց չպետք է ֆիզիկապես դիմադրեք: Ցուրաքանչյուր ոք երթևեկության կանգնեցման ժամանակ ապահով լինելու իրավունք ունի: Ձեր և ոստիկանի անվտանգությունը կարող է վտանգվել, եթե ֆիզիկական դիմադրության կամ բռնության արդյունքում իրավիճակը սրվի:

Հասարակության բոլոր ներկայացուցիչներն իրավունք ունեն բողոք ներկայացնել ոստիկանության կամ իրավապահ մարմնի ցանկացած աշխատակցի դեմ, և պետական ոչ մի ծառայող իրավունք չունի դրա համար վրեժխնդիր լինելու: Դուք կարող եք բողոք ներկայացնել իրավապահ մարմնին, որտեղ աշխատում է տվյալ ոստիկանության աշխատակիցը: Դուք իրավունք ունեք ազատ լինել խտրականությունից, որը հիմնված է Ձեր փաստացի կամ ենթադրյալ ռասայական պատկանելության, սեռի, մաշկի գույնի, էթնիկական պատկանելության, ազգային ծագման, տարիքի, կրոնի, գենդերային պատկանելիության կամ հնարտահայտման ձևի, սեռական կողմնորոշման, մտավոր կամ ֆիզիկական թերության, առողջական վիճակի կամ բաղաքացիության վրա: Դուք ունեք նաև այլ իրավունքներ, որոնք երաշխավորված են Միացյալ Նահանգների և Կալիֆոռնիայի սահմանադրություններով, ինչպես նաև Կալիֆոռնիայի և դաշնային օրենքներով: Երբ բողոք եք ներկայացնում, գործակալությունը, որտեղ աշխատում է աշխատակիցը, պետք է ուսումնասիրի բողոքը: Կալիֆոռնիայի իրավապահ մարմինների կոնտակտային տեղեկատվության հղումները կարող եք գտնել հետևյալ հասցեով՝ **post.ca.gov/le-agencies:**

DMV ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐԸ

Առաջարկում են Հարմարավետ Գործարքներ

Հասանելի են՝
Մթերային Խանութներում
DMV Գրասենյակներում

STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

Գտեք տերմինալ Ձեր մոտակայքում
dmv.ca.gov/kiosks

- ✓ Երկարածգեք Ձեր տրանսպորտային միջոցի գրանցումը
- ✓ Ստացեք փոխարինված գրանցման քարտը կամ կպչուն պիտակը
- ✓ Ներկայացրեք ապահովագրության վկայականը
- ✓ Դիմեք պլանավորված անգործունակության (PNO) կարգավիճակի համար
- ✓ Ձեռք բերեք Ձեր վարորդական պատմությունը և տրանսպորտային միջոցի տվյալները

Կապուտակեն լրացուցիչ գործարքներ ավելացվել՝ կիոսկների (ինքնասպասարկման տերմինալ) միջոցով մշակման համար:

ԲԱԺԻՆ 7. Ճանապարհային երթևեկության օրենքները եւ կանոնները

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհային ազդանշանների կամ նշանների մոտ եղած ժամանակ կամ մոտենալիս՝ զիջե՛ք հետիոտների, հեծանվորդների և մոտակա այլ տրանսպորտային միջոցների, որոնք կարող են ճանապարհի առավելություն ունենալ: Տե՛ս «Երթևեկության առավելության կանոններ. ո՞վ է առաջինը»՝ այս բաժնում:

Ճանապարհային ազդանշաններ

Հոծ կարմիր լույս

Լուսացույցի կարմիր լույսը նշանակում է՝ կանգ առնել (STOP): Կարմիր լույսի ներքո կարող եք աջ շրջադարձ կատարել, եթե՝

- Չկա NO TURN ON RED (Կարմիրի միացում չկա) նշան
- Դուք կանգ եք առնում կանգառի կամ սահմանափակման գծի մոտ, զիջում եք հետիոտներին և շրջվում, երբ ապահով է:

Կարմիր սլաք

Կարմիր սլաքը նշանակում է՝ Կանգ Առ: Կարմիր սլաքի ներքո շրջադարձ մի՛ կատարեք: Տեղից մի շարժվեք, մինչև չվառվի կանաչ լույսը կամ չհայտնվի կանաչ սլաքը:

Թարթող կարմիր լույս

Լուսացույցի թարթող կարմիր լույսը նշանակում է՝ Կանգ Առ: Կանգ առնելուց հետո կարող եք շարժվել, երբ ապահով է:

Հոծ դեղին լույս

Լուսացույցի դեղին լույսը նշանակում է՝ Զգուշացեք: Լույսը շուտով կարմիր է դառնում: Դեղին լույսը տեսնելիս կանգ առեք, եթե անվտանգ է: Եթե կանգ առնելն անվտանգ չէ, զգուշորեն անցեք խաչմերուկը:

Դեղին սլաք

Դեղին սլաքը նշանակում է, որ շրջադարձ կատարելու «պաշտպանված» ժամանակը սպառվում է: Շուտով ազդանշանը կփոխվի: Եթե չեք կարող ապահով կանգ առնել կամ արդեն խաչմերուկում եք, զգուշորեն կատարեք Ձեր շրջադարձը: Ուշադրություն դարձրեք հաջորդ ազդանշանին: Կարող է լինել՝

- Լուսացույցի կանաչ կամ կարմիր լույս:
- Կարմիր սլաք

Թարթող դեղին լույս

Լուսացույցի թարթող դեղին լույսը նախազգուշացում է՝ ԳՈՐԾԵՔ ԶԳՈՒՇՈՐԵՆ: Դանդաղեցրեք Ձեր ընթացքը և զգոն եղեք: Պետք չէ կանգ առնել:

Թարթող դեղին սլաք

Դուք կարող եք շրջվել, բայց Ձեր շրջադարձը պաշտպանված չէ մնացյալ երթևեկությունից: Հանդիպակաց երթևեկությանը զիջելուց հետո շարունակեք զգուշորեն թեքվել ձախ:

Հոծ կանաչ լույս

Լուսացույցի կանաչ լույսը նշանակում է՝ ԳՆԱՑԵՔ: Դուք դեռ պետք է կանգ առնեք խաչմերուկում գտնվող ցանկացած տրանսպորտային միջոցի, հեծանվորդի կամ հետիոտնի համար: Շարունակեք միայն այն դեպքում, եթե ունեք բավարար տարածք՝ առանց վտանգ ներկայացնելու հանդիպակաց մեքենայի, հեծանվորդի կամ հետիոտնի համար: Մուտք մի գործեք խաչմերուկ, եթե չեք հասցնելու այն ամբողջությամբ հատել մինչև լուսացույցի կարմիր լույսի վառվելը:

Կանաչ սլաք

Կանաչ սլաքը նշանակում է ԳՆԱՑԵՔ այն ուղղությամբ, որին ուղղված է սլաքը: Կանաչ սլաքը թույլ է տալիս «պաշտպանված» շրջադարձ կատարել: Մոտեցող տրանսպորտային միջոցները կանգ են առնում կարմիր լույսի ներքո:

Երբ լուսացույցը չի աշխատում

Երբ լուսացույցը չի աշխատում, կանգ առեք այնպես, ինչպես կշարժվեիք, եթե խաչմերուկը բոլոր ուղղություններով կառավարվեր STOP (ԿԱՆԳ) նշաններով: Այնուհետև զգուշորեն շարունակեք Ձեր ընթացքը, երբ անվտանգ է:

Հետիոտների ազդանշաններ կամ նշաններ

WALK (ՔԱՅԼԵ) կամ Քայլող Մարդ

Կարող եք փողոցն անցնել:

DON'T WALK (ՄԻ՛ ՔԱՅԼԵ) կամ Բարձրացված Ձեռք

Չի կարելի փողոցն անցնել:

Թարթող DON'T WALK (ՄԻ՛ ՔԱՅԼԵ) կամ թարթող Բարձրացված Ձեռք

Մի՛ սկսեք անցնել փողոցը: Շուտով լուսացույցի լույսը կփոխվի: Վարորդները պետք է զիջեն հետիոտներին, նույնիսկ եթե DON'T WALK (ՄԻ՛ ՔԱՅԼԵ) լույսը թարթում է:

Թվեր

Թվերը հաշվում են, թե քանի վայրկյան է մնացել փողոցն անցնելու համար:

Անկյունագծային Անցում

Դրանք խաչաձև և անկյունագծային անցումներ են, որոնք հետիոտներին թույլ են տալիս միաժամանակ անցնել խաչմերուկը ցանկացած ուղղությամբ: Անցեք միայն այն ժամանակ, երբ WALK (ՔԱՅԼԵ) ազդանշանը թույլ է տալիս:

Ձայներ

Ձայները, ինչպիսիք են ձայնային ազդանշանը, ծլվլոցը կամ բանավոր հաղորդագրությունները, օգնում են կույր կամ տեսողության խնդիրներ ունեցող հետիոտներին անցնել փողոցը:

Հետիոտնային կոճակ

Օգտագործվում է WALK (ՔԱՅԼԵ) կամ Քայլող Մարդ ազդանշանը:

Հետիոտնային ազդանշաններ չկան

Եթե հետիոտների համար նախատեսված ազդանշաններ չկան, ապա հետևեք երթևեկությունը կարգավորող լուսացույցին:

Նշաններ

Հետևեք բոլոր նախազգուշական նշանների՝ անկախ դրանց ձևից և գույնից:

STOP (ԿԱՆԳ) նշան

Նախքան հետիոտնային անցում մտնելը կամ սահմանային գծի մոտ կանգ առեք: Եթե հետիոտնային անցում կամ սահմանային գիծ չկա, կանգ առեք նախքան խաչմերուկ մտնելը: Առաջ շարժվելուց առաջ ստուգեք երթևեկությունը՝ բոլոր ուղղություններով:

Կարմիր YIELD (ՋԻՋԵԼ) նշան

Դանդաղեցրեք Ձեր ընթացքը և պատրաստ եղեք անհրաժեշտության դեպքում կանգ առնել, որպեսզի նախքան Ձեր շարունակելը ցանկացած տրանսպորտային միջոց, հեծանվորդ կամ հետիոտն անցի:

Կարմիր և սպիտակ կարգավորիչ նշաններ

Հետադարձն արգելվում է

Ձախ շրջադարձն արգելվում է

Աջ շրջադարձն արգելվում է

Սպիտակ կարգավորիչ նշաններ

Երկկողմ երթևեկություն առջևում

Կայանումն Արգելվում է Ցանկացած

Զիջեք վերև ընթացող բրեևեկությանը

Միակողմ հանապարհ

Միայն վթարային ավտոկայանատեղի

Շրջադարձերն արգելվում են

Ձախ շրջադարձի առավելություն կանաչ լույսի

Արգելվում է վազանցել

Միակողմ հանապարհ

Միայն ձախ շրջադարձ

Ձախ շրջադարձ կամ հետադարձ

Մի՛ փակեք խաչմերուկները

Դանդաղ երթևեկություն ընթացեք աջ

Ընթացեք աջ կողմով

3 ուղի

Ճանապարհաշինարարության և տեխնիկական սպասարկման նշաններ

Երթևեկի միաձուլում դեպի ձախ

Առջևում հանապարհը փակ է

Առջևում հանապարհային տեխնիկա է

Առջևում

Ճամփեզրի աշխատանք

Հրահանգող նշաններ

Օդանավակայան

Դահուկային կայան

Հանգստի գոտի 1 մղոնից

Վտանգավոր բեռների ցուցանակներ

Դանդաղընթաց տրանսպորտային միջոց

Նախազգուշացնող նշաններ

Թաց ժամանակ սայթաքուն է

Միաձուլվող երթևեկություն

Բաժանարարով մայրուղի

Երկկողմանի երթևեկություն

Գոտին ավարտվում է

Բաժանարարով մայրուղու վերջը

Առջևում երթևեկությունը կարգավորող լուսացույցներ են

Հետիոտնային անցում

Ավելացված գոտի

Խաչմերուկ

Առջևում «Կանգ առ» է

Զիջեք ճանապարհը

Ուղղորդիչ սլաք

Ոլորան

Տ-ածև խաչմերուկում

Ոլորուն ճանապարհ

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք
dot.ca.gov.

Կարմիր և սպիտակ կարգավորիչ նշան

Հետևեք նշանի հրահանգին: Օրինակ՝ DO NOT ENTER նշանը ցույց է տալիս՝ չի կարելի մտնել այն ճանապարհը կամ իջատեղը, որտեղ նշանը տեղադրված է:

WRONG WAY նշան

Եթե շարժվում եք երթևեկությանը հակառակ ուղղությամբ, կարող եք հանդիպել DO NOT ENTER, և WRONG WAY նշանների: Երբ անվտանգ է, դուրս եկեք կամ շրջվեք: Եթե գիշերն եք տրանսպորտային միջոց վարում, կարող եք հասկանալ, որ սխալ ճանապարհով եք գնում, եթե ճանապարհի արտացոլիչները կարմիր փայլ են տալիս Ձեր ցոլալապտերների լույսի ներքո:

Կարմիր շրջան՝ կարմիր գծով

Շրջանի ներսի նկարը ցույց է տալիս այն, ինչ դուք չեք կարող անել, և այն կարող է նշվել բառերով:

Դեղին և սև շրջանաձև նշան կամ խաչաձև նշան

Դուք մոտենում եք երկաթուղու գծանցին: Նայեք, լսեք, դանդաղեցրեք ընթացքը և պատրաստվեք կանգ առնելու: Թույլ տվեք գնացքներին անցնել՝ մինչև Ձեր ընթացքը շարունակելը:

Երկաթուղային գծանցներից շատերը նաև ունեն կապույտ և սպիտակ նշան, որը ցույց է տալիս, թե ինչ անել, եթե արտակարգ իրավիճակ է ստեղծվել երկաթուղային գծերի մոտ կամ դրանց վրա, կամ եթե Ձեր տրանսպորտային միջոցը լովել է երկաթուղային գծերի վրա:

5-անկյուն նշան

Դուք դպրոցի մոտ եք: Դանդաղ քշեք և կանգ առեք անցումում երեխաների համար :

Շեղանկյունաձև նշան:

Այս նշանները նախազգուշացնում են Ձեզ ճանապարհի առանձնահատուկ պայմանների և առաջիկա վտանգների մասին:

Սպիտակ ուղղանկյուն նշան

Այս նշանները հաղորդում են շատ կարևոր կանոնների մասին, որոնց պետք է հետևել:

Նախազգուշացնող նշաններ

Այս նշանները նախազգուշացնում են հետիոտներին, հեծանվորդներին, դպրոցներին, խաղահրապարակներին, դպրոցական ավտոբուսներին և դպրոցական ուղևորների գոտիներին առնչվող պայմանների մասին:

Նշանների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
dot.ca.gov/programs/safety-programs/sign-charts:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ. Ո՞Վ Է ԱՌԱՋԻՆԸ:

Երթևեկության առավելության կանոնները օգնում են Ձեզ հասկանալ, թե ով պետք է առաջինն անցնի այն իրավիճակներում, երբ ճանապարհին հանդիպում են տրանսպորտային միջոցներ, հետիոտներ և հեծանվորդներ: Տրանսպորտային միջոցն, որն առաջինն է հասնում խաչմերուկ ունի երթևեկության առավելություն Այլ տրանսպորտային միջոցներն ու հեծանվորդները պետք է սպասեն երթևեկության առավելություն ունեցող անձին: Երբեմ մի ակնկալեք, որ մյուս վարորդները կզիջեն Ձեզ իրենց երթևեկության առավելությունը: Հրաժարվեք Ձեր երթևեկության առավելությունից, եթե դա կօգնի կանխել բախումները:

Խաչմերուկներ

Խաչմերուկն այնպիսի տեղում է, որտեղ մի ճանապարհ հանդիպում է մեկ այլ ճանապարհի: Վերահսկվող խաչմերուկներն ունեն ճանապարհային նշաններ կամ լուսացույցներ: Չվերահսկվող և փակ տեսադաշտ ունեցող խաչմերուկները՝ ոչ: Նախքան խաչմերուկ մտնելը նայեք ձախ, աջ և առաջ՝ տրանսպորտային միջոցների, հեծանվորդների և հետիոտների առկայությունը ստուգելու համար: Պատրաստ եղեք դանդաղեցնել Ձեր ընթացքը կամ անհրաժեշտության դեպքում կանգ առնել: Հետնիոտները միշտ երթևեկության առավելություն ունեն: Խաչմերուկներում երթևեկության առավելության մի քանի կանոն՝

- STOP կամ YIELD նշանների բացակայության դեպքում երթևեկության առավելության ունի այնտրանսպորտային միջոցն, որն առաջինն է հասնում խաչմերուկ: Սակայն, եթե տրանսպորտային միջոցը կամ հեծանիվը խաչմերուկ է հասնում Ձեզ հետ միաժամանակ, Ձեր երթևեկության առավելությունը զիջեք Ձեր աջ կողմից ընթացող տրանսպորտային միջոցին կամ հեծանվին: Եթե մոտենում եք stop նշանի, և բոլոր չորս անկյուններում stop նշաններ կան, նախ կանգ առեք և այնուհետև շարունակեք ըստ վերը ներկայացվածի:
- Առանց STOP կամ YIELD նշանների T-ձև խաչմերուկներ. ճանապարհով անցնող տրանսպորտային միջոցները, հեծանվորդները և հետիոտները, որոնք շարունակում են շարժվել ուղիղ, ունեն երթևեկության առավելություն:
- Ձախ թեքվելիս ստուգեք հետիոտների առկայությունը: Երթևեկության առավելությունը զիջեք մոտեցող ցանկացած տրանսպորտային միջոցի, որը, բավականին մոտ լինելով, կարող է վտանգ ներկայացնել:
- Աջ շրջադարձ. միշտ ստուգեք փողոցը հատող հետիոտների և Ձեր կողմից՝ մոտոցիկլետների ու հեծանիվների առկայությունը:
- Լուսացույցի կանաչ լույս. զգուշորեն շարունակեք Ձեր ընթացքը: Հետնիոտներն առավելություն ունեն:
- Մուտք երթևեկություն. երթևեկություն մտնելիս պետք է զգույշ վարվել և զիջել երթևեկությունը նրանց, ովքեր արդեն այդ գոտում են: Օրենքին արգելում է կանգ առնել կամ արգելափակել այն խաչմերուկը, որտեղ բավարար տեղ չկա ամբողջությամբ անցնելու համար՝ մինչև լուսացույցի կարմիր դառնալը:

Շրջանաձև խաչմերուկներ

Շրջանաձև խաչմերուկներում երթևեկությունն ընթանում է կենտրոնական հատվածի շուրջ՝ մեկ ուղղությամբ:

Ինչպես օգտագործել շրջանաձև խաչմերուկները

1. Մոտենալիս դանդաղեցրեք տրանսպորտային միջոցի ընթացքը:
2. Զիջեք բոլորին, ովքեր արդեն շրջանաձև խաչմերուկում են:
3. Մուտք գործեք աջ ուղղությամբ այն ժամանակ, երբ բավարար տարածություն կա երթևեկող տրանսպորտային միջոցների միջև՝ հոսքին անվտանգ միաձուլվելու համար:
4. Հետևեք Ձեզ ուղղորդող նշանների ու գոտու գծանշումների:
5. Երթևեկեք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Կանգ մի առեք և մի վազանցեք:
6. Ազդանշան տվեք երթևեկության գոտին փոխելիս կամ երթևեկության գոտուց դուրս գալիս:
7. Եթե չհասցնեք դուրս գալ, շարունակեք պտտվել կենտրոնական հատվածի շուրջը՝ մինչև կրկին հայտնվեք ելքի մոտ:

Եթե շրջանաձև խաչմերուկը բազմաթիվ գոտիներ ունի, ընտրեք Ձեր մուտքի կամ ելքի գոտին՝ ելնելով Ձեր նպատակակետից: Ցույց է տրված հերթևի նկարում:
Որպեսզի

1. Կատարեք աջ շրջադարձ (դեղին մեքենա), ընտրեք աջակողմյան գոտին և դուրս եկեք աջակողմյան գոտիով:
2. Գնացեք ուղիղ (կարմիր մեքենա), ընտրեք ցանկացած գոտի: Դուրս եկեք այն գոտուց, որով մտել եք:
3. Թեքվեք ձախ: Մուտք գործեք և շարունակեք վարել, մինչև հասնեք Ձեր ընտրած ուղղության ելքին(կապույտ մեքենա):

Շրջանաձև երթևեկության օրինակներ



Աջ շրջադարձ



Ուղիղ



Ձախ շրջադարձ

Հետիոտներ

Նրանք համարվում են հետիոտներ կամ ճանապարհի խոցելի օգտատերեր:

- Քայլող մարդ
- Մարդ, ով ճանապարհորդում է ոչ թե մեքենայով կամ հեծանիվով, մեկ այլ միջոցով: Ներառյալ՝ չմուշկները, սքեյթբորդերը և այլն:
- Հետիոտն է համարվում նաև այն հաշմանդամը, ով տեղաշարժվում է եռանիվ հեծանիվով կամ կվադրոցիկլով:

Եռանիվ հեծանիվ

Կվադրոցիկլ

Ստանդարտ անվասայլակ

Էլեկտրական անվասայլակ

Թեև հետիոտները երթևեկության առավելություն ունեն, նրանք նույնպես պետք է հետևեն ճանապարհային երթևեկության կանոնների:

Անկախ նրանից, թե հետիոտնը անցումով է անցնում, թե ոչ, Դուք պետք է զգույշ լինեք, դանդաղեցնեք Ձեր արագությունը կամ կանգ առնեք, որպեսզի հետիոտնը ապահով կերպով անցնի անցումը:

Այլ բաներ, որոնց մասին պետք է հիշել.

- Մի վազանցեք հետիոտնային անցումի մոտ կանգնած ոչ մի տրանսպորտային միջոցի: Դուք կարող եք չտեսնել փողոցն անցնող հետիոտնին:
- Հիշեք, եթե հետիոտնը հայացքը ձեզ է ուղղում, ապա նա պատրաստ է հատել փողոցը: Ճանապարհը զիջեք հետիոտնին:
- Միշտ բավականաչափ ժամանակ տվեք հետիոտներին փողոցն ապահով հատելու համար, քանի որ որոշ խմբեր, ինչպիսիք են՝ տարեցները, փոքր երեխաներ ունեցող մարդիկ և հաշմանդամություն ունեցող մարդիկ կարող են լրացուցիչ ժամանակի կարիք ունենալ:

Հետիոտնային անցումներ

Հետիոտնային անցումը փողոցի այն մասն է, որը նախատեսված է հետիոտների երթևեկության համար: Հետիոտնային անցումները հաճախ գծանշված են սպիտակ գծերով: Դպրոցական անցումներ կարող է ունենալ դեղին հետիոտնային գծեր: Ոչ բոլոր հետիոտնային անցումներն են նշված:

Գծանշված կամ ոչ գծանշված անցումներում հետիոտները երթևեկության առավելություն ունեն: Եթե նախքան հետիոտնային անցումը սահմանային գիծ կա, կանգ առեք սահմանագծի մոտ և թույլ տվեք հետիոտներին անցնել փողոցը:

Որոշ հետիոտնային անցումներ ունեն թարթող լույսեր: Անկախ նրանից՝ լույսերը թարթում են, թե ոչ, ստուգեք հետիոտների առկայությունը և պատրաստ եղեք կանգ առնելու:

Կույր Հետիոտներ

Ուղեկցող շներ կամ սպիտակ ձեռնափայտեր օգտագործող հետիոտները միշտ երթևեկության առավելություն ունեն: Այդ հետիոտները մասամբ կամ լրիվ կույր են: Զգույշ եղեք, երբ շրջադարձ կատարելիս կամ հետընթաց շարժվելիս: Սա հատկապես կարևոր է, եթե Դուք իբրիդային կամ էլեկտրական մեքենա եք վարում, քանի որ կույր հետիոտները հույսը դնում են ձայնի վրա՝ իմանալու, արդյոք մոտակայքում կա տրանսպորտային միջոց:

- Տրանսպորտային միջոցը մի կանգնեցրեք հետիոտնային անցման մեջտեղում: Դա կարող է ստիպել կույր հետիոտնին շեղվել հետիոտնային անցումից:
- Կույր հետիոտնին ձայնային ազդանշան մի տվեք:
- Երբ կույրը քաշում է իր ձեռնափայտը և խաչմերուկից հեռանում, այս ժեստը սովորաբար նշանակում է, որ Դուք կարող եք գնալ:

Լեռնային ճանապարհներ

Եթե երկու տրանսպորտային միջոցներ հանդիպեն զառիթափ , նեղ ճանապարհի վրա, և ոչ մի տրանսպորտային միջոց չկարողանա անցնել, ապա դեպի վերև նայող տրանսպորտային միջոցը ունի երթևեկության առավելություն: Զառիթափ ընթացող մեքենան բլրով հետընթաց շարժվելիս ավելի շատ է վերահսկում իրավիճակը: Դեպի ներքև նայող տրանսպորտային միջոցը պետք է հետընթաց շարժվի այնքան, մինչև դեպի վերև նայող տրանսպորտային միջոցը կարողանա անցնել:

ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԵՐԹԵԿԵԼԸ

Վարորդները պետք է կիսեն ճանապարհը այլ տրանսպորտային միջոցների, հետիոտների, հեծանվորդների, ճանապարհային աշխատողների և խոշոր մեքենաների հետ:

Կույր գոտիներ

Խոշոր տրանսպորտային միջոցների և բեռնատարների վարորդներն իրենց առջև ավելի լայն տեսադաշտ ունեն և ավելի մեծ հայելիներ: Բայց դրանք ունեն նաև մեծ կույր գոտիներ, որոնք նաև կոչվում են *No Zones*: Այս տարածքներում Ձեր մեքենան կարող է անհետանալ մեծ մեքենայի կամ բեռնատարի վարորդի տեսադաշտից: Եթե Դուք չեք կարողանում տեսնել բեռնատարի կողային հայելիները, ուրեմն բեռնատարի վարորդը չի կարող տեսնել Ձեզ:



Այս նկարում առկա սպիտակ հատվածները բեռնատարի վարորդի կույր կետերն են:

Արգելակում

Մեծ տրանսպորտային միջոցները կամ առևտրային բեռնատարները արգելակելու համար ավելի երկար ժամանակ է հարկավոր, քան նույն արագությամբ ընթացող մեքենաները: Ճանապարհորդելիս նրանք լրացուցիչ տարածություն են ստեղծում իրենց տրանսպորտային միջոցի առջև, որպեսզի օգտագործեն այն, եթե հանկարծ արգելակելու կարիք լինի: Ժամում 55 մղոն արագությամբ ընթացող մարդատար ավտոմեքենան արգելակելու համար հարկավոր է միջին հաշվով 300 ֆուտ տարածություն: Սակայն նույն արագությամբ ընթացող մեծ բեռնատարը արգելակելու համար կարող է պահանջվել մինչև 400 ֆուտ տարածություն: Որքան ծանր է մեքենան և որքան արագ է այն շարժվում, այնքան ավելի երկար է տևում անվտանգ արգելակելը,

ուստի բեռնված բեռնատարին ավելի երկար ժամանակ կպահանջվի կանգ առնել, քան դատարկ բեռնատարին: Մի ընթացեք մեծ բեռնատարի առջևով և հանկարծակի դանդաղեցրեք մեքենայի ընթացքը կամ արգելակեք: Բեռնատարի վարորդը չի կարող այնքան արագ արգելակել բեռնատարը, որպեսզի չբախվի մեքենային:

Շրջադարձ

Երբ որևէ տրանսպորտային միջոց շրջադարձ է կատարում, հետևի անիվները ավելի կարճ տարածություն են անցնում, քան առջևի անիվները: Որքան երկար է մեքենան, այնքան մեծ է այդ մեքենայի շրջադարձի հետագծի տարբերությունը: Ահա թե ինչու մեծ տրանսպորտային միջոցների և բեռնատարների վարորդները հաճախ ստիպված են լինում մեծ շրջագիծ վերցնել՝ աջ շրջադարձ կատարելու համար: Երբ շարժվում եք մեծ բեռնատարի հետևից, վազանց կատարելուց առաջ նայեք նրա շրջադարձի ազդանշանները:

Մանևր

Խոշոր տրանսպորտային միջոցները ու բեռնատարները մարդատար մեքենաների նման հեշտ չեն մանևրում: Մեկ ուղղությամբ 4 կամ ավելի գոտիներ ունեցող բաժանարար գոտիով ավտոմայրուղիների վրա այդ տրանսպորտային միջոցները կարող են երթևեկել աջ գոտուց ամենահեռու երկու գոտիներով: Խոշոր տրանսպորտային միջոցների և բեռնատարների մոտ վարելիս՝

- Մի՛ փոխեք գոտիները ուղիղ նրանց դիմաց՝ եզրի կամ շրջադարձի հասնելու համար:
- Մի՛ քշեք նրանց կողքով ավելի երկար, քան անհրաժեշտ է: Խոշոր տրանսպորտային միջոցը վազանցեք միշտ ձախից: Խոշոր տրանսպորտային միջոցը կամ բեռնատարը անցնելուց հետո շարժվեք դրա առջևից: Խոշոր տրանսպորտային միջոցի կողքին շարժվելը վարորդի համար դժվարացնում է ճանապարհին առկա վտանգներից խուսափումը:
- Մի՛ հետևեք շատ մոտ տարածությունից: Շատ մոտ տարածությունից հետևելը նվազեցնում է մեքենայի անվտանգ հեռավորությունը:
- Մի՛ թերագնահատեք դրանց չափն ու արագությունը, քանի որ հաճախ խաբուսիկ տպավորություն է ստեղծվում, որ դրանք ավելի դանդաղ են ընթանում:

Ավտոբուսներ, Տրամվայներ և Տրոլեյբուսներ

Անվտանգության գոտիները տարածքներ են, որոնք առանձնացված են ավտոբուսների, տրամվայների և տրոլեյբուսի սպասող հետիոտների համար: Անվտանգության գոտիները նշվում են ճանապարհի վրա առկա ռելեֆային կոճակներով կամ մարկերներով: Մի՛ վարեք տրանսպորտային միջոցը անվտանգության գոտու միջով՝ անկախ հանգամանքներից:

Անվտանգության գոտիները գծանշված են սպիտակ կետագծերով:

Երբ ավտոբուսը, տրամվայը կամ տրոլեյբուսը արգելակել է անվտանգության գոտում կամ լուսացույցի մոտ, դուք կարող եք անցնել այն 10 մղոն/ժ-ը չգերազանցող արագությամբ:

Երբեմ ձախից մի վազանցեմ արագընթաց հերթաղամային գնացքը կամ տրամվայը՝ անկախ վերջինիս շարժման մեջ կամ կանգնած լինելու հանգամանքից, եթե

- Երկաթուղին այնքան մոտ է աջ կողմին, որ մարդատար մեքենան չի կարող անցնել աջ կողմից:
- Դուռ չեմ գտնվում միակողմանի փողոցում:
- Ճանապարհային ոստիկանը չի պահանջում , որպեսզի Դուռ ձախից անցնեմ:

Արագընթաց հերթաղամային գնացքներ

Արագընթաց հերթաղամային գնացքների առջևով շրջադարձ մի կատարեմ:

Հանրային հանապարհների արագընթաց հերթաղամային գնացքներն ունեն նույն իրավունքները ու պարտականությունները՝ ինչ մյուս տրանսպորտային միջոցները: Ճանապարհն արագընթաց հերթաղամային գնացքների հետ անվտանգ կիսելու համար.

- Տեղեկացեմ, թե որտեղ են նրանք գործում: Շենքերը, ծառերը և այլ օբյեկտներ փակում են տրամվայի վարորդի տեսադաշտը:
- Երբեմ շրջադարձ մի կատարեմ մոտեցող արագընթաց հերթաղամային գնացքի առջևից:
- Պահպանեմ անվտանգ հեռավորություն:
- Արագընթաց հերթաղամային գնացքի գծերը հատելիս ստուգեմ՝ արդյոք այն չի մոտենում: Շրջադարձը կատարեմ միայն այն ժամանակ, երբ ճանապարհային լուսացույցը թույլ է տալիս դա անել: Արագընթաց հերթաղամային գնացքները կարող են փակել լուսացույցները:

Մոտոցիկլետներ

Մոտոցիկլավարները նույն իրավունքներն ու պարտականություններն ունեն՝ ինչ այլ տրանսպորտային միջոց վարողները: Մոտոցիկլավարների հետ անվտանգ համատեղ երթևեկելու համար.

- Ստուգեմ մոտոցիկլետների առկայությունը և օգտագործեմ Ձեր հայելիները, երբ գոտի եմ փոխում կամ ճանապարհ եմ մտնում: Մոտոցիկլետներն ավելի փոքր են չափերով և ավելի դժվար տեսանելի են, ուստի դրանք հեշտությամբ հայտնվում են տրանսպորտային միջոցների կույր գոտիներում:
- Մոտոցիկլետի հետևից ընթանալիս 3 վայրկյանի չափ տարածություն պահպանեմ: Այս տարածությունը կօգնի Ձեզ խուսափել մոտոցիկլավարին հարվածելուց, եթե նա հանկարծակի արգելակի կամ ընկնի:
- Հնարավորության դեպքում մոտոցիկլետին տրամադրեմ ամբողջ գոտին: Մոտոցիկլետների հետ նույն գոտով ընթանալն օրինական է, այն կոչվում է գոտու բաժանում:
- Երբեմ մի փորձեմ Ձեզ հետ նույն գոտում գտնվող մոտոցիկլետին վազանցել:
- Երթևեկի մոտ Ձեր դուռը բացելուց առաջ ստուգեմ մոտոցիկլավարների առկայությունը:
- Հնարավորության դեպքում տեղափոխվեմ Ձեր գոտու մի կողմ, որպեսզի մոտոցիկլավարներին վազանցելու համար ավելի շատ տեղ հատկացնեմ:

Ճանապարհային պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որպեսզի մոտոցիկլավարները հանկարծ փոխեն արագությունը կամ ուղղությունը:

Արտակարգ իրավիճակների մեքենաներ


Ճանապարհը զիջեք արտակարգ իրավիճակների մեքենաներին:

Դուք պետք է ճանապարհը զիջեք ոստիկանական, հրշեջ, շտապ օգնության և այլ արտակարգ իրավիճակների մեքենաներ, որոնք կիրառում են շչակի ձայնը կամ կարմիր լույսեր: Արգելակելու կանոնների չհետևելը կարող է հանգեցնել տուգանքի: Շարժվեք դեպի ճանապարհի աջ եզրը և կանգ առեք, մինչև արտակարգ իրավիճակների տրանսպորտային միջոցը(ները) կանցնի(են):

Թարթող վթարային ազդանշանային լույսերով անշարժ արտակարգ իրավիճակների մեքենային մոտենալիս՝ շարժվեք դեպի եզրագիծը և դանդաղեցրեք արագությունը:

Եթե Դուք գտնվում եք խաչմերուկում, երբ տեսնում եք արտակարգ իրավիճակների մեքենա, շարունակեք անցնել խաչմերուկով: Քշեք աջ, երբ ապահով է, և կանգ առեք:

Հետևեք ճանապարհային ոստիկանի, իրավապահ մարմինների աշխատակցի կամ հրշեջի կողմից տրված ցանկացած հրահանգի, հրամանի կամ ազդանշանի: Հետևեք նրանց հրամաններին, հայնիսկ եթե դրանք հակասում են առկա նշաններին, ազդանշաններին կամ օրենքներին:

Օրենքով արգելվում է 300 ֆուտից ավելի մոտենալ հրշեջ ծառայության, ոստիկանության, շտապ օգնության կամ այլ արտակարգ իրավիճակների մեքենայի, երբ նրանց շչակների ձայնը կամ թարթող լույսերը միացված են

Դուք կարող եք ձերբակալվել, եթե վարում եք դեպի հրդեհի, բախման կամ այլ աղետի վայր: Դա անելիս Դուք խոչընդոտում եք հրշեջներին, շտապօգնության անձնակազմին կամ փրկարարական և արտակարգ իրավիճակների մյուս աշխատակիցներին:

Դանդաղ շարժվող տրանսպորտային միջոցներ:


Դանդաղ շարժվող տրանսպորտային միջոցի օրինակ.

Երթևեկություն մտնելիս իրենց ընթացքը արագացնելու համար նրանցից կարող է ավելի երկար ժամանակ պահանջվել: Մեծ բեռնատարները, հեծանիվները և որոշ մեքենաներ կորցնում են արագությունը երկար կամ զառիթափ բլուրների վրա: Դանդաղ ընթացող որոշ մեքենաներ ունեն նարնջագույն և կարմիր եռանկյունիներ իրենց հետևի մասում, օրինակ՝ ճանապարհների սպասարկման մեքենաները, որոնք սովորաբար շարժվում են 25 մղոն/ժ արագությամբ կամ ավելի դանդաղ:

Առկա են դանդաղաշարժ շարժիչային տրանսպորտային միջոցների այլ տեսակներ, որոնք կարող են ընթանալ հանրային ճանապարհներով: Դրանց մեջ մտնում են՝

- Սկուտերները
- Համայնքային էլեկտրամոբիլները (NEV)
- Գոլֆ մոբիլները

Կարգավորեք Ձեր արագությունը՝ այս տրանսպորտային միջոցների հետ համատեղ երթևեկելու համար:

Համայնքային էլեկտրամոբիլներ (NEV) և Ցածր արագությամբ նեֆենաներ (LSV)

Ստուգեք դանդաղաշարժ տրանսպորտային միջոցների առկայությունը, երբ ճանապարհին տեսնում եք այս նշանները ու գծանշումները՝

- NEV USE ONLY
- NEV ROUTE

NEV և LSV կարող են զարգացնել մինչև ժամում 25 մղոն առավելագույն արագություն: Նրանց արգելվում է երթևեկել այն ճանապարհներին, որտեղ արագության սահմանաչափը գերազանցում է ժամում 35 մղոնը:

Կենդանի տեղափոխող փոխադրամիջոցներ

Ձիաքաշ սայլերը, ինչպես նաև ձի կամ որևէ այլ կենդանի հեծած անձինք իրավունք ունեն ավտոմոբիլների հետ նույն ճանապարհով երթևեկելու: Ձիերին կամ ընտանի անասուններին դիտավորյալ վախեցնելը հակասում է օրենքին:

Մոտակայքում կենդանիներ կան

Եթե տեսնում եք կենդանու նկարով նշան, ուշադիր եղեք երթևեկելի մասում կամ մոտակայքում հնարավոր կենդանիների նկառկայությանը: Եթե ճանապարհի մոտ տեսնեք կենդանիներ կամ ընտանի անասուններ, դանդաղեցրեք Ձեր ընթացքը կամ կանգ առեք և շարունակեք, երբ անվտանգ է: Անպայման հետևեք կենդանիների համար պատասխանատու անձի ցուցումներին:

Հեծանիվներ

Հեծանվորդները նույն իրավունքներն ու պարտականություններն ունեն՝ ինչ մյուս վարորդները: Հեծանվորդները կարող են

- Երթևեկել արագընթաց մայրուղու որոշ հատվածներում, որտեղ այլընտրանքային երթուղի չկա, և հեծանվավարումն արգելող որևէ նշան չկա:
- Շարժվել ձախ վտանգներից խուսափելու համար: Կարող են հերառել կայանված կամ շարժվող տրանսպորտային միջոցներ, հեծանիվներ, կենդանիներ կամ աղբ:
- Իրենց ընտրությամբ շարժվել միակողմանի փողոցի ձախ մայթեզրի կամ ճամփեզրի մոտով:
- Օգտագործել հետիոտնային անցումները՝ կանգնելով և անցնելով որպես հետիոտն:

Հեծանվորդի պարտականությունները՝

Որպես հեծանվորդ, Դուք պետք է

- Հետևեք բոլոր ճանապարհային նշանների, ազդանշանային լույսերին և երթևեկության հիմնական կանոնների:
- Հեծանվավարեք երթևեկության ուղղությամբ:
- Միշտ նայեք ձեր ուսի վրայով, որպեսզի համոզվեք, որ գոտին մաքուր է, նախքան շրջվելը կամ գոտի փոխելը:
- Ճանապարհը զիջեք հետիոտներին:
- Սաղավարտ կրեք (եթե Ձեր 18-ը չի լրացել):
- Աշտապես տեսանելի լինեք (օրինակ՝ երբեք մի խուսավարեք կայանված տրանսպորտային միջոցների միջև):
- Հեծանվավարեք աջ եզրաքարին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ:
- Զերթևեկեք մայթով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված է այն քաղաքում, որտեղ հեծանիվ եք վարում.
- Ձախ և աջ շրջադարձերը կատարեք նույն կերպ, ինչպես մյուս վարորդները՝ օգտվելով ձեռքերի ազդանշաններից և շրջադարձերի գոտիներից:
- Հնարավորության դեպքում օգտագործեք հեծանվային գոտի կամ անցողիկ երթևեկության գոտի:
- Ունեցեք նորմալ գործող արգելակներ:



Հեծանվորդների շրջադարձերի օրինակներ:



Հեծանվորդների համար հատուկ գոտիներ ունեցող խաչմերուկներ:

Հեծանվով երթևեկությունը գիշերով

Երբ դրսում մութ է, հեծանվորդները պետք է խուսափեն մուգ հագուստ կրելուց: Ձեր հեծանիվը պետք է ունենա հետևյալ սարքավորումները՝

- Դիմացի լապտեր, որն արձակում է սպիտակ լույս՝ տեսանելի է 300 ֆուտ հեռավորությունից:
- Ներկառուցված հետևի կարմիր անդրադարձիչ, հոծ կարմիր լույս կամ թարթողկարմիր լույս: Դրանք պետք է տեսանելի լինեն 500 ոտնաչափից:
- Սպիտակ կամ դեղին անդրադարձիչ յուրաքանչյուր ոտնակին, հեծանվորդի կոշիկներին կամ նրանց կոճերին: Դրանք պետք է տեսանելի լինեն 200 ոտնաչափից:
- Սպիտակ կամ դեղին անդրադարձիչ առջևի անիվի վրա, սպիտակ կամ կարմիր անդրադարձիչ հետևի անվի վրա, կամ անդրադարձնող հատկությամբ անվադողեր:

Հեծանվով երթևեկումը երթևեկելի գոտում

Երթևեկության հոսքից դանդաղ ընթացող հեծանվորդները պետք է հեծանվավարեն աջ մայթեզրին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ, եթե

- Ձեն վազանցում ընթացող տրանսպորտային միջոցին կամ մեկ այլ հեծանիվի:
- Ձեն փորձում ձախ շրջադարձ կատարել,:

- Չեն փորձում խուսափել վտանգներից կամ ճանապարհային պայմաններից:
- Երթևեկության գոտին չափազանց նեղ չէ հեծանիվի և տրանսպորտային միջոցի՝ այդ գոտով կողք-կողքի անվտանգ ընթանալու համար:
- Չեն մոտենում աջ շրջադարձի:
- Երկու կամ ավելի երթևեկության գոտիներով միակողմանի ճանապարհին են: Այս դեպքում հեծանվորդը կարող է ընթանալ ձախ եզրաբարին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ:

Վարորդները պետք է հետևեն հեծանվորդներին անվտանգ հեռավորության վրա: Երբ ապահով է, հեծանվորդը պետք է տեղափոխվի այնպիսի դիրք, որը թույլ կտա տրանսպորտային միջոցներին անցնել:

Հեծանվորդին վազանցումը

Երթևեկության գոտում գտնվող հեծանվորդին անվտանգ վազանցնելու համար Ձեզնից կարող է պահանջվել անցնել այլ գոտի: Այս դեպքում ապահով անցեք, ապա վերադարձեք Ձեր սկզբնական գոտի: Ձեր տրանսպորտային միջոցի և հեծանվորդի միջև տարածություն թողեք:

Ճիշտ է

Սխալ է

Երբ անհնար է վերադասավորում կատարել հեծանվորդից անցնելու համար, առնվազն 3 ֆուտ տարածություն թողեք Ձեր մեքենայի և հեծանվորդի միջև: Եթե Դուք չեք կարող երեք ոտնաչափ տարածություն թողնել, մի վազանցեք հեծանվորդին մինչև Ձեր միջև երեք ոտնաչափ տարածություն չառաջանա: Դա Ձեզ կօգնի խուսափել հեծանվորդին վտանգի ենթարկելուց. Հիշեք

- Հեծանվորդներին բավական տարածություն տալ, որպեսզի նրանք ստիպված չլինեն երթևեկել կայանված տրանսպորտային միջոցների կամ բաց տրանսպորտային դռների մոտով:
- Շարժվել դեպի մայթեզրը կամ հեծանվային գոտին միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:
- Շրջադարձ կատարելուն նախապատրաստվելիս անվտանգ տեղ զբաղեցնել հեծանվորդի հետևում:
- Հեծանվուղի մուտք գործել միայն շրջադարձից ոչ ավելի, քան 200 ֆուտ առաջ:
- Գոտիները փոխելիս կամ երթևեկության հոսքի մեջ մտնելիս հայացքով ստուգել հեծանվորդների առկայությունը: Նրանք կարող են լինել մեքենայի կույր գոտիներում:
- Զգույշ լինել երկգոտի ճանապարհին որևէ հեծանվորդի մոտենալիս կամ վազանցելիս:

Ճանապարհաշինարարներ և Աշխատանքների Իրականացման Տարածքներ

Դուք կտեսնեք նախազգուշական նշաններ և հաղորդագրությունների ցուցատախտակներ, եթե Ձեր առջևում կան աշխատողներ, դանդաղ շարժվող սարքավորումներ և փակ գոտիներ:

Աշխատանքային գոտին պետք է անցնել զգուշորեն՝

- Նվազեցրեք Ձեր արագությունը:
- Լրացուցիչ տարածություն թողեք տրանսպորտային միջոցների միջև:
- Ակնկալեք հանկարծակի դանդաղեցում կամ դադար:
- Հետևեք գոտի փոխող վարորդներին:
- Խուսափեք ուշադրությունը շեղող գործոններից:

Աշխատանքների իրականացման գոտում կոնուսներ, գլանաձև կամ այլ նշանները կուղղորդեն Ձեզ : Պատրաստվեք դանդաղեցնել Ձեր ընթացքը կամ կանգ առնել ճանապարհային տեխնիկայի առկայության դեպքում: Վերադասավորվեք հնարավորինս շուտ, երբ դա կարելի է անել անվտանգ կերպով՝ առանց հատելու կոնուսներ կամ գլանաձև արգելանշանների գիծը: Ստուգեք հեծանիվների առկայությունը, եթե գոտիները նեղ են կամ ճամփեզրը փակ է: Ենթարկվեք աշխատողների հատուկ նշաններին և ցուցումներին:

Տուգանքներ և կրկնակի տուգանքի գոտիներ

Աշխատանքների իրականացման տեղամասում երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված տուգանքները կարող են կազմել $1.000և ավելի: Ճանապարհաշինական աշխատանքներ կատարող բանվորին վրաերթի ենթարկելու համար մեղադրվող անձնավորությունը կարող է տուգանվել $2.000-ի չափով կամ ազատազրկվել մինչև մեկ տարի ժամկետով:

Որոշակի ճանապարհներ ընտրվում են որպես «Անվտանգության ուժեղացված և կրկնակի տուգանքի գոտիներ»: Սա պայմանավորված է բախումների պատճառով վնասվածքների և մահվան ելքով դեպքերի աճով: Այս գոտիներում տուգանքները կրկնապատկվում են:

Տուգանքները նաև կրկնապատկվում են մայրուղու կառուցման կամ պահպանման գոտիներում, երբ աշխատողները այնտեղ են:

Տեղաշարժում և տրանսպորտային միջոցի ընթացքի դանդաղեցում

Վարորդները պետք է տեղաշարժվեն և դանդաղեցնեն իրենց ընթացքը փրկարարական և ճանապարհային աշխատանքներ իրականացնող տրանսպորտային միջոցների առկայության դեպքում Այդպիսի տրանսպորտային միջոցներ են՝

- Կանգնածարտակարգ իրավիճակների մեքենաները կամ խաչակները, որոնք ունեն դեղին թարթող նախազգուշական լույսեր:
- Կանգնած ճանապարհային աշխատանքների իրականացման տրանսպորտային միջոցները,որոնք ունեն դեղին թարթող նախազգուշական լույսեր:

Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներ

Բեռնատարի վրայի շեղանկյունաձև նշանը նշանակում է, որ բեռնատարի բեռը կարող է վտանգավոր լինել (գազ, պայթուցիկ և այլն): Այս նշաններով տրանսպորտային միջոցները պետք է կանգ առնեն նախքան երկաթուղային գծանցումները հատելը:

Վտանգավոր բեռների ցուցանակների օրինակներ:

Ինտենսիվ երթևեկություն կամ անբարենպաստ եղանակային պայմաններ

Ինտենսիվ երթևեկության կամ անբարենպաստ եղանակային պայմաններում պետք է ավել դանդաղ վարել: Միևնույն ժամանակ, Դուք չպետք է արգելափակեք նորմալ և ողջամիտ երթևեկության հոսքը՝ չափազանց դանդաղ վարելով: Եթե դուք թույլատրված արագությունից ավելի արագ կամ դանդաղ եք վարում, ապա Ձեզ կարող են պատասխանատվության ենթարկել: Երբ մեկ այլ վարորդ անմիջապես Ձեր հետևում է և ցանկանում է ավելի արագ ընթանալ, տեղափոխվեք աջ: Եթե որոշեք ավելի դանդաղ վարել, բան մնացած մեքենաները, ապա բեռ աջ գոտով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Երթևեկության գոտու ընտրությունը»՝ բաժին 6-ում:

Քարշակում

Դուք պետք է երթևեկեք ծայրային աջ գոտում կամ դանդաղ ընթացող տրանսպորտային միջոցների համար նախատեսված գոտում, երբ՝

- Քարշակում եք տրանսպորտային միջոց կամ կցորդ:
- Վարում եք երեք կամ ավելի առնի ունեցող բեռնատար:

Եթե ոչ մի գոտի գծանշված չէ, և Ձեր ընթացքի ուղղությամբ չորս կամ ավելի գոտի կա, ապա թույլատրվում է մեքենան վարել միայն ճանապարհի աջ եզրին ամենամոտ երկու գոտիներից մեկով:

Մոտակայքում երեխաներ են

Դպրոցից 500 ֆուտ հեռավորության վրա արագության սահմանաչափը 25 մղոն/ժամ է, երբ երեխաները դրսում են կամ փողոց են հատում: Որոշ դպրոցների տարածքները կարող են ունենալ ընդամենը ժամում 15 մղոն արագության սահմանափակում: Դպրոցների մոտակայքում ուշադիր եղեք, որպեսզի նկատեք՝


Բոլոր մեքենաները պետք է կանգնեն՝ զիջելու դպրոցական ավտոբուսներին:

- Հեծանվորդներին և հետիոտներին,
- Դպրոցների մոտակայքում անվտանգությունը հսկող պարեկին կամ փողոցային երթևեկությունը կարգավորողին: Միշտ հետևեք նրանց հրահանգներին:
- Կանգնած դպրոցական ավտոբուսները և փողոցը հատող երեխաներին:
  — Որոշ դպրոցական ավտոբուսներ համալրված են դեղին լույսով, որը թարթում է, երբ այն պատրաստվում է կանգ առնել և դուրս թողնել երեխաներին: Դեղին թարթող լույսը զգուշացնում է, որ դանդաղեցնեք մեքենայի ընթացքը և պատրաստվեք կանգ առնելու:

— Եթե թարթում են ավտոբուսի կարմիր լույսերը (որոնք գտնվում են ավտոբուսի վերևում, առջևում և հետևում), ապա պետք է կանգ առնել՝ անկախ Ձեր ընթացքի ուղղությունից, մինչև երեխաներն ապահով կերպով հատեն փողոցը, որից հետո կարմիր լույսերը կդադարեն թարթել: Կանգնած մնացեք մինչդեռ կարմիր լույսերը թարթում են:
Եթե կանգ չառնեք, կարող եք տուգանվել մինչև $1.000, և Ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել 1 տարով:
— Եթե դպրոցական ավտոբուսը գտնվում է բաժանված կամ բազմագոտի (յուրաքանչյուր ուղղությամբ երկու կամ ավելի երթևեկության գոտի ունեցող) ավտոճանապարհի հակառակ կողմում, կարող եք կանգ չառնել:

Կույր խաչմերուկներ

Խաչմերուկը համարվում է կույր, եթե այն չունի կանգառի նշաններ յուրաքանչյուր անկյունում:

Եթե Ձեր տեսադաշտը փակ է, դանդաղ առաջ շարժվեք՝ մինչև կարողանաք տեսնել: Կույր խաչմերուկներում թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է:

Նրբանցքներ

Նրբանցք է համարվում ցանկացած ճանապարհ, որն 25 ոտնաչափից նեղ է և օգտագործվում է շենքի կամ սեփականության ետնամասից կամ կողային մուտքերից մուտք գործելու համար: Դուք կարող եք վարել մայթի վրայով կամ հատել մայթը որևէ ուղեմուտք կամ նրբանցք մտնելու կամ այնտեղից դուրս գալու համար: Նրբանցքում թույլատրելի արագությունը 15 մղոն ժամ է:

Երկաթուղու կամ թեթև երկաթուղային տրանսպորտի մոտ

Երկաթուղային գծանցից 100 ֆուտ հեռավորության սահմաններում, որտեղ ի վիճակի չեք տեսնել 400 ֆուտ հեռու գտնվող երկաթգծերը՝ և՛ աջ, և՛ ձախ ուղղություններով, թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է: Դուք կարող եք ժամում 15 մղոնից ավելի արագ ընթանալ, եթե գծանցը կարգավորվում է ուղեփակոցներով, զգուշացնող ազդանշաններով կամ ազդարարի միջոցով:
Երկաթուղային գծանցներում կամ գնացքների խաչադիպման կետերում՝

- Նախազգուշացնող կարմիր թարթող լույսերը ցույց են տալիս, որ պետք է կանգնեք և սպասեք: Շարունակեք անցումը երկաթուղագծերի վրայով, բանի դեռ կարմիր լույսի թարթումը չի դադարել, նույնիսկ եթե ուղեփակոցը բարձրանա:
- Երբ գծանցի սարքերը կամ անձը զգուշացնում է Ձեզ, որ գնացք է գալիս, կանգ առեք մոտակա երկաթգծից առնվազն 15 ֆուտ հեռու:
- Մի անցեք իջնող ուղեփակոցի տակով կամ մի շրջանցեք փակ ուղեփակոցը: Եթե ուղեփակոցն իջեցված է, և Դուք չեք տեսնում մոտեցող գնացքը, զանգահարեք երկաթուղային արտակարգ իրավիճակների նշված անվճար հեռախոսահամարով կամ 911:
- Կանգնեք, նայեք և լսեք: Եթե տեսնեք, որ գնացք է գալիս կամ լսեք շչակի կամ զանգի ձայն, մի՛ հատեք գծանցը: Շատ գծանցեր ունեն բազմաթիվ երկաթգծեր: Նայեք ձախ և աջ և անցեք միայն այն ժամանակ, երբ անվտանգ է:

- Նկատի ունեցեք, որ ցանկացած պահի, ցանկացած ուղղությամբ և ցանկացած գծով կարող է գնացք շարժվել:
- Երբեք մի կանգնեք երկաթգծերի վրա: Սպասեք և մի շարունակեք Ձեր ընթացքը, եթե բավարար տեղ չունեք երկաթգծերն ամբողջությամբ անցնելու համար: Երկաթգծի վրա կանգ առնելը վտանգում է Ձեր կյանքը: Կարող եք մարմնական վնասվածքներ ստանալ կամ մահանալ:
- Ստուգեք այն տրանսպորտային միջոցների առկայությունը, որոնք պետք է կանգ առնեն երկաթգծերը հատելուց առաջ: Այս տրանսպորտային միջոցների դասն են պատկանում ավտոբուսները, դպրոցական ավտոբուսները և վտանգավոր նյութերի ցուցանակով նշված տրանսպորտային միջոցները:

Գործարար կամ բնակելի թաղամասեր

Թույլատրելի արագությունը ժամում 25 մղոն է, եթե այլ բան նշված չէ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԵԼՅԱԼ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դուք պետք է

- Զգույշ եք, եթե մեքենայում անչափահաս կա: Դուք կարող եք տուգանվել դրա համար:
- Մի՝ լքեք կամ թողեք կենդանիներին ավտոմայրուղու վրա: Այս հանցանքը պատժվում է մինչև $1.000 տուգանքով, 6 ամիս բանտարկությամբ, կամ երկուսը միասին:
- Մի՛ վարեք մեքենան չափազանց ծանրաբեռնված վիճակում, ինչի արդյունքում կարող եք կորցնել կառավարումը կամ չտեսնել Ձեր դիմացը կամ կողքերը:
- Մի՛ վարեքորևէ տրանսպորտային միջոց, որը փոխադրում է անապահով և անվտանգությանը սպառնացող որևէ բեռ:
- Մի՛ տեղափոխեք մարդատար տրանսպորտային միջոցում կամ տրանսպորտային միջոցի վրա որևէ իր, որը դուրս է գալիս ձախ ցայտապաստպանների եզրագծից, կամ 6 դյույմից ավելի է դուրս գալիս աջ ցայտապաստպանների եզրագծից:
  - — Մեքենայի հետևի թափարգելից ավելի քան 4 ֆուտ դուրս եկող բեռան վրա պետք է ամրացված լինի 12 դյույմանոց կարմիր կամ վառ նարնջագույն քառակուսի դրոշակ:
  - — Գիշերը, այս բեռը պետք է նշվի երկու կարմիր լույսով:
- Թույլ մի՝ տվեք, որ որևէ մեկը նստի փիքափի կամ այլ բեռնատարի հետևի մասում, եթե Ձեր տրանսպորտային միջոցը չունի ապահով նստատեղեր և ամրագոտիներ:
- Մի՝ տեղափոխեք կենդանիներ փիքափի կամ այլ բեռնատարի հետևի մասում, քանի դեռ կենդանին պատշաճ կերպով ապահովված չէ: Դա կանխում է կենդանիների ընկնելը, ցատկելը կամ փոխադրամիջոցից վայրից նետվելը:
- Մի՝ վարեք վարորդի համար տեսանելի տեսամոնիտորով համալրված տրանսպորտային միջոց, բացառությամբ, եթե այն ցուցադրում է տրանսպորտային միջոցի մասին տեղեկատվությունը, նավիգացիոն համակարգը, մեդիա նվագարկիչը կամ ռադիոն:
- Ձեր տրանսպորտային միջոցից մի՝ նետեք ծխախոտ, սիգար կամ այլ բոցավառվող կամ այրվող առարկաներ:

- Մի՛ տեղադրեք Ձեր տեսադաշտն արգելափակող նշանակներ կամ այլ առարկաներ առջևի հողմապակու կամ հետևի կողային պատուհանների վրա: Հայելուց առարկաներ մի կախեք: Օբյեկտներ կարող են տեղադրվել միայն՝
  - — Ուղևորի կողային հողմապակու ստորին անկյունիկամ հետևի պատուհանի ստորին անկյունի 7 քառակուսի դյույմի վրա:
  - — Վարորդի կողմի պատուհանի ստորին անկյունի 5 քառակուսի դյույմի վրա:
  - — Ձեր հողմապակու կենտրոնական հատվածի վերևի 5 քառակուսի դյույմ տարածքի վրա, որը նախատեսված է ճանապարհային հարկերի հավաքագրման էլեկտրոնային սարքի համար:
  - — Վարորդի հետևի կողային պատուհանների վրա:
- Մի՛ խանգարեք թաղման արարողությանը: Թաղման թափորը ուղեկցվում է ճանապարհային երթևեկության աշխատակցի կողմից և երթևեկության առավելություն ունի: Թափորին մասնակցող բոլոր տրանսպորտային միջոցների հողմապակիների վրա հատուկ նշաններ կան, և դրանց բոլորի ցոլալապտերները միացված են: Դուք կարող եք տուգանվել թաղման երթը ընդհատելու համար:
- Մի՛ վարեք այնպիսի մեքենա, որի պետհամարիշներն անընթեռնելիեն:
- Չի կարելի որևէ կերպ փոփոխել պետհամարանիշը:

Իրավապահ մարմնից խուսափելը

Իրավապահ մարմիններից՝ իրենց պարտականությունները կատարելիս փախուստի կամ խուսափելու փորձի համար տրանսպորտային միջոցի կիրառումը անօրինական է: Այս արարքը պատժվում է շրջանային բանտում մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ:

Իրավապահ մարմինների հետապնդման ընթացքում ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու համար դատապարտված անձը ենթակա է նահանգային բանտում մինչև յոթ, իսկ շրջանային բանտում մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկման:

Հետապնդման ընթացքում իրավապահներից խուսափելու արդյունքում չկանխամտածված սպանության համար դատապարտված անձը ենթակա է նահանգային բանտում նվազագույնը 4-ից 10 տարի ժամկետով ազատազրկման:

Եթե ոստիկանությունը բռնի վարորդական իրավունք չունեցող անձի, Ձեր տրանսպորտային միջոցը վարելիս, ապա այն կարող են բռնագրավել 30 օրով:

Արագության Մրցավազքեր ԵՎ Անզգույշ Վարում

Անձը, որը դատապարտվել է անզգույշ վարելու կամ արագության մրցավազքում մասնակցելու ժամանակ մեկ այլ անձի վնասվածք պատճառելու համար՝ ենթակա է ազատազրկման, տուգանքի կամ երկուսին էլ:

Վարորդական գործում նշվող տուգանային միավորները

DMV-ն վերահսկում է Ձեր վարորդական գործը: Եթե իրավապահ մարմինների աշխատակիցը Ձեզ կանգնեցնում և ակտավորում է երթևեկության կանոնների խախտման համար, Դուք ստորագրում եք այդ ակտը՝ որպես ճանապարհատրանսպորտային դատարան ներկայանալու հավաստիք: Եթե Ձեզ ակտավորում են, և Դուք չեք ներկայանում դատարան (FTA), DMV-ն կարող է կասեցնել Ձեր վարորդական իրավունքի վկայականը այնքան ժամանակ՝ մինչև կներկայանաք դատարան: Եթե Դուք չեք պահում դատարան ներկայանալու Ձեր

խոստումը, ապա FTA-ն (դատարան չներկայանալը) ճշվում է Ձեր վարորդական գործի մեջ: Եթե չպահեք դատարան ներկայանալու Ձեր խոստումը, չներկայանալը (FTA-ը) կգրանցվի Ձեր վարորդական գործի մեջ:

Ամեն անգամ, երբ Ձեզ մեղավոր են ճանաչում շարժվող մեքենայով երթևեկության կանոնները խախտելու մեջ, դատարանն այդ մասին տեղեկացնում է DMV-ին: Մեղադրական դատավճիռը ճշվում է Ձեր վարորդական գործի մեջ: Այլ ճահանգների և անչափահասների դատարանի կողմից հաղորդված դատավճիռները նույնպես ճշվում են Ձեր վարորդական գործի մեջ: Յուրաքանչյուր գրանցում պահվում է ձեր վարորդական գործի մեջ 36 ամիս կամ ավելի երկար ժամանակով՝ խախտման տեսակից կախված: Ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել, եթե Ձեր վարորդական գործը ցույց է տալիս հետևյալ գումարային միավորներից որևէ մեկը՝

- 4 միավոր՝ 12 ամսում:
- 6 միավոր՝ 24 ամսում:
- 8 միավոր՝ 36 ամսում:

Երթևեկության կանոնները խախտողների դպրոց հաճախելու դատավճիռ

Եթե Ձեզ տրվի մեկ միավորանոց երթևեկության կանոնների խախտում, դատավորը կարող է առաջարկել երթևեկության կանոնների խախտման դպրոց հաճախելու հնարավորություն, որպեսզի տուգանքի մասին չզեկուցվի Ձեր ապահովագրական ընկերությունը, սակայն գրառումը մնա Ձեր վարորդական գործի մեջ: Դուք կարող եք դա անել յուրաքանչյուր 18 ամիսը մեկ անգամ: Դպրոցը դատարանին կտեղեկացնի Ձեր դասընթացի ավարտի մասին: Դուք նաև կստանաք դասընթացն անցնելու մասին վաստաթուղթ:

Եթե Դուք կոմերցիոն վարորդ եք և տուգանվել եք ոչ կոմերցիոն մեքենայում, տեսե՛ք Կալիֆոռնիայի կոմերցիոն վարորդների ձեռնարկը:

Կասեցում կամ ուժը կորցրած ճանաչում

Եթե Ձեր վարորդական գործում առկա են շատ միավորներ, Դուք կամարվեք որպես անվտանգ վարորդ: DMV-ն Ձեզ համար փորձաշրջան կսահմանի, կկասեցնի կամ չեղյալ կհամարի Ձեր վարորդական իրավունքը: Տվյալ իրավիճակում Դուք լսումների իրավունք ունեք: DMV-ն Ձեզ գրավոր կերպով կտեղեկացնի Ձեր վարորդական իրավունքի դեմ ձեռնարկված ցանկացած գործողության մասին և կտեղեկացնի Ձեզ Ձեր իրավունքների, ներառյալ՝ լսումների Ձեր իրավունքի մասին:

DMV-ն կչեղարկի Ձեր վարորդական իրավունքի վկայականը, եթե Դուք մեղադրվեք տրանսպորտային միջոցն անզգույշ վարելու կամ ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքի վայրից փախուստի դիմելու մեջ, որի հետևանքով որևէ մեկին մարմնական վնասվածք է հասցվել: Դատարանները նույնպես իրավասու են կասեցնել անձի վարորդական իրավունքը:

Ձեր կասեցման կամ չեղարկման ժամկետի ավարտից հետո կարող եք դիմել վարորդական վկայականի փոխարինման համար: Դուք պետք է ներկայացնեք ֆինանսական պատասխանատվություն ապացույց(օրինակ՝ SR 22/SR 1P):

Ձեր անչափահասի (ժամանակավոր) վարորդական իրավունքի պահպանումը

Եթե առաջին 12 ամիսների ընթացքում բախումների եմ ենթարկվում կամ ճանապարհային երթևեկության խախտումներ եմ թույլ տալիս, DMV-ն կարող է սահմանափակել կամ կասեցնել Ձեր վարորդական իրավունքը: Դուք չեմ կարող տրանսպորտային միջոց վարել, եթե Ձեր վարորդական իրավունքը կասեցված է կամ զրկված եմ վարորդական իրավունքից:

DMV- ն կարող է միջոցներ ձեռնարկել Ձեր վարորդական իրավունքի դեմ, եթե Դուք՝

- Ունեմաք 1 «մեղավոր» բախման կամ երթևեկության կանոնների խախտման 1 մեղադրանք: Մեկ «մեղավոր» բախումը նշանակում է, որ Դուք մեղավոր եմ ճանաչվել:
- Ունեմաք 2 «մեղավոր» բախման, ճանապարհային երթևեկության կանոնների խախտման 2 մեղադրանք կամ յուրաքանչյուրից 1 հատ: Դուք 30 օր չեմ կարող տրանսպորտային միջոց վարել, բանի դեռ վարորդական իրավունք ունեցող՝ առնվազն 25 տարեկան չափահաս Ձեր կողքին նստած չէ:
- Ունեմաք 3 «մեղավոր» բախման, երթևեկության կանոնների խախտման 3 մեղադրանք կամ երկուսից միասին՝ Ձեր վարորդական իրավունքը կդադարեցվի 6 ամսով: Դուք 1 տարի փորձաշրջան կանցնեք:
  — Եթե փորձաշրջանն անցնելիս ավելի շատ «մեղավոր» բախումների կամ երթևեկության կանոնների խախտման մեղադրանքներ ունեմաք, Ձեր վարորդական իրավունքը կրկին կկասեցվի:
- 15-20 տարեկանում ալկոհոլ և/կամ վերահսկվող նյութ օգտագործելու համար դատվածություն. դատարանը DMV-ին կկարգադրի կասեցնել Ձեր վարորդական իրավունքը 1 տարով կամ հետաձգել վարորդական իրավունք ստանալու համար դիմելու Ձեր իրավասությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ 18 տարեկան դառնալուն պես կարող եմ ձեռք բերել կանոնավոր (ոչ ժամանակավոր) վարորդական վկայական:

Վարչական լսումներ

Վարչական լսումները վարում է DMV-ն: Եթե Դուք ստացել եմ առցանց ծանուցում այն մասին, որ գործողություններ են ձեռնարկվում Ձեր վարորդական իրավունքի դեմ, Դուք պետք է լսում պահանջեք՝ ծանուցման տրամադրումից սկսած 10 օրվա ընթացքում կամ ծանուցումը փոստով ուղարկելու օրվանից 14 օրվա ընթացքում: Եթե Դուք ժամանակին հարցում չներկայացնեք, ապա կկորցնեք լսումների Ձեր իրավունքը:

Այս լսումները Ձեզ հնարավորություն են տալիս Ձեզ լսելի դարձնել՝ նախքան Ձեր վարորդական իրավունքի դեմ որևէ գործողություն ձեռնարկելը: Դուք նաև կարող եմ ստիպված լինել ներկայանալ դատարան նույն պատճառով: Դատարանի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն DMV-ի գործողություններից անկախ է:

Լսումների Ձեր իրավունքը

Դուք իրավունք ունեք

- Ներկայացնել համապատասխան ապացույցներ և վկաներ Ձեր անունից:
- Վկայել Ձեր անունից կամ ներկայացվել փաստաբանի կամ այլ ներկայացուցչի կողմից՝ Ձեր հաշվին: Փաստաբանի ներկայությունը պարտադիր չէ:
- Վերանայել ապացույցները և խաչաձև բննել որևէ վկայի վկայությունները: DMV-ն իր գործի ուսումնասիրությունը հիմնավորում է միայն գրավոր փաստաթղթերով: Եթե Դուք ցանկանում եք հարցաքննել որևէ մեկին, ով ներկայացրել է փաստաթուղթ կամ նշված է՝ որպես ապացույց օգտագործված փաստաթղթում, հայցադիմում ձեռք բերելը Ձեր պատասխանատվությունն է:

Վարչական լսումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/driversafety**:

Վստահ Ներկայացնող Վարորդ

Եթե հանդիպում եք որևէ մեկին, ով այլևս անվտանգ չի վարում, կարող եք Վարորդի վերաբնության հայտ (*Request for Driver Reexamination*, DS 699) ներկայացնել DMV-ին՝ նրա վարորդական որակավորումը վերանայելու համար: Ձևաթուղթ ստանալու համար այցելեք **dmv.ca.gov/reexamination**:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Ձեր վարորդական գործում նշված տեղեկությունների մեծ մասը հասանելի է հասարակության համար, բացառությամբ՝ Ֆիզիկական կամ հոգեկան խանգարման մասին գրառումների, հասցեի և սոցիալական ապահովության համարի:

Դուք կարող եք ձեռք բերել Ձեր վարորդական գործի պատճենը առցանց կամ տերմինալի մոտ: Վարորդական գործի հարցումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/record-requests**:

ԲԱԺԻՆ 8. Անվտանգ երթևեկություն

ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ ՁԵՐ ՇՐՋԱՊԱՏԻՆ

Անվտանգ վարելու համար, Դուք պետք է իմանաք, թե ինչ կա Ձեր շուրջ: Դա Ձեզ կօգնի ճիշտ որոշումներ կայացնել և արձագանքել ճանապարհի վտանգներին: Այս նկարը ցույց է տալիս Ձեր մեքենայի շրջակայքը:

- Կանաչ՝ Ձեր առջև
- Կապույտ՝ Ձեր կողքին
- Դեղին՝ կույր գոտիներ
- Կարմիր՝ Ձեր հետևում

Աչքերով զննեք Ձեր շրջապատը:

Որպեսզի արձագանքելու համար բավական ժամանակ ունենաք և խուսափեք վերջին րոպեին շարժումներ իրականացնելուց և վտանգներից, աչքերով զննեք Ձեր տրանսպորտային միջոցից առնվազն 10 վայրկյան հեռավորության վրա ընկած ճանապարհը:

Հետապնդում (չափազանց մոտիկից հետևելը)

Հետապնդման ժամանակ առջևում ընկած ճանապարհը տեսնելը դժվարանում է, քանի որ Ձեր դիմաց գտնվող տրանսպորտային միջոցը արգելափակում է Ձեր տեսադաշտը: Դուք արձագանքելու համար բավարար ժամանակ չեք ունենա, եթե Ձեր դիմացի վարորդը հանկարծակի արգելակի: Օգտագործեք երեք վայրկյանի կանոնը՝ հետևելու համար անվտանգ հեռավորությունն ապահովելու և բախումից խուսափելու համար: Ապահով հեռավորության վրա այլ տրանսպորտային միջոցներին հետևելը Ձեզ բավական ժամանակ է տալիս արձագանքելու, եթե մեկ այլ վարորդ սխալ է թույլ տալիս:

Եթե ինչ-որ մեքենա Ձեր դիմացից շատ մոտ ընթանալով միախառնվում է երթևեկության հոսքին,
ոտքը հեռացրեք արագարարի ոտնակից: Դա տարածություն կստեղծի Ձեր և Ձեր առջևում գտնվող մեքենայի միջև:

Ձեր մեքենայի առջև ավելի մեծ տարածք թողեք, երբ

- Ձեզ հետապնդող տրանսպորտային միջոց կա: Պահպանեք Ձեր ընթացքը և արագությունը: Այնուհետև, երբ անվտանգ է, շարժվեք աջ՝ Ձեր գոտին փոխելու և հետապնդող տրանսպորտային միջոցին ճանապարհ տալու համար:
- Մոտոցիկլետների հետևում մանրախիճի և մետաղական մակերեսների վրա (կամուրջի վանդակաճաղեր, երկաթուղային գծեր և այլն):

Տեղյակ եղեք, թե ինչ կա Ձեր կողքերում

Տեղյակ եղեք, թե ինչկա Ձեր յուրաքանչյուր կողքին: Որպեսզի բավականաչափ տարածություն պահպանեք՝ ապահով մանևրելու և այլ վարորդներին արձագանքելու համար,

- Մի՛ հայտնվեք մեկ այլ վարորդի կույր գոտում:
- Խուսափե՛ք այլ տրանսպորտային միջոցների ուղիղ երկայնքով երթևեկելուց:
- Մայրուղիներ մտնող տրանսպորտային միջոցների համար տեղ հատկացրեք, նույնիսկ եթե Դուք երթևեկության առավելություն ունեք: Պատրաստ եղե՛ք արագ փոփոխությունների և հետևեք մյուս վարորդների ազդանշանների:
- Տարածություն պահեք Ձեր մեքենայի և կայանված տրանսպորտային միջոցների միջև:
- Նայե՛ք ձախ և աջ, եթե անգամ խաչմերուկի վրա լուսացույցի կարմիր լույս է վառվում կամ կանգ առնելու նշան կա:

Կույր գոտիներ

Յուրաքանչյուր տրանսպորտային միջոց ունի կույր գոտիներ: Դրանք մեքենայի շրջակայքում գտնվող տարածքներ են, որոնք վարորդը չի կարող տեսնել ուղիղ առաջ նայելիս կամ հայելիներից օգտվելիս: Տրանսպորտային միջոցներից շատերի համար կույր գոտիները կողային մասում են, վարորդից մի փոքր հետ:

Ստվերագծված տարածքները Ձեր կույր գոտիներն են:

Կույր գոտիները ստուգելու համար ուսի վրայով կողքի պատուհաններից նայեք աջ և ձախ: Նայելիս շրջեք միայն Ձեր գլուխը: Մի շրջեք Ձեր ամբողջ մարմինը կամ ղեկը: Ստուգեք Ձեր առջևի կույր գոտիները նախքան՝

- Երթևեկության գոտիներում վերադասավորվելը:
- Խաչմերուկում շրջադարձ կատարելը:
- Երթևեկության հետ միաձուլվելը:
- Հետընթաց շարժվելը:
- Կայանատեղին լքելը:
- Զուգահեռ կայանելը:
- Եզրաքարից հեռանալը:
- Տրանսպորտային միջոցի դուռը բացելը:

Իմացեք, թե ինչ կա Ձեր հետևում

Իմանալով, թե ինչ կա Ձեր հետևում, կարող եք խուսափել հետևի կողմից բախումներից: Հաճախ ստուգեք Ձեր հետևի երթևեկությունը՝ օգտագործելով հետևի հայելին, կողային հայելիները և շրջելով Ձեր գլուխը, երբ

- Փոխում եք երթևեկության գոտին:
- Ստուգում եք Ձեր կույր գոտիները:
- Նվազեցնում եք Ձեր տրանսպորտային միջոցի արագությունը:
- Շրջվում եք դեպի կողային ճանապարհ կամ ուղեմուտք:
- Կանգ եք առնում ավտոկայանատեղի մտնելու համար:
- Մոտենում եք եզրաքարի կամ հեռանում եք դրանից:
- Հետընթաց եք շարժվում:

ՏԻՐԱՊԵՏԵՔ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

Մթություն

Գիշերը վարելիս օգտագործեք Ձեր ցոլալապտերների հեռարձակ լույսերը բաց գյուղական ճանապարհներում կամ քաղաքի մութ փողոցներում: Այնպիսի արագությամբ ընթացեք, որ կարողանաք մեքենան կանգնեցնել Ձեր ցոլալապտերների արձակած լուսավորության սահմաններում: Մի՛ օգտագործեք ցոլալապտերների հեռարձակ լույսերն այն վայրերում, որտեղ դրանք արգելվում են: Թուլացրեք ցոլալապտերների հեռարձակ լույսերը, որպեսզի խուսափեք մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդին կուրացնելուց: Եթե մեկ ուրիշ մեքենայի լույսերը չափազանց պայծառ են.

- Մի՛ նայեք ուղիղ ցոլալապտերներին:
- Նայե՛ք դեպի Ձեր երթևեկության գոտու աջ եզրը:
- Դիմացից մոտեցող տրանսպորտային միջոցին հետևեք աչքի ծայրով:
- Մի՛ արձագանքեք մյուս վարորդին՝ Ձեր ցոլալապտերների հեռարձակ լույսերը վառ պահելով: Դա միայն երկուսիդ համար էլ տեսնելն ավելի կդժվարացնի:

Երբ գիշերը անձրև է գալիս, օգտագործեք Ձեր ցոլալապտերների մոտարձակ լույսերը: Տրանսպորտային միջոցը վարելիս մի՛ օգտագործեք միայն կայանման լույսերը: Գիշերային ժամերին տրանսպորտային միջոց վարելիս հիշեք՝

- Հետիոտներին և հեծանվորդներին գիշերը շատ ավելի դժվար է նկատել, ուստի աչալուրջ եղեք:
- Գիշերային ժամերին կարող են իրականացվել ճանապարհաշինական աշխատանքներ: Նվազեցրեք արագությունը ավտոմայրուղիների այն հատվածներում, որտեղ շինարարական աշխատանքներ են կատարվում:
- Պայծառ լուսավորված որևէ վայրից դուրս գալուց հետո տրանսպորտային միջոցը դանդաղ վարեք այնքան ժամանակ, մինչև Ձեր աչքերը հարմարվեն մթությանը:
- Երբ դեպի Ձեզ մոտեցող տրանսպորտային միջոցն ունի մեկ լույս, հնարավորինս աջ կողմով երթևեկեք: Այն կարող է լինել հեծանվորդ, մոտոցիկլավար կամ տրանսպորտային միջոց, որի ցոլալապտերներից մեկը բացակայում է:

Արևի շողեր

Արևի շողերը կառավարելու համար.

- Հողմապակին ներսից և դրսից մաքուր պահեք:
- Կրեք բևեռացված արևային ակնոց:
- Մյուս տրանսպորտային միջոցներից բավականաչափ տարածություն պահպանեք:
- Համոզվեք, որ Ձեր տրանսպորտային միջոցի հովարը աշխատում է և չկա դրան խոչընդոտող որևէ բան:
- Ուշադիր եղեք հետիոտնային անցումներին: Հնարավոր է, որ դժվարությամբ տեսնեք նրանց:
- Փորձեք խուսափել արևածագի և մայրամուտի ժամանակ տրանսպորտային միջոց վարելուց:

Սայթաքուն ճանապարհներ

Սայթաքել է կոչվում այն երևույթը, երբ անվադողերից մեկը կամ մի քանիսը կորցնում են ճանապարհին կառչելիությունը, և մեքենան սկսում է սահել: Հնարավոր է չկարողանաք կառավարել Ձեր տրանսպորտային միջոցը: Կան սայթաքուն ճանապարհների մի քանի տեսակներ:

Սահուն մակերեսով սայթաքուն ճանապարհներ

Ճանապարհի մերկասառույցը և կուտակված ձյունը կարող են հանգեցնել Ձեր մեքենայի սահելուն: Հավանականությունն ավելի մեծ է, եթե Դուք չափազանց արագ եք վարում կամ իջնում եք ներքև: Դանդաղ վարեք և տարածություն թողեք Ձեր մեքենայի և Ձեր առջևում գտնվող մեքենայի միջև: Սայթաքուն մակերեսների վրա սահելը կանխելու համար

- Ոլորանին կամ խաչմերուկին մոտենալիս դանդաղեցրեք մեքենայի ընթացքը: Կտրուկ ոլորանների դեպքում դանդաղեցրեք Ձեր արագությունը, երբ մոտենում եք դրանց կամ անցնում դրանց միջով:
- Խուսափեք կտրուկ շրջադարձերից և արագ արգելակումներից:
- Նախքան զառիթափ բլուրով իջնելը դանդաղեցրեք Ձեր ընթացքը:
- Խուսափեք այնպիսի տարածքներից, ինչպիսիք են՝ սառցաբեկորները, թաց տերևները, յուղը կամ չհոսող ջուրը:

Եթե Դուք սկսում եք սահել, հետևեք հետևյալ քայլերին՝

1. Դանդաղ հեռացրեք Ձեր ոտքը գազի ոտնակից:
2. Մի՛ օգտագործեք արգելակները:
3. Ղեկը պտտեք սայթաքման ուղղությամբ:
4. Փորձեք այնպես անել, որ տրանսպորտային միջոցի գոնե մի անիվը հայտնվի ճանապարհի չոր մայթին:

Լոված անիվներով սահք

Լոված անիվներով սահքը սովորաբար առաջանում է չափազանց ուժեղ արգելակման պատճառով, երբ շատ արագ եք ընթանում: Այս դեպքում տրանսպորտային միջոցը կսահի՝ անկախ այն բանից, թե որ կողմ կթեքեք ղեկը: Լոված անիվներով սահքից դուրս գալու համար, Եթե Ձեր մեքենան ունի

- Հակաարգելափակիչ արգելակման համակարգ (ABS), ապա աստիճանաբար սեղմեք արգելակը, մինչև հասնեք անվտանգ արագության:
- Հետևի անիվի ABS (տարածված է թեթև բեռնատարներում),

— ապա թուլացրեք արգելակի ոտնակի վրա ունեցած ճնշումը՝ միաժամանակ պահպանելով բավականաչափ ճնշում, որպեսզի առջևի անիվները նորից պտտվեն, որպեսզի կարողանաք դեկը վարել:
— կանգնեցրեք արգելակումը և դեկը ուղղեք սահքի ուղղությամբ:

- Առջևի անիվի ABS-ի դեպքում, հանեք Ձեր ոտքը արգելակման ոտնակից՝ անիվներն ապաարգելափակելու համար: Դեկը պտտեք այն ուղղությամբ, ուր ցանկանում եք գնալ և ուղղեք առջևի անիվները, երբ մեքենան ինքը սկսում է ուղղվել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Ճշտելու համար, թե արդյոք Ձեր մեքենան ունի ABS, ստուգեք Ձեր տրանսպորտային միջոցի ձեռնարկը:

Եթե Ձեր մեքենան հագեցած չէ ABS-ով և սկսում է սահել, արագ սեղմեք Ձեր արգելակները՝ մինչև ապահով արագության հասնելը: Եթե Դուք

- սեղմում եք արգելակի ոտնակը, և այն դիպչում է հատակին, արագ սեղմեք արգելակները՝ նրբորեն արգելակի ոտնակի վրա ճնշում գործադրելով և ճնշումը թուլացնելով:
- արգելակները սեղմելիս անցեք ավելի ցածր կամ չեզոք փոխանցման՝ ընթացքը դանդաղեցնելու համար: Այնուհետև կանգ առնելու համար փորձեք օգտագործել վթարային արգելակը:

Եթե Ձեր արգելակները թրջվում են, կարող եք դրանք չորացնել՝ միաժամանակ թեթև սեղմելով գազի և արգելակման ոտնակները: Դա արեք այնքան մինչև արգելակները չորանան:

Սայթաքուն ճանապարհներ

Անձրևի, ձյան կամ ցեխի դեպքում ճանապարհները կարող են ավելի սայթաքուն դառնալ: Վարեք ավելի դանդաղ, քան կվարեիք չոր ճանապարհի դեպքում, և թողեք ավելի շատ տարածություն Ձեր և Ձեր առջևի մեքենայի միջև: Կարգավորեք Ձեր արագությունը տարբեր պայմանների հարմարվելու համար՝

- Թաց ճանապարհի վրա հնվազեցրեք արագությունը 5-10 մղոն/ժամով:
- Ջյունածածկույթի վրա կիսով չափ հնվազեցրեք արագությունը:
- Սառույցի վրա հնվազեցրեք Ձեր արագությունը մինչև 5 մղոն/ժ-ի:

Ճանապարհի որոշ մակերեսներ խոնավ վիճակում ավելի սայթաքուն են, քան մյուսները: Սովորաբար այդպիսի հատվածներն ունենում են նախազգուշացնող նշաններ: Ահա որոշ իրավիճակներ, երբ ճանապարհը կարող է ավելի սայթաքուն լինել.

- Ծառերի կամ շենքերի ստվերները կարող են թաքցնել սառցեբեկորները ցուրտ և խոնավ օրերին: Ճանապարհի այդ հատվածներն առաջինն են սառչում և չորանում են վերջինը:
- Կամուրջները և վերգետնյա անցումները սովորաբար ճանապարհի մնացած մասից ավելի շուտ են սառչում: Նրանք կարող են թաքցնել սառցեբեկորները:
- Երբ սկսում է անձրև գալ, մայթերը կարող են շատ սայթաքուն դառնալ:

Դանդաղեցրե՛ք տրանսպորտային միջոցի ընթացքը անձրևի, մանրամաղ անձրևի կամ ձյան առաջին նշանների դեպքում: Հատկապես, եթե որոշ ժամանակ չոր և շոգ է եղել, քանի որ ճանապարհի մակերեսի յուղն ու փոշին չեն մաքրվել:

Միացրեք հողմապակու մաքրիչները, ցոլալապտերների մոտարձակ լույսը և ապակետաքացուցիչը: Ուժգին անձրևախառն փոթորկի կամ ձյունամրրիկի ժամանակ հնարավոր է, որ ճանապարհի տեսանելիությունը 100 ֆուտից ավելի չլինի: Եթե Դուք 100 ֆուտից ավելի հեռու ընկած տարածությունը չեք կարողանում տեսնել, ապա 30 մղոն/ժ արագությունից ավելի արագ վարելը անվտանգ չէ: Գուցե հարկ լինի ժամանակ առ ժամանակ կանգ առնել և ցեխը կամ ձյունը մաքրել հողմապակու, առջևի ու հետևի լապտերների վրայից: Եթե տրանսպորտային միջոցը վարում եք ձնառատ տարածքներում, Ձեր անվադողերի համար ձյան շղթաներ ունեցեք: Ձյան շղթաները մեծացնում են Ձեր անվադողերի կառչելիությունը: Ձեր մեքենայի համար կրեք ճիշտ բանակության ու տեսակի շղթաներ:

Ջրասահք

Ջրասահքը տեղի է ունենում թաց կամ անձրևոտ պայմաններում վարելիս: Ջրասահքը ջրի վրա մեքենայի վարումն է, բանի որ անվադողերը կորցնում են ճանապարհի հետ ամբողջ շփումը: Այդ ժամանակ շարժման ուղղության անհետաև փոփոխությունը կամ բամու թեթև հարվածը կարող է մեքենայի սահքի պատճառ հանդիսանալ: Ջրասահքից խուսափելու համար

- Դանդաղ վարեք:
- Հնարավորության դեպքում շրջանցեք չշարժվող ջրային տարածքները:
- Դանդաղեցրե՛ք արագությունը, եթե անվադողերից լսվում են ջրի ճողփյունի ձայներ:
- Գոտի կամ ուղղություն փոխելիս դանդաղեցրեք արագությունը:

Եթե Ձեր մեքենան սկսում է ջրասահել՝

- Աստիճանաբար նվազեցրեք Ձեր արագությունը:
- Մի՛ օգտագործեք արգելակները: Հանկարծակի արգելակումը կարող է հանգեցնել Ձեր մեքենայի վերահսկողության կորստին:

Ձյան կամ ցեխի մեջ խրվելը

Եթե խրվել եք ձյան կամ ցեխի մեջ, հետևեք հետևյալ քայլերին՝

1. Անցեք ավելի ցածր փոխանցման և ուղիղ պահեք առջևի անիվները:
2. Ոտքը կամաց դրեք գազի ոտնակի վրա: Խուսափեք անիվները պտտելուց:
3. Դանդաղ շարժվեք առաջ՝ որքան հնարավոր է հեռու:
4. Անցեք հետընթաց վարման և դանդաղ հետ գնացեք՝ որքան հնարավոր է հեռու: Մի՛ պտտեք անիվները:
5. Կրկին անցեք ավելի ցածր փոխանցման և առաջ շարժվեք:
6. Կրկնեք առաջ-հետ շարժումը այնքան՝ մինչև մեքենան դուրս գա խրված դիրքից:
7. Խորը ցեխի կամ ձյան մեջ անվադողերի տակ դրեք տախտակներ, ծառերի ճյուղեր և այլն: Կատարեք այս գործողությունը միայն այն ժամանակ, երբ մեքենան կանգնած վիճակում է:

Հեղեղված ճանապարհներ

Երթևեկելի մասում չափազանց շատ ջրի առկայությունը կարող է հեղեղման պատճառ դառնալ: Դա կարող է տեղի ունենալ աստիճանաբար կամ հանկարծակի: Կարևոր է հասկանալ երթևեկելի մասում ջրի առկայությունից բխող ռիսկերը՝

- Ճանապարհից տրանսպորտային միջոցի բռվել-տարվելը:
- Լողացող բեկորները և աննկատ վտանգները:
- Ճանապարհի փլվելը:
- Մեքենայի անսարքության առաջացումը:
- Էլեկտրահարումը, եթե հեղեղումն ուղեկցվում է էլեկտրահաղորդման գծերի տապալմամբ:

Հնարավոր է, որ հայելով հնարավոր չլինի որոշել ջրհեղեղի խորությունը: Եթե ջուրը խորն է, ճանապարհը կարող է չափազանց վտանգավոր լինել անցնելու համար: Ավելի լավ է այլ երթուղի գտնել: Եթե հեղեղված երթևեկելի մասով անցնելուց բացի այլ տարբերակ չունեք, անպայման դանդաղ ընթացեք: Ջրի միջով անցնելուց հետո փորձարկեք Ձեր արգելակները՝ համոզվելու համար, որ դրանք սարքին են:

Ուժեղ քամիներ

Ուժեղ քամիները կարող են վտանգ ներկայացնել վարելիս: Հատկապես ավելի մեծ տրանսպորտային միջոցներին, ինչպիսիք են՝ բեռնատարները, ֆուրգոնները և կցորդներ ունեցող տրանսպորտային միջոցները: Ուժեղ քամիների ժամանակ երթևեկելիս՝

- Նվազեցրեք մեքենայի արագությունը: Դա Ձեզ հնարավորություն է տալիս ավելի լավ վերահսկել Ձեր մեքենան: Դուք ավելի շատ ժամանակ կունենաք արձագանքելու, եթե Ձեր մեքենան քամու ուժգին հարվածի ենթարկվի:
- Ձեռքերով ամուր բռնեք տրանսպորտային միջոցի ղեկը: Ուժեղ քամու հարվածներն անկանխատեսելի են: Եթե Դուք պատշաճ ձևով չբռնեք անիվը և քամու ուժեղ հարվածի ենթարկվեք, Դուք կարող եք կորցնել մեքենայի ղեկի կառավարումը .
- Զգույշ եղե՛ք: Նայեք Ձեր առաջ և զգուշացեք ճանապարհի վրա առկա կողմնակի առարկաներից: Ձեզ բավականաչափ ժամանակ է հարկավոր՝ ճանապարհային վտանգներին արձագանքելու համար:
- Մի՛ օգտագործեք «կռուիզ կոնտրոլ» համակարգը: Առավելագույն հսկողության տակ պահեք գազի ոտնակը՝ քամու հարվածի դեպքում:
- Ձեռնարկեք կանխազգուշական միջոցներ: Մի կողմ քաշվելը և փոթորիկի ավարտին սպասելը կարող է ավելի անվտանգ լինել:

Մառախուղ կամ թանձր ծուխ

Խուսափեք թանձր մառախուղի կամ ծխի պայմաններում մեքենա վարելուց: Փորձեք հետաձգել Ձեր ուղևորությունը մինչև մառախուղի ավարտը: Եթե ստիպված եք վարել թանձր մառախուղի կամ ծխի պայմաններում՝

- Դանդաղ վարեք:
- Միացրեք Ձեր ցոլալապտերների մոտարձակ լույսերը: Ցոլալապտերների հեռարձակ լույսերը հետ կանդրադառնան և կխանգարեն տեսանելիությանը:
- Երբեք մեքենան մի վարեք միայն կայանման կամ հակամառախուղային լույսերով:
- Համոզվեք, որ կարող եք կանգ առնել այն տարածքում, որը կարող եք տեսնել Ձեր առջևում:
- Մեծացրեք առջևից ընթացող տրանսպորտային միջոցի ու Ձեր միջև եղած տարածությունը:
- Անհրաժեշտության դեպքում օգտագործեք Ձեր առջևի ապակու մաքրիչները և ապակեմաքացուցիչները:
- Աշխատեք չհատել երթևեկության գոտիները կամ վազանց չկատարել, եթե դրա խիստ անհրաժեշտությունը չկա:
- Փորձեք լսել այն մեքենաների ձայները, որոնց չեք կարող տեսնել:

Եթե մառախուղը չափազանց խիտ է անվտանգ երթևեկելու համար, փորձեք դուրս գալ ճանապարհից: Ակտիվացրեք Ձեր վթարային թարթող լույսերը և սպասեք պայմանների բարելավմանը:

Իրավապահ մարմինների կողմից երթևեկության ընդհատում

Ճանապարհային երթևեկության ընդհատման ժամանակ ոստիկանը միացնում է իր մեքենայի հետևի վթարային լույսերը և դանդաղորեն ելք ու մուտք է անում գոտիների միջև: Իրավապահերն օգտագործում են երթեւեկության ընդհատումները, որպեսզի

- դանդաղեցնեն կամ կանգնեցնեն երթևեկությունը՝ ճանապարհը վտանգազերծելու համար.
- դանդաղեցնեն կամ կանգնեցնեն երթևեկությունը թանձր մառախուղի կամ անբարենպաստ երթևեկության պայմանների պատճառով:
- կանխեն պատահարներն անսովոր պայմաններում:

Դուք պետք է՝

- Միացնեք ձեր վթարային լույսերը՝ զգուշացնելու այլ վարորդներին:
- Դանդաղ իջեցնեք արագությունը այնքան, որքան իրավապահ մարմնի աշխատակցի արագությունն է: Հանկարծակի մի՛ արգելակեք, եթե արգելակումն անհրաժեշտ չէ բախումից խուսափելու համար: Պահպանեք անվտանգ հեռավորություն պարեկային մեքենայից:
- Զվազանցեք պարեկային մեքենայի կողքով: Մի արագացրեք Ձեր ընթացքը, քանի դեռ սպան չի անջատել վթարային լույսերը, և երթևեկության պայմանները թույլ չեն տալիս վերադառնալ Ձեր նորմալ արագությանը .

ՊԱՇՏՊԱՆԵՔ ՁԵԶ ԵՎ ՁԵՐ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻՆ

Ամրագոտիներ

Դուք և Ձեր ուղևորները պետք է կապեք ամրագոտիներ: Դուք կարող եք տուգանվել, եթեչկապեք Ձեր ամրագոտիները: Եթե ուղևորի 16 տարին չի լրացել, Դուք կարող եք տուգանվել նաև այն դեպքում, երբ այդ ուղևորը չի կապել ամրագոտին:

Բախումների մեծ մասի ժամանակ գոտկատեղի և ուսի ամրագոտիները կբարձրացնեն Ձեր գոյատևելու հավանականությունը: Այս պատկերը ցույց է տալիս, թե ինչ կարող է տեղի ունենալ բախման ժամանակ:

Երբ բախվում եք, Ձեր տրանսպորտային միջոցը կանգ է առնում: Բայց Դուք շարունակում եք առաջ շարժվել նույն արագությամբ, որով երթևեկում էիք: Դուք կանգ եք առնում միայն այն ժամանակ, երբ հարվածում եք կառավարման վահանակին կամ հողմապակուն: Եթե Ձեզ կողքից հարվածեն, ապա հարվածը Ձեզ հետ ու առաջ կնետի: Գոտկատեղի և ուսի ամրագոտիները Ձեզ պահում են տրանսպորտային միջոցը կառավարելու համար ավելի լավ դիրքում: Դրանք կարող են նաև նվազագույնի հասցնել լուրջ վնասվածքների քանակը:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ. Եթե կարմիր սլաքը մեկ այլ մեքենա լիներ, որը վարորդի կողմից հարվածեր Ձեր մեքենային
1. Նախ հարվածը Ձեզ կնետեր դեպի վարորդի կողքի դուռը,
2. Այնուհետև Դուք հետ կթռչեիք և կնետվեիք դեպի ուղևորի կողքի դուռը:

Վնասվածքներից կամ մահից խուսափելու համար կարևոր է անվտանգության գոտին ճիշտ կապել:

- Կապեք ուսի ամրագոտին Ձեր ուսի և կրծքավանդակի վրայով: Այն պետք շատ քիչ թույլ լինի կամ ընդհանրապես թույլ չլինի: Մի կրեք ամրագոտին Ձեր թևի տակով կամ Ձեր մեջքին:
- Կարգավորեք գոտկատեղի գոտին այնպես, որ այն ամուր լինի և նստի Ձեր ազդրերին: Հակառակ դեպքում Դուք վթարի ժամանակ կարող եք գոտուց դուրս սահել:
- Եթե հղի եք, գոտկատեղի գոտին կրեք ձեր որովայնի տակ՝ հնարավորինս ցածր: Տեղադրեք ուսագոտին ձեր կրծքերի արանքում և որովայնի ուռուցիկ հատվածի մոտ:

Երեխաների անվտանգության համակարգ և հատուկ մանկական նստատեղեր

Երեխաներին պետք է ապահովեք դաշնային կանոնակարգով հաստատված մանկական ուղևորների անվտանգության համակարգով կամ անվտանգության գոտով: Պահանջները կախված են երեխայի հասակից և տարիքից:

- 2 տարեկանից ցածր երեխաներին, ում քաշը չի գերազանցում 40 ֆունտը, իսկ հասակը՝ 3 ֆուտ 4 դյույմը, պահովեք մանկական ուղևորների անվտանգության հետահայաց անվտանգության համակարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Երեխաների՝ հետևի ուղևորների զսպման համակարգում գտնվող երեխան չի կարող նստել անվտանգության բարձիկներով հագեցած մեքենայի առջևի նստատեղին:

- 8 տարեկանից ցածր կամ 4 ֆուտ 9 դյույմից պակաս հասակ ունեցող երեխաներին պահովեք հետևի նստատեղի՝ դաշնային կարգով հաստատված մանուկ ուղևորների անվտանգության համակարգում: 8 տարեկանից փոքր երեխաները կարող են գտնվել տրանսպորտային միջոցի առջևի նստարանին՝ դաշնային կարգով հաստատված մանուկ ուղևորների անվտանգության համակարգում: Նրանք կարող է նստել առջևի նստատեղին, եթե՝
  - — Հետևի նստատեղ առկա չէ:
  - — Հետևի նստատեղերը թեք նստատեղեր են, որոնք ուղղված են դեպի կողքերը:
  - — Հետևի նստատեղերը հետ են ուղղված:
  - — Երեխա ուղևորների անվտանգության համակարգը հնարավոր չէ պատշաճ ձևով տեղադրել հետևի նստատեղին:
  - — Հետևի բոլոր նստատեղերն արդեն զբաղեցված են 7 տարեկան կամ ավելի փոքր երեխաներով:
  - — Բժշկական նկատառումներով՝ երեխան չպետք է երթևեկի հետևի նստատեղին նստած:
- 8 տարեկան կամ ավելի բարձր տարիքի կամ առնվազն 4 ֆուտ 9 դյույմ հասակ ունեցող
  երեխաները կարող են օգտագործել դաշնային չափորոշիչներին համապատասխանող և
  պատշաճորեն տեղակայված ամրագոտիներ:

Ձեր տեղական իրավապահ մարմինը կամ հրշեջ վարչությունը կարող են ստուգել Ձեր մանկական ուղևորների համակարգի տեղադրումը: Երեխայի մեծանալուն զուգընթաց ստուգեք՝ արդյոք մանկական ուղևորների անվտանգության համակարգի չափերը համապատասխանում են Ձեր երեխայի չափերին:

Անվտանգության բարձիկներ

Անվտանգության բարձիկները շատ տրանսպորտային միջոցների անվտանգության արժեքավոր տարր են: Նրանք Ձեզ ավելի ապահով կպահեն, քան միայն ամրագոտիների կիրառումը:

Վարեք անվտանգության բարձիկներից առնվազն 10 դյույմ հեռավորության վրա այնքան ժամանակ, քանի դեռ կկարողանաք լիարժեք վերահսկել Ձեր տրանսպորտային միջոցը: Ձափեք ղեկի կենտրոնից մինչև Ձեր կրծքավանդակը ընկած տարածությունը: Կապվեք Ձեր մեքենայի դիլերի կամ արտադրողի հետ, եթե չեք կարող ապահով նստել անվտանգության բարձիկից 10 դյույմ հեռավորության վրա: Նրանք կարող են խորհուրդներ տալ Ձեր անվտանգության բարձիկից հետ շարժվելու լրացուցիչ եղանակների վերաբերյալ: Ուղևորները նույնպես պետք է նստեն ուղևորի անվտանգության բարձիկից առնվազն 10 դյույմ հեռավորության վրա:

ԾԱՆՈԹԻԹՅՈՒՆ՝ կողային անվտանգության բարձիկի մոտ նստած երեխաները կարող են ենթարկվել լուրջ կամ մահացու վնասվածք ստանալու վտանգի:

Անուշադրության մատնված երեխաներ և կենդանիներ

Արգելվում է մինչև 6 տարեկան երեխաներին մենակ թողնել ավտոմեքենայում: Երեխային կարող են թողնել առնվազն 12 տարեկան անձի հսկողության ներքո:

Բացի այդ, նաև կարևոր է հիշել, որ երեխաներին կամ կենդանիներին շոգ մեքենայի մեջ մենակ թողնելը վտանգավոր է և անօրինական: Կայանած մեքենայի ներսում ջերմաստիճանը կարող է արագ աճել, երբ այն արևի տակ է: Նույնիսկ եթե պատուհանը մի փոքր բաց է թողնված: Ձափից շատ ջերմության ազդեցությունը կարող է հանգեցնել ջրազրկման, ջերմային կաթվածի և մահվան:

ԿԱՌԱՎԱՐԵՔ ՁԵՐ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Կալիֆոռնիայում Դուք երբեք չեք կարող երթևեկել ավելի արագ, քան անվտանգ է ներկայիս ճանապարհային պայմանների համար: Սա հայտնի է որպես *Basic Speed Law*՝ «Հիմնական արագության օրենք»:

Համոզվեք, որ կառավարում եք Ձեր արագությունը և դանդաղեցրեք, երբ պայմանները պահանջում են դանդաղեցնել Ձեր ընթացքը: Ինչպիսին էլ լինի ճանապարհին նշված թույլատրելի արագությունը, Ձեր արագությունը պետք է կախված լինի՝

- Ճանապարհին տրանսպորտային միջոցների քանակից:
- Այդ ճանապարհով ընթացող այլ տրանսպորտային միջոցների արագությունից:
- Ճանապարհի մակերևույթի հարթ, անհարթ, մանրախճապատ, թաց, չոր, լայն կամ նեղ լինելուց:
- Երթևեկելի մասում գտնվող կամ այն հատող հեծանվորդներից կամ հետիոտներից:
- Եղանակից՝ անձրև, մառախուղ, ձյուն, քամի կամ փոշի:
- Երթևեկության գերբեռնվածությունից. Ձեր վարելու սովորությունների փոքր փոփոխությունները կարող են օգնել նվազեցնել գերբեռնվածությունը: Խուսափեք ավտոմայրուղու գծերից ներս և դուրս անելուց:

Կան նաև արագության սահմանափակման հատուկ օրենքներով և պայմաններով իրավիճակներ, երբ Դուք պետք է նվազեցնեք Ձեր արագությունը: Կալիֆոռնիայի ավտոմայրուղիների մեծ մասում առավելագույն թույլատրված արագությունը ժամում 65 մղոն է: Երկգոտի չբաժանված ավտոմայրուղում և կցորդով մեքենաների համար առավելագույն թույլատրելի արագությունը ժամում 55 մղոն է:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵՔ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Երբեմն ճանապարհի երկու կողմում էլ կարող է միաժամանակ վտանգ լինել: Օրինակ՝ աջ կողմում կարող են կայանված մեքենաներ լինել, իսկ ձախ կողմում՝ հանդիպակաց մեքենաներ:

Եթե մի վտանգը մյուսից ավելի մեծ է, ապա ավելի շատ տարածություն թողեք ավելի վտանգավոր իրավիճակի համար: Ենթադրեք, որ Դուք գտնվում եք երկգոտի ճանապարհին, և մոտենում է հանդիպակաց տրանսպորտային միջոց ձախից, իսկ աջ կողմում Ձեր առջևում հեծանվորդ կա: Տրանսպորտային միջոցի և հեծանվորդի արանքով անցնելու փոխարեն՝ վտանգները հաղթահարեք հերթով: Նախ՝ դանդաղեցրեք ընթացքը և թույլ տվեք, որ հանդիպակաց տրանսպորտային միջոցը Ձեզ վազանցի: Երբ մեքենան Ձեզ արդեն վազանցել է, շարժվեք դեպի ձախ՝ հեծանվորդին անցնելու համար շատ տարածությունը՝ առնվազն երեք ֆուտ, թողնելով: Եթե մոտեցող տրանսպորտային միջոցների կայուն հոսք է, ապա օգտագործեք ձախ գոտու այնքան մաս, որ կարողանաք ապահով վազանցել հեծանվորդին:

ԻՄԱՑԵՔ ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ

Կան արտակարգ իրավիճակների բազմաթիվ տեսակներ, որոնց կարող եք առնչվել մեքենա վարելիս: Արտակարգ իրավիճակների մասին գիտելիքները Ձեզ կօգնեն ապահով լինել:

Իջած անվադողեր

Եթե Ձեր անվադողն իջել է, խուճապի մի՛ մատնվեք կամ չափից սուր արձագանքեք: Հանկարծակի արգելակելը կամ ոտքն արագացուցիչից կտրուկ հեռացնելը կարող է հանգեցնել մեքենայի վերահսկողության կորստի: Փոխարենը, հետևեք Մայրուղիներում անվտանգ երթևեկության ազգային վարչության կողմից առաջարկված հետևյալ քայլերին (*National Highway Traffic Safety Administration*)՝

- Երկու ձեռքով բռնեք ղեկը:
- Եթե հնարավոր է և անվտանգ, պահեք Ձեր մեքենայի ընթացիկ արագությունը:
- Աստիճանաբար բաց թողեք արագացուցիչը:
- Ըստ անհրաժեշտության ուղղեք մեքենայի ղեկը այն կայունացնելու և կառավարումը վերականգնելու համար:
- Ողղեք ղեկն այն ուղղությամբ, որով ցանկանում եք, որ Ձեր մեքենան գնա:
- Երբ Ձեր մեքենայի ընթացքը կայունանա, շարունակեք դանդաղեցնել արագությունը և դուրս եկեք ճանապարհից, երբ և որտեղ անվտանգ է:

Մեքենավարում Ճանապարհի Երթևեկելի Հատվածից Դուրս

Եթե Ձեր անիվները հեռանում են մայթից,

1. Ամուր բռնե՛ք ղեկը:
2. Հեռացրե՛ք ոտքը գազի ոտնակից:
3. Ձգուշորեն արգելակե՛ք:
4. Ստուգե՛ք Ձեր հետևի երթևեկությունը:
5. Ձգուշորեն ետ գնացե՛ք դեպի մայթ:

Մի՛ քաշեք կամ շրջեք Ձեր ղեկը չափազանց մեծ ուժով: Դրա հետևանքով կարող եք հայտնվել հանդիպակաց երթևեկության մեջ:

Գերտաքացման պայմաններ

Ծայրահեղ շոգին Դուք պետք է՝

- Ստուգեք ջերմաչափը:
- Խուսափեք երկար ժամանակ բարձր արագությամբ վարելուց:
- Անջատեք օդորակիչը:

Ծայրահեղ ցրտին Դուք պետք է՝

- Ստուգեք ջերմաչափը: Շարժիչը կարող է չունենալ հակասառեցման անհրաժեշտ մակարդակ:
- Օգտագործեք ապակետաքացուցիչը կամ թեթևակի բացեք պատուհանները, որպեսզի դրանք չմշուշվեն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ձեռնարկը:

Երբ Ձեր տրանսպորտային միջոցը փչանում է արագընթաց մայրուղու վրա

Եթե Ձեր տրանսպորտային միջոցը դադարում է աշխատել մայրուղու վրա,

1. Ապահով կերպով այն տեղափոխեք դեպի աջ ճամփեզր:
2. Դուրս եկեք աջ կողմից, այնպես, որ եթե պետք լինի դուրս գալ տրանսպորտային միջոցից, Դուք հեռու լինեք երթևեկությունից:
3. Հավաքեք 511 Ձեր բջջային հեռախոսից կամ օգնության համար փնտրեք հեռախոսի խցիկ:
4. Հնարավորինս շուտ վերադարձեք դեպի Ձեր մեքենան: Վերադարձե՛ք տրանսպորտային միջոց աջ կողմից (երթևեկությունից հեռու):
5. Մնացեք մեքենայի ներսում՝ ամրագոտիները կապած, մինչև Ձեզ օգնության կհասնեն:
6. Ձեր հայեցողությամբ օգտագործեք Ձեր վթարային թարթող լույսերը: Դրանք կարող են օգնել մյուս մեքենաներին տեսնել Ձեզ գիշերը և տարբեր եղանակային պայմաններում:

Կան որոշակի հանգամանքներ, երբ ավելի անվտանգ է դուրս գալ Ձեր մեքենայից և հեռու գնալ: Ներառյալ այն իրավիճակները, երբ

- Ճամփեզրում բավարար տեղ չկա:
- Առկա է ճանապարհային ցանկապատ:
- Արագընթաց մայրուղու գոտիներից ապահով կերպով հեռու մնալու համար առկա է տարածք:

California Highway Patrol (CHP) *Freeway Service Patrol* (FSP)

(Կալիֆոռնիայի ճանապարհային պարեկության արագընթաց մայրուղու սպասարկման պարեկություն)

Երթևեկության ժամանակ CHP-ի FSP- ն ապահովում է անվճար արտակարգ ճանապարհային ծառայություններ որոշակի տարածքներում: Եթե մնացել եք արագընթաց մայրուղու վրա Ձեր տրանսպորտային միջոցի անսարքության պատճառով, ապա FSP-ն՝

- Ձեզ կառաջարկի մի գալոն վառելանյութ, եթե այն վերջացել է:
- Ձեր տրանսպորտային միջոցի շարժիչը կգործարկի արտաքին հոսանքի աղբյուրից, եթե մարտկոցը «նստած» է:
- Կլիցավորի Ձեր ռադիատորը և կփակի խողովակների անցքերը:
- Կփոխի թողած անվադողը:
- Բախման մասին կզեկուցի CHP-ին:

Եթե FSP-ն չկարողանա գործարկել Ձեր տրանսպորտային միջոցը, այն (անվճար) Ձեզ խրոշ կտա CHP-ի կողմից հաստատված վայր: CHP-ն կտեղեկացնի ավտոակումբին կամ խարշակման ծառայությանը:

FSP-ն

- Չի խոչի Ձեր տրանսպորտային միջոցը մինչև տրանսպորտային միջոցների մասնավոր վերանորոգման ծառայություն կամ մասնավոր կացարան:
- Չի առաջարկի խարշակման ծառայություններ մատուցող ընկերություններ կամ թափքի վերանորոգման արհեստանոցներ:
- Չի խոչի մոտոցիկլետներ:
- Չի օգնի տրանսպորտային միջոցներին, որոնք բախման են ենթարկվել, եթե դրանք CHP-ի կողմից չեն ուղղորդվում:

Ձանգահարեք 511 FSP-ի մասին տեղեկատվություն ստանալու և աջակցության համար:

Անսարք տրանսպորտային միջոցներ երկաթուղային գծերի վրա

Եթե Ձեր տրանսպորտային միջոցը կանգ է առել կամ դադարել աշխատել՝ արգելափակելով գնացքի ուղու որևէ հատված, և Ձեզ է մոտենում գնացք, որը թարթում է իր նախազգուշական լույսերը,



Օրինակ շրջանը վթարային գոտի է:

- Անմիջապես դուրս եկեք Ձեր տրանսպորտային միջոցից: Վազեք երկաթգծերից 45 աստիճանի անկյունագծով հեռու՝ այն ուղղությամբ, որով գալիս է գնացքը: Այնուհետև զանգահարեք 911:

Եթե չեք տեսնում, որ գնացք է մոտենում, և նախազգուշական լույսերը չեն թարթում,

- Դուրս եկեք Ձեր մեքենայից: Հավաքեք համարը, որը գտնվում է երկաթուղային անցման հայտարարությունների կամ երկաթուղային գծերի մոտ գտնվող մետաղական կառավարման տուփի վրա: Հայտնեք անցման համարը (եթե փակցված է): Անպայման նշեք, որ տրանսպորտային միջոցը գտնվում է երկաթգծի վրա: Այնուհետև զանգահարեք 911:

ՄԻ՛ ՎԱՐԵՔ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՑՐՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ

Վարելիս խուսափեք շեղող գործոններից: Տարածված շեղող գործոններ են՝

- Բջջային հեռախոսով խոսելը կամ հաղորդագրություն գրելը:
- Երաժշտության կամ ձայնի բարձրության փոփոխությունը:
- Դիմահարդարվելը կամ սափրվելը:

ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բջջային հեռախոսները անուշադիր վարելու հիմնական աղբյուրն են: Բջջային հեռախոսը ձեռքին մեքենա վարելը անվտանգ չէ և անօրինական է:

Ձախահաս վարորդները բջջային հեռախոս պետք է օգտագործեն միայն անհրաժեշտության դեպքում և առանց ձեռքերն օգտագործելու:

- Մի՛ պատասխանեք Ձեր բջջային հեռախոսի զանգերին: Թող զանգը փոխանցվի ձայնային փոստ: Եթե պետք է պատասխանեք կամ զանգահարեք, ապա մեքենան անվտանգ դուրս հանեք ճանապարհից:

- Մեքենա վարելիս մի՛ ուղարկեք և մի՛ կարդացեք տեքստային կամ էլեկտրոնային հաղորդագրություններ:
- Տեղադրեք Ձեր բջջային հեռախոսը հողմապակու, ղեկավարման վահանակի կամ մեքենայի կենտրոնական կոնսոլի վրա: Այն չպետք է փակի Ձեր տեսադաշտը:
- Տեղադրված բջջային հեռախոսն օգտագործեք մեկ սահումով կամ հպումով:

ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԸ և ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐԸ

Օրենքին հակասում է անչափահասի կողմից մեքենա վարելիս բջջային հեռախոսի կամ էլեկտրոնային անլար սարքի օգտագործումը զանգերին պատասխանելու և տեքստային հաղորդագրություններ ուղարկելու կամ դրանց պատասխանելու համար:

ԲԱՑԱՌԻԹՅՈՒՆ՝ Անչափահասները կարող են օգտագործել բջջային հեռախոս շտապ օգնություն զանգահարելու համար:

ԾԱՆՈԹԱՑԵ՛Ք ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ

Տրանսպորտային միջոցների տեխնոլոգիան միշտ է զարգանում է: Ճանապարհին կտեսնեք ավելի շատ ինքնակառավարվող տրանսպորտային միջոցներ և վարորդների աջակցության առաջադեմ համակարգերով (ADAS) տրանսպորտային միջոցներ: Այս համակարգերով հագեցված տրանսպորտային միջոցները կարող են տարբեր կերպ արձագանքել ճանապարհային իրավիճակներին, բան կարձագանքեր մարդ վարորդը:

ՏԵՂՅԱԿ ԵՂԵՔ ՇՄՈԼ ԳԱԶԻ ՄԱՍԻՆ

Գազային շարժիչով աշխատող բոլոր տրանսպորտային միջոցները շմոլ գազ են արտադրում: Շմոլ գազը մահացու, առանց հոտի գազ է, որն արտանետվում է տրանսպորտային միջոցի արտանետման խողովակից: Երբեք մի՛ գործարկեք շարժիչը Ձեր ավտոտնակում՝ դուռը փակ վիճակում: Շմոլ գազով թունավորման ախտանիշներից են՝

- Հոգնածությունը
- Հորանջելը
- Գլխապտույտը
- Սրտխառնոցը
- Գլխացավը
- Զնգոցը ականջներում

Եթե Դուք ունեք այս ախտանիշներից որևէ մեկը, ապա ստուգեք Ձեր արտանետման համակարգը:

ԲԱԺԻՆ 9. Ալկոհոլ և թմրանյութեր

Կալիֆոռնիայի՝ ազդեցության տակ տրանսպորտային միջոց վարելու մասին (DUI) օրենքները տարածվում են ինչպես ալկոհոլի, այնպես էլ թմրանյութերի վրա: Ալկոհոլի կամ ցանկացած դեղի ազդեցության տակ գտնվելու դեպքում տրանսպորտային միջոց վարելն անօրինական է և ազդում է Ձեր անվտանգ վարելու ունակության վրա: Տարիքի հետ ալկոհոլի նկատմամբ Ձեր դիմադրողականությունը նվազում է, ինչը մեծացնում է ալկոհոլի հետ կապված վարորդական խնդիրների վտանգը: Օրենքը տարբերություն չի դնում ապօրինի դեղերի և այն դեղերի միջև, որոնք Դուք ստանում եք բժշկից կամ դեղատնից: Դրանք բոլորը կարող են ազդել անվտանգ վարելու և Ձեր տեսածին ու լսածին արձագանքելու ունակության վրա:

Անկախ նրանից, թե ինչ տարիքում եք, մեքենա վարելն անօրինական է

- Ցանկացած ձևով ալկոհոլի չարաշահումից հետո: Ներառյալ այնպիսի դեղամիջոցներ, ինչպես օրինակ՝ հազի օշարակը:
- Ցանկացած դեղամիջոց ընդունելուց հետո, որն ազդում է Ձեր վարելու ունակության վրա: Ներառյալ դեղատոմսերով կամ առանց դեղատոմսի դեղեր:
- Ալկոհոլի կամ դեղերի այնպիսի համադրություն օգտագործելուց հետո, որը նվազեցնում է անվտանգ վարելու Ձեր ունակությունը:

Որևէ դեղ ընդունելուց առաջ անպայման կարդացեք պիտակի վրա գրվածը, որպեսզի տեղյակ լինեք այդ դեղի ազդեցություններից: Եթե իրավապահ մարմինների աշխատակիցը կարծում է, որ Դուք մեքենան վարում եք թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ, նա իրավունք ունի Ձեզ խնդրել արյան կամ մեզի թեստ հանձնել: Եթե չհամաձայնեք անալիզ հանձնել, DMV-ն մեկ տարով կկասեցնի կամ կչեղարկի Ձեր վարորդական իրավունքը:

ԿԱՐԵՎՈՐ՝ Եթե Դուք 13-ից 20 տարեկան եք և դատապարտված եք ալկոհոլի կամ թմրամիջոցների ազդեցության տակ հեծանիվ վարելու համար, Ձեր վարելու արտոնությունը կարող է կասեցվել կամ հետաձգվել մեկ տարով, հենց որ մեքենա վարելու իրավունք ունենաք:

ԱԼԿՈՀՈԼԻ ԿԱՄ ԿԱՆԵՓԱՑԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՈՒՄ

Օրենքը շատ խիստ է Ձեր տրանսպորտային միջոցում Ձեզ մոտ ալկոհոլ կամ կանեփային արտադրանքներ պահելու հարցում: Արգելվում է խմել ցանկացած խմիչք կամ ծխել կամ ընդունել որևէ կանեփային արտադրանք, երբ տրանսպորտային միջոց եք վարում կամ հանդես եք գալիս որպես ուղևոր: Եթե Ձեր մեքենայով տեղափոխում եք ալկոհոլ կամ կանեփ, տարան պետք է լինի փակ և չբացված: Եթե այն բաց է, տարան պետք է պահեք բեռնախցիկում կամ այն վայրում, որտեղ ուղևորներ չեն նստում: Անթույլատրելի է նաև ալկոհոլի բաց տարայի պահումը Ձեր ձեռնոցի տուփի մեջ: Այս օրենքը չի տարածվում, եթե դուք ուղևոր եք ավտոբուսում, տաքսու մեջ, ֆուրգոնում կամ բնակության համար նախատեսված ավտոմեքենայի մեջ:

ԱՐՅԱՆ ՄԵՋ ԱԼԿՈՀՈԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (BAC) ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Երբ դուք ալկոհոլ եք օգտագործում, դրա հետքերը մտնում են Ձեր արյան մեջ: Ձեր BAC-ը չափում է, թե որքան ալկոհոլ կա Ձեր արյան մեջ:

Արգելվում է վարել տրանսպորտային միջոց BAC-ի հետևյալ ցուցանիշների դեպքում՝

- 0,08% կամ ավելի բարձր, եթե 21 տարեկանից բարձր եք:
- 0,01% կամ ավելի բարձր, եթե Ձեր 21 տարին չի լրացել:
- 0,01% կամ ավելի բարձր ցանկացած տարիքում, եթե դուք գտնվում եք DUI-ի փորձաշրջանում:
- 0,04% կամ ավելի բարձր, եթե Դուք վարում եք տրանսպորտային միջոց, որի համար պահանջվում է կոմերցիոն վարորդի լիցենզիա:
- 0,04% կամ ավելի բարձր, եթե վարձով ուղևոր եք տեղափոխում:

Եթե մեքենա եք վարում անօրինական BAC-ով, իրավապահ մարմինների աշխատակիցը կարող է Ձեզ տուգանել: Նույնիսկ եթե Ձեր BAC-ը օրինական սահմաններից ցածր է, դա չի նշանակում, որ Ձեզ համար անվտանգ է մեքենա վարելը: Գրեթե բոլորը զգում են ալկոհոլի բացասական ազդեցությունը, նույնիսկ ավելի ցածր մակարդակներում քան օրինական սահմանաչափն է: Կախված նրանից, թե որքան վատ եք զգում, Դուք կարող եք ձերբակալվել և դատապարտվել DUI- ի համար նույնիսկ առանց BAC չափման:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս BAC-ի գնահատականները՝ հիմնված խմիչքի սպառման, սեռի և մարմնի քաշի վրա: Հիշեք, որ նույնիսկ մեկ բաժակը կարող է ազդել ձեր անվտանգ վարելու ունակության վրա:

ԱՐՅԱՆ ՄԵՋ ԱԼԿՈՀՈԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ (BAC) Աղյուսակ արական (M) / իգական (F) սեռի անձանց համար										
Խմիչքների քանակը		Մարմնի քաշ՝ ֆունտերով								Վարորդական վիճակ
		100	120	140	160	180	200	220	240	
0	M	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	Անվտանգ մեքենա վարման միակ սահմանային արժեքը
	F	,00	,00	,00	,00	,00	,00	,00	,00	
1	M	,06	,05	,04	,04	,03	,03	,03	,02	Վարելու հմտությունների թուլացում
	F	,07	,06	,05	,04	,04	,03	,03	,03	
2	M	,12	,10	,09	,07	,07	,06	,05	,05	
	F	,13	,11	,09	,08	,07	,07	,06	,06	
3	M	,18	,15	,13	,11	,10	,09	,08	,07	
	F	,20	,17	,14	,12	,11	,10	,09	,08	Օրենքով սահմանված չափով հարբած
4	M	,24	,20	,17	,15	,13	,12	,11	,10	
	F	,26	,22	,19	,17	,15	,13	,12	,11	
5	M	,30	,25	,21	,19	,17	,15	,14	,12	
	F	,33	,28	,24	,21	,18	,17	,15	,14	
Խմիչքների միջև բնկած յուրաքանչյուր 40 րոպեի համար հանեք 0,01%: 1 ստանդարտ միավոր = 1,5 ունցիա 80 աստիճանի լիկյոր, 12 ունցիա 5% գարեջուր կամ 5 ունցիա 12% գինի: 100 հոգուց այս արժեքները կգերազանցի 5-ից պակաս մարդ:										

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Անօրինական է ալկոհոլ կամ թմրանյութեր օգտագործելը՝ նավակ, ռեակտիվ դահուկ, ջրային դահուկ, ջրային հիմնաթիռ կամ նմանատիպ նավեր վարելիս: Իմացեք ավելին *California Harbors and Navigation Code*-ում:

DUI ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կալիֆոռնիայում մեքենա վարելիս Դուք համաձայնություն եք տալիս շնչառության, արյան կամ մեզի թեստի անցկացմանը, եթե իրավապահ մարմինների աշխատակիցը կասկածում է ձեզ DUI-ի մեջ: Եթե Դուք համաձայնվել եք հանձնել ալկոհոլային խմիչքների նախնական զննում (PAS) և/կամ շնչառական թեստ, ապա հնարավոր է, որ Ձեզանից պահանջվի հանձնել արյան կամ մեզի թեստ՝ դեղերի առկայությունը հայտնաբերելու համար: Եթե Դուք հրաժարվեք շնչառության, արյան և/կամ մեզի թեստ հանձնելուց, DMV-ն կկասեցնի կամ կչեղարկի Ձեր վարորդական իրավունքը: Եթե Դուք ձերբակալված եք DUI- ի համար՝

- Կալիֆոռնիայի վարչական Per Se օրենքը կպահանջի DMV-ին կասեցնել Ձեր վարորդական իրավունքը:
- Իրավապահ մարմինների աշխատակիցը կարող է վերցնել Ձեր վարորդական իրավունքը և Ձեզ տալ ժամանակավոր վարորդական իրավունք 30 օրով:
- Ձեր ձերբակալման օրվանից 10 օրվա ընթացքում կարող եք պահանջել DMV վարչական լսումներ:

DUI ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐ

Եթե Դուք դատապարտվեք DUI-ի համար, DMV-ն կկասեցնի կամ կչեղարկի Ձեր վարորդական իրավունքը:

- Դուք պետք է անցնեք DUI ծրագիրը:
- Պետք է ֆայլ Կալիֆորնիա Նահանգի Ապահովագրական Վկայական (*California Insurance Proof Certificate*, SR 22/SR 1P):
- Դուք պետք է վճարեք ցանկացած կիրառելի իրավունքի վերաթողարկման և (կամ) սահմանափակման վճարները:
- Դատարանը նաև կարող է Ձեզ պարտադրել՝ Ձեր տրանսպորտային միջոցի մեջ տեղադրել վառոցքի արգելափակման սարք (*ignition interlock device*, IID):

Մի քանի լրացուցիչ տույժեր՝ DUI-ի համար դատապարտված լինելու համար:

- Դուք կարող եք դատապարտվել մինչև վեց ամիս ազատազրկման:
- Դուք կարող եք ստիպված լինել տուգանք վճարել:
- Իրավապահ մարմինները կարող են բռնագրավել Ձեր մեքենան, և գուցե ստիպված լինեք վճարել պահպանման վճար.
- Եթե դեղերի կամ ալկոհոլի ազդեցության տակ տրանսպորտային միջոց վարելիս լուրջ վնասվածք եք պատճառում կամ մարդ է զոհվում, կարող եք կանգնել քաղաքացիական դատարանի առջև:

DUI- ի բոլոր դատվածությունները 10 տարի մնում են Ձեր վարորդական գործում: Եթե այդ ընթացքում այլ DUI-ներ եք ստանում, դատարանը և/կամ DMV- ն կարող են Ձեզ համար ավելի խիստ տուգանք սահմանել:

ՄԻՆՉԼԻ 21 ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՈՐԴՆԵՐ

21 տարին չլրացած վարորդների համար ալկոհոլ պահելու և սպառելու համար լրացուցիչ օրենքներ կան:

Ալկոհոլի առկայություն

- Դուք չեք կարող տրանսպորտային միջոցի մեջ պահել ալկոհոլ, բանի դեռ Ձեզ հետ 21 տարեկան կամ ավելի մեծ տարիքի անհատ չկա: Տարան պետք է լինի լի, դրոշմված և չբացված: Բացված լինելու դեպքում ալկոհոլը պետք է պահվի բեռնախցիկում կամ այն վայրում, որտեղ ուղևորները չեն նստում:

  ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ՝ Եթե Դուք աշխատում եք խմիչքի վաճառքի արտոնագիր ունեցող անձի կամ կազմակերպության համար, կարող եք ալկոհոլային խմիչքներ տեղափոխել փակ տարաների մեջ:
- Եթե Ձեզ բռնել են Ձեր տրանսպորտային միջոցի մեջ ալկոհոլային խմիչքներ պահելու համար, իրավապահները կարող են Ձեր տրանսպորտային միջոցը բռնագրավել մինչև 30 օր ժամկետով: Դատարանը կարող է տուգանել Ձեզ և մեկ տարով կասեցնել Ձեր վարորդական իրավունքը: Եթե Դուք դեռ չունեք վարորդական իրավունք, դատարանը կարող է խնդրել DMV-ին հետաձգել Ձեր առաջին վարորդական իրավունքի վկայականը մինչև 1 տարով:

Ալկոհոլի կիրառումը

- Եթե իրավապահ մարմինների աշխատակիցը կասկածում է Ձեզ ալկոհոլ օգտագործելու մեջ, նա կարող է Ձեզնից պահանջել հանձնել շնչառության թեստ, ալկոհոլի նախնական ստուգում (PAS) կամ մեկ այլ ֆիզիկական թեստ:
- Եթե Դուք դատապարտված եք 0,01% կամ ավելի բարձր BAC-ով DUI-ի համար DMV-ն կարող է չեղարկել Ձեր վարորդական իրավունքը մեկ տարով: Դուք պետք է անցնեք արտոնագրված DUI ծրագիր:
- Եթե Ձեր PAS- ը ցույց է տալիս 0,05% կամ ավելի բարձր BAC, ոստիկանը կարող է պահանջել շնչառություն կամ արյան ստուգում կատարել:
- Եթե ավելի ուշ թեստը ցույց տա, որ ունեք 0,05% կամ ավելի բարձր BAC, Դուք կարող եք ձերբակալվել DUI-ի համար, և Ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել:

ԲԱԺԻՆ 10. Ֆինանսական պատասխանատվություն, ապահովագրության պահանջներ և ավտոպատահարներ

Տրանսպորտային միջոց վարելիս Ձեզ հետ պետք է ունենաք Ձեր ֆինանսական պատասխանատվության ապացույցը (ապահովագրությունը): Եթե ավտոպատահարի եք ենթարկվել, պետք է ապահովագրության ապացույցներ ցույց տաք ավտոպատահարում ներգրավված մյուս վարորդներին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ձեր ապահովագրությունը պետք ապահովի առնվազն

- $30.000 մեկ մարդու մահվան կամ մարմնական վնասվածքի համար:
- $60.000 մեկից ավելի մարդկանց մահվան կամ վնասվածքների համար:
- $15.000 գույքին հասցված վնասի համար:

18 տարեկանից փոքր վարորդների ծնողները կամ խնամակալները ֆինանսական պատասխանատվություն են կրում նրանց համար և վճարում են վնասների համար, եթե վարորդը պատահարի է ենթարկվել: 18 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող վարորդները ֆինանսական պատասխանատվությունը կրում են իրենց վրա:

Նախքան ապահովագրություն գնելը, համոզվեք, որ գործակալը, միջնորդը կամ ապահովագրություն տրամադրող կազմակերպությունը լիցենզավորված է Կալիֆոռնիայի ապահովագրության դեպարտամենտի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **insurance.ca.gov/license-status/**:

Տրանսպորտային միջոցի վարում առանց ապահովագրության

Եթե պատահարի ժամանակ չունենաք պատշաճ ապահովագրություն, Ձեր վարելու իրավունքը կկասեցվի մինչև չորս տարի ժամկետով: Անկախ նրանից, թե ով է մեղավոր:

Ձեր վարորդական իրավունքի կասեցման վերջին երեք տարիների ընթացքում կարող եք հետ ստանալ այն, եթե տրամադրեք Կալիֆոռնիայի ապահովագրության վկայական (SR 22/SR 1P) և պահպանեք այն երեք տարվա ընթացքում:

Ցածրարժեք ապահովագրություն

Եթե Դուք չեք կարող վճարել քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության համար, Դուք կարող եք դիմել Կալիֆոռնիայի ցածր գնով ավտոմեքենաների ապահովագրության ծրագրին: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **mylowcostauto.com** կայք կամ զանգահարեք 1-866-602-8861 հեռախոսահամարով:

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Հասկանալով ճանապարհատրանսպորտային պատահարների հանգեցնող գործոնները՝ կփորձեք դրանցից խուսափել:

Ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառները

Ճանապարհատրանսպորտային պատահարների ամենատարածված պատճառներն են՝

- Վարորդի ուշադրությունը շեղող գործոնները:
- Բարձր արագությունը:
- Սխալ տեղից շրջադարձ կատարելը:
- Երթևեկության առավելության կանոններին չհետևելը:
- «Կանգ առ»-ի ազդանշանները ու ճանապարհային նշանները անտեսելը:
- Ճանապարհի հակառակ կողմով շարժվելը:
- Տրանսպորտային միջոցների երթևեկության հոսքից արագ կամ դանդաղ ընթացող տրանսպորտային միջոցը:

Եթե առջևում վթարային թարթող լույսերով տրանսպորտային միջոց տեսնեք, իջեցրե՛ք Ձեր արագությունը: Հնարավոր է, որ առջևում ճանապարհատրանսպորտային կամ որևէ այլ պատահար է տեղի ունեցել: Զգուշորեն անցեք:

Հնարավորության դեպքում աշխատեք պատահարի կողքով չանցնել: Եթե ինչ-որ մեկը վնասվածք ունի, ավելի արագ օգնություն կստանա, եթե այլ տրանսպորտային միջոցները չփակեն ճանապարհը:

Ինչ անել, եթեհայտնվել եք ճանապարհատրանսպորտային պատահարում

Եթե հայտնվել եք ճանապարհատրանսպորտային պատահարում

- Դուք պետք է արգելակեք: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը վնասվածք ստացած լինի և Ձեր օգնության կարիքն ունենա: Դժբախտ պատահարի վայրում չարգելակելը կամ հեռանալը կոչվում է «*hit-and-run*»: Վրաերթի ենթարկելու և փախուստի դիմելու համար խիստ պատիժ է սահմանվում:
- Անմիջապես զանգահարեք 911, եթե որևէ մեկը վիրավորվել է:
- Ձեր տրանսպորտային միջոցը տեղափոխեք երթևեկությունից, եթե ոչ մեկ չի վիրավորվել: Այնուհետև զանգահարեք 911:
- Մյուս վարորդին, իրավապահ մարմիններին և պատահարին առնչվող այլ անձանց ցույց տվեք Ձեր վարորդական իրավունքը, տրանսպորտային միջոցի հաշվառման քարտը, ապահովագրության տեղեկությունները և ներկայիս հասցեն:
- Եթե պատահարի հետևանքով կա վիրավոր կամ զոհ, պատահարի պահից սկսած 24 ժամվա ընթացքում Դուք պետք է զեկուցեք իրավապահներին: Ձեր ապահովագրական գործակալը, միջնորդը կամ օրինական ներկայացուցիչը կարող է նույնպես հաշվետվություն ներկայացնել:
- Եթե Ձեր մեքենան բախվել է կայանված մեքենայի կամ այլ գույքի, փորձեք գտնել սեփականատիրոջը: Եթե չեք կարողանում գտնել սեփականատիրոջը, թողեքՁեր անունը, հեռախոսահամարը և հասցեն պարունակող գրություն: Գրությունը ապահով կցեք տրանսպորտային միջոցին կամ գույքին: Պատահարի մասին հաղորդեք իրավապահներին:
- Եթե սպանել կամ վնասվածք եք պատճառել որևէ կենդանու, զանգահարեք մոտակա մարդասիրական կազմակերպություն կամ իրավապահ մարմիններին: Մի՛ փորձեք տեղաշարժել վիրավոր կենդանուն:

Ինչպես հաղորդել պատահարի մասին

Պատահարի դեպքում 10 օրվա ընթացքում պետք է այդ մասին հաղորդեք DMV-ին, եթե

- Պատահարի արդյունքում զույգին ավելի քան $1.000 վնաս է հասցվել:
- Որևէ մեկը վիրավորվել կամ սպանվել է: Սա վերաբերում է նաև անհետաև վնասվածքներին:

Յուրաքանչյուր վարորդ պետք է Կալիֆորնիայում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի (*Report of Traffic Accident Occurring in California,* SR 1) հաշվետվություն ներկայացնի DMV-ին՝ **dmv.ca.gov/accidentreport** հասցեով: Դուք (կամ Ձեր ներկայացուցիչը) պետք է հաշվետվություն ներկայացնեք, անկախ նրանից, թե Դուք եք պատահարի պատճառ դարձել, թե ոչ: Նույնիսկ եթե բախումը տեղի է ունեցել մասնավոր սեփականության վրա:

Զգեկուցելու դեպքում Ձեր վարորդական իրավունքը կկասեցվի: Իրավապահ մարմինները հաշվետվություն չեն կազմի Ձեր փոխարեն:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՇՎՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ

Եթե Դուք պատահարի եք ենթարկվել, որի արդյունքում $1.000 դոլարի վնաս է պատճառվել, կամ որի արդյունքում որևէ մեկը վնասվածք է ստացել կամ մահացել է, Դուք պետք է պատահարի մասին տեղյակ պահեք DMV-ին: DMV-ն այն կավելացնի Ձեր վարորդական գործի մեջ: Կարևոր չէ, թե ով է պատահարի պատճառ դարձել:

ԲԱԺԻՆ 11. Տրանսպորտային միջոցի հաշվառման պահանջները

Դուք պետք է Ձեր մեքենան հաշվառեք Կալիֆորնիայում, որպեսզի այն օգտագործեք նահանգում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/vrservices**:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՔ ԿԱՄ ՎԱՃԱՌՔ

Տրանսպորտային միջոց գնելիս սեփականության իրավունքը փոխանցելու համար ունեք 10 օր ժամանակ:

Տրանսպորտային միջոց վաճառելիս՝ 5 օրվա ընթացքում պետք է այդ մասին տեղեկացնեք DMV-ին՝ լրացնելով Փոխանցման և պատասխանատվության ազատման ծանուցումը՝ **dmv.ca.gov/nrl**-ում:

ԱՅԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Նահանգի բնակիչ դառնալուց կամ աշխատանք ստանալուց հետո Դուք ունեք 20 օր Ձեր տրանսպորտային միջոցը հաշվառելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/outofstatevr**

Կալիֆորնիայում հաշվառված բոլոր տրանսպորտային միջոցները պետք է համապատասխանեն նահանգի պահանջներին, ներառյալ արտանետումների հսկողությանը (Կալիֆորնիայի մաքուր օդի ստանդարտներ): DMV-ն չի կարող հաշվառել մեքենան, եթե այն չի համապատասխանում պահանջներին:

ԲԱԺԻՆ 12. Վարորդի անվտանգություն

Ի վերջո, յուրաքանչյուր վարորդ պետք է գնահատի իր վարելու հմտություններն ու կարողությունները: Եթե Դուք մտահոգված եք Ձեր վարելու կապակցությամբ, խնդրեք վավեր վարորդական իրավունք ունեցող վստահելի վարորդի նստել ուղևորի նստատեղին և հետևել Ձեր վարելուն: Ձեր ուղեկիցը պետք է նկատի վարման ցանկացած վտանգավոր արարք և դրանք բարելավելու համար առաջարկներ անի: Ուշադիր լսեք և կիրառեք այն, ինչ սովորել եք: Որպես այլընտրանք դիտարկեք պրոֆեսիոնալ վարորդական դասընթացները կամ վարման դասերը:

Վերանայում

Տրանսպորտային միջոցի կոդը թույլ է տալիս DMV-ին հետաքննել և վերանայել յուրաքանչյուր վարորդի՝ անվտանգ վարելու ունակությունը: Ֆիզիկական կամ հոգեկան անբավարար վիճակը կամ վատ վարորդական գործը կարող են վերանայման հիմք հանդիսանալ՝ ոչ վարորդի տարիքը: Ֆիզիկական կամ հոգեկան խնդիր ունեցող վարորդները կարող են DMV-ի ուղեգիր ստանալ բժշկի, իրավապահ մարմնի կամ ընտանիքի անդամի կողմից՝ ներկայացնելով Վարորդի վերաքննության հայտ (*Request for Driver Reexamination*, DS 699) լրացված հայտը:

Ճանաչողական խանգարումներն, ինչպես՝ դեմենսիան, նոպաները, ուղեղի ուռուցքը, Պարկինսոնի հիվանդությունը, ինսուլտը կամ գլխապտույտը մարտահրավեր են անվտանգ վարելուն: Այս խնդիրներով տառապող անհատները կարող են կորցնել անվտանգ վարելու ունակությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Երբ DMV-ը ստանում է ճանաչողական թերև խանգարում ունեցող վարորդի ուղեգիր կամ ախտորոշում, Վարորդի անվտանգության թիմը կնշանակի վերաքննություն: Վերանայման գործընթացի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններին համար այցելեք **dmv.ca.gov/reexamination**:

DMV-ն կարող է

- Բժշկական տեղեկատվություն պահանջել Ձեզնից կամ Ձեր բժշկից:
- Անձամբ կամ հեռախոսով վերանայում անցկացնել:
- Ձեզնից պահանջել հանձնել գիտելիքների, տեսլական կամ վարորդական թեստ(ներ):
- Ձեզ տրամադրել սահմանափակ ժամկետով վարորդական իրավունք:
- Անհապաղ կասեցնել կամ չեղարկել Ձեր վարորդական իրավունքը, եթե Ձեր ֆիզիկական կամ հոգեկան վիճակը անմիջական վտանգ է ներկայացնում հասարակության համար:
- Ոչ մի բայլ չձեռնարկել Ձեր վարորդական իրավունքի դեմ:

Առաջնահերթ վերանայում

Եթե իրավապահների հետ շփման արդյունքում վերևի վանդակում նշման տեղով՝ վարորդի առաջնահերթ վերանայման մասին ծանուցում ստանաք , ապա ուշադիր կարդացեք ձևաթուղթը: Դուք 5 աշխատանքային օր ունեք՝ գործընթացը սկսելու համար DMV-ի հետ կապ հաստատելու համար, այլապես Ձեր վարորդական իրավունքը ավտոմատ կկասեցվի:

STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

FOR DMV USE ONLY

Destroy all previous versions of this form.

X - ( )

☐ **NOTICE OF PRIORITY RE-EXAMINATION OF DRIVER** (Driver Incapacity)

The driver listed below committed a violation of the *California Vehicle Code* (CVC) §§21000 through 23336 and should be re-examined pursuant to CVC §21061. At the time of the violation, the driver exhibited evidence of incapacity which reasonably led me to believe that this person is not capable of operating a motor vehicle without presenting a clear or potential danger, or risk of injury to himself/herself or others. **As required by law, on the date below, I issued a copy of this Notice of Priority Re-examination/Notice of Suspension for Non-Compliance to the driver listed below.**

The driver does *not* have to be *cited* for one of the above CVC sections. Please indicate evidence of the incapacity in the Summary area below. If the driver was involved in a traffic accident, attach a copy of the report. You must give a copy of this form to the driver.

If this form is being issued as a Notice of Priority Re-examination/Notice of Suspension for Non-Compliance, immediately fax the document (if fax available) to the Driver Safety Office nearest the driver's home (see reverse), then mail the original Notice to the same office.

NOTICE OF SUSPENSION FOR NON-COMPLIANCE

INSTRUCTIONS TO DRIVER

If the above box is checked, you must contact the Department of Motor Vehicles (DMV) for a re-examination under CVC §§12818 and 12819. If you do not call or appear within five ***(5)*** working days, your privilege to drive in this state will be suspended until you satisfactorily complete a re-examination. SEE IMPORTANT PRIORITY RE-EXAMINATION INFORMATION ON THE REVERSE SIDE OF THIS FORM.

☐ **REQUEST FOR *REGULAR* RE-EXAMINATION OF DRIVER (Officer's Instructions on reverse.)**
The driver listed below should be re-examined by DMV, but does not require a Priority Re-examination.

Վարորդի վկայականի սահմանափակումները

DMV-ն սահմանափակումներ է դնում վարորդական իրավունքի վրա՝ համոզվելու, որ վարորդն իր կարողություններին համապատասխան մեքենա է վարում: Սահմանափակումները կարող են կիրառվել DMV-ի կողմից կամ պահանջվել օրենքով: Ձեր վարորդական իրավունքի սահմանափակումներն անհրաժեշտ են Ձեր և ուրիշների անվտանգությունն ապահովելու համար: Սահմանափակումները և պայմանները կարող են ներառել.

- Վարորդից իրենց մեքենայի վրա հատուկ մեխանիկական սարքեր տեղադրել պահանջելը, օրինակ՝ ձեռքով կառավարումը:
- Սահմանափակելը, թե երբ և որտեղ անձը կարող է վարել, օրինակ արգելել գիշերը կամ արագընթաց մայրուղում վարելը:
- Ակնոցներ կամ ուղղիչ կոնտակտային ոսպնյակներ կրել պահանջելը:
- Լրացուցիչ սարքեր, օրինակ՝ արտաքին հայելիներ, տեղադրել պահանջելը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Տարեցների համար հատուկ սահմանափակումներ չկան: Բոլոր սահմանափակումները հիմնված են պայմանների, ոչ թե տարիքի վրա:

Ձեր վարորդական իրավունքի ցանկացած սահմանափակում հիմնված է հրահանգիչի ստացած տվյալների և առաջարկությունների վրա:

ԲԱԺԻՆ 13. Տարեցները և երթևեկությունը

Տարեց վարորդները հաճախ առանձնահատուկ կարիքներ ու մտահոգություններ ունեն տրանսպորտային միջոց վարելու հետ կապված: Վարելը պահանջում է որոշակի ֆիզիկական, տեսողական և մտավոր ունակություններ: Բոլորս ցանկանում ենք շարունակել վարել հնարավորինս երկար: Այնուամենայնիվ, կարող է պահ գալ, երբ անհրաժեշտ լինի ժամանակավոր կամ ընդմիշտ սահմանափակել կամ դադարեցնել մեքենա վարել: Վտանգավոր վարորդին բնորոշ նախանշաններ.

- Ծանոթ վայրերում մոլորվելը:
- Մեքենայի, ցանկապատերի, փոստարկղի, ավտոտնակի դռների վրա բերծվածքները և այլն:
- Հաճախակի սերտ հպումները կամ բախումները:

Տարեց վարորդները կարող են դիտարկել

- Գիշերային ժամերին մեքենա վարելը սահմանափակելը կամ չվարելը:
  — Եթե գիշերով մեքենա վարելը անհրաժեշտ է, լավ լուսավորված երթուղի ընտրելը:
- Օրվա այն ժամին վարելը, երբ երթևեկությունը թեթև է:
- Դժվար խաչմերուկներից խուսափելը:
- Կարճ տարածություններ վարելով սահմանափակվելը կամ միայն կարևոր վայրեր վարելը:
- Արագընթաց մայրուղում չվարելը:
- Լրացուցիչ աջ կողմի հայելի տեղադրելը:

Վարորդի հմտությունների իճիճագնահատման հարցաշարը ձեռք բերելու համար այցելեք **dmv.ca.gov/driver-skills**:

Վարորդական իրավունքի երկարաձգումը

Եթե Ձեր վարորդական իրավունքի ժամկետը լրանալիս Դուք 70 կամ ավելի Եթե Ձեր վարորդական իրավունքի ժամկետը լրանալու պահին տարեկան կամ ավելի մեծ եք, պետք է անձամբ ներկայանաք ժամկետը երկարաձգելու և տեսողության թեստ անցնելու համար: Որոշ դեպքերում կարող են պահանջվել այլ քննություններ: Եթե պահանջվի տեսական թեստ, կարող եք իրավասու լինել ընտրել «Էլեկտրոնային ուսուցում» տարբերակը Ձեր դիմումն առցանց լրացնելու ժամանակ: DMV-ն ուղարկում է երկարաձգման ծանուցում Ձեր գրանցման հասցեին վարորդական իրավունքի ժամկետը լրանալուց մոտ 90 օր առաջ: Եթե երկարաձգման մասին ծանուցում չեք ստանում, լրացրեք Վարորդական Իրավունքի կամ ID Քարտի Դիմումը՝ **dmv.ca.gov/dlservices**-ում կամ DMV գրասենյակում: Այցելեք **dmv.ca.gov/driver-ed** հավելյալ տեղեկատվության և նմուշային թեստերի համար:

DMV-ի համայնքային կապեր և իրազեկում

Համայնքային ներկայացուցչի հիմնական գործառույթը Կալիֆոռնիայի բոլոր բնակիչների հանրային անվտանգության շահերը ներկայացնելն է՝ կենտրոնանալով տարեց վարորդների և դեռահասների մտահոգությունների վրա: Համայնքային ներկայացուցիչը կարող է միջնորդ հանդիսանալ՝ նպաստելով վարորդների հանդեպ՝ արդարացի, օրենքներին և կանոնակարգերին համապատասխան և արժանապատիվ

ու հարգալից վերաբերմունքի ապահովմանը: Հնայած համայնքային ներկայացուցիչը չի կարող Ձեզ ներկայացնել DMV-ի լսումների կամ վերաքննման ժամանակ, նա կարող է Ձեզ օգտակար ռեսուրսներ և տեղեկատվություն տրամադրել:

Ձեր տարածաշրջանում իրազեկման ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու կամ ներկայացուցչի հետ խոսելու համար դիմեք Համայնքային կապերի և իրազեկման բաժնին՝ (833) 493-0675 հեռախոսահամարով:

Ճանաչողական խանգարում

Դեմենցիայով տառապող տարեցները լուրջ մարտահրավեր են անվտանգ վարմանը: Զարգացող տկարամտություն ունեցող մարդիկ ի վերջո կորցնում են անվտանգ մեքենա վարելու իրենց կարողությունը: Հաճախ խնամակալների, բժիշկների և իրավապահ մարմինների խնդիրն է թույլ չտալ տարեցներին այլևս վարել և առաջարկել այլընտրանքային տրանսպորտ: Վերանայման գործընթացի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/reexamination**:

Տարեց Վարորդների Ծրագիրը

Տարեց վարորդների ծրագիրը (*Mature Driver Program*) 55 կամ ավելի բարձր տարիքի վարորդների համար նախատեսված 8-ժամյա դասընթաց է: Այն ընդգրկում է մի շարք թեմաներ, որոնք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում տարեց վարորդների համար:

Ձեր ապահովագրական ընկերությունը կարող է Ձեզ զեղչեր առաջարկել, եթե ավարտեք այս ծրագիրը: Կապվեք Ձեր ապահովագրությունը տրամադրող կազմակերպության հետ՝ դասընթացը ավարտելու Ձեր վկայականի պատճենով: Ձեր վկայականը վավեր է երեք տարի. Դուք կարող եք այն երկարացնել՝ անցնելով ևս մեկ չորսժամյա դասընթաց:

Դասընթացը կարող եք անցնել DMV-ի կողմից հաստատված մատակարարների միջոցով: Լրացուցիչ՝ ներառյալ Ձեր մոտակայքում գտնվող վայրերի մասին, տեղեկությունների համար այցելեք **dmv.ca.gov/seniors**

Տարեցների ID քարտեր

62 տարեկան կամ ավելի բարձր տարիքի վարորդները իրավունք ունեն ստանալու անվճար տարեցների ID քարտեր: Ցանկացած տարիքի վարորդ, ով մտավոր կամ ֆիզիկական ոչ բավարար վիճակի պատճառով չի կարող շարունակել ապահով վարելը, իրավունք ունի փոխել իր վարորդական վկայականը անվճար ID քարտի հետ: ID քարտը ծառայում է միայն նույնականացման համար: Մանրամասների համար այցելեք **dmv.ca.gov/id-cards**:

ԲԱԺԻՆ 14. Բառարան

ՏԵՐՄԻՆ	ՍԱՀՄԱՆՈՒՄ
Գործնական (*behind-the-wheel*) վարման ստուգում	Վարորդական թեստ, որի ժամանակ Դուք վարում եք մեքենան և Ձեզ ուղեկցում է DMV հրահանգիչ, ով գնահատում է Ձեր վարելու հմտությունները:
Արյան Մեջ Ալկոհոլի Պարունակություն (BAC)	Ձեր BAC-ն Ձեր արյան մեջ եղած ալկոհոլի քանակն է: Օրինակ, եթե ձեր BAC-ը 0,10% է, դա նշանակում է, որ Դուք ունեք 0,10 գրամ ալկոհոլ 100 միլիլիտր արյան մեջ:
Վարորդական գործունեության գնահատում (DPE)	DPE-ն Գործնական (*behind-the-wheel*) թեստի այն մասն է, երբ վարում եք Ձեր մեքենան DMV հրահանգչի հետ, ով գնահատում է Ձեր վարելու հմտությունները:
Հետիոտն	Հետիոտնը քայլող անձն է, ինչպես նաև կարող է լինել եռանիվ, քառանիվ հեծանիվով կամ անվասայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձ:
Երթևեկության առավելություն	Օգնում է որոշել, թե ում է թույլատրվում առաջինը գնալ այն խրամուղիներում, երբ տրանսպորտային միջոցները, հետիոտները ու հեծանվորդները հանդիպում են հանապարհին:
Երեք վայրկյանի կանոն	Վարման կանոն, որն Ձեզ օգնում է չափել, թե որքան մոտիկից պետք է հետևեք մյուս տրանսպորտային միջոցներին: Երբ Ձեր դիմացի մեքենան անցնում է որոշակի կետ, օրինակ՝ նշան, հաշվեք երեք վայրկյան: Եթե այդ կետն անցնեք նախքան հաշվելն ավարտելը, ուրեմն բավարար հեռավորություն չեք պահպանում առջևից ընթացող մեքենայից:
Երթևեկության կանոնների խախտման տուգանք	Հայտնի է նաև որպես ակտ, երթևեկության կանոնների խախտման տուգանքը պաշտոնական ծանուցագիր է, որը տրվում է իրավապահ մարմինների կողմից հանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար:
Ճանապարհների խոցելի օգտատերեր (VRU)	VRU-ները առանց շարժիչի հանապարհի օգտատերերն են, ինչպիսիք են՝ հեծանվորդները, հետիոտները և հաշմանդամություն ունեցող կամ սահմանափակ շարժունակություն և կողմնորոշում ունեցող անձինք, ովքեր օգտագործում են անվասայլակ, եռանիվ հեծանիվ կամ կվադրոցիկլ:
Yield	«Yield» նշանակում է սպասել, դանդաղեցնել ընթացքը և պատրաստ լինել կանգ առնելու (անհրաժեշտության դեպքում)՝ թույլ տալու երթևեկության առավելություն ունեցող այլ տրանսպորտային միջոցներին կամ հետիոտներին անցնել:

Խնայեք Ձեր ժամանակը

ԱՌՑԱՆՑ լրացրեք Ձեր վարորդական վկայականի կամ ID-ի երկարաձգման դիմումը

Նախքան DMV գրասենյակ այցելելը՝ օգտագործեք Ձեր համակարգիչը, պլանշետը կամ սմարթ հեռախոսը գրանցման երկարաձգման դիմումը առցանց լրացնելու համար:

Հասանելի է 10 լեզուներով

Հայերեն	Իսպաներեն
Չինարեն	Ճապոներեն
Կորեերեն	Տագալերեն
Թայերեն	Վիետնամերեն
Հինդի	Քմերերեն

STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles

GO ONLINE
dmv.ca.gov/online

ԱՆՑԵՔ ԱՆԹՈՒՂԹ ՁԵՎԱՉԱՓԻ

Բաժանորդագրվեք Ձեր վարորդական իրավունքի վկայականի, նույնականացման քարտի կամ տրանսպորտային միջոցի գրանցման վերաբերյալ անթուղթ ծանուցումներ ստանալու համար:

Կատարեք Ձեր ընտրությունը
dmv.ca.gov/paperless

GO ONLINE
dmv.ca.gov/online

Կրճատեք, վերօգտագործեք, վերամշակեք այս ձեռնարկը:

STATE OF CALIFORNIA
DMV
Department of Motor Vehicles